

**«ԵՍ ԵՎ ՇՐՋԱԿԱ ԱՇԽԱՐՀԸ»
ԱՌԱՐԿԱՅԻ**

ՏԱՐՐԱԿԱՆ ԴՊՐՈՑԻ ՉԱՓՈՐՈՇԻՉ ԵՎ ԾՐԱԳԻՐ

**ՆԱԽԱԳԻԾ
2020թ.**

ԲԱՑԱՏՐԱԳԻՐ

Հանրակրթության պետական չափորոշի համաձայն՝ «Ես և շրջակա աշխարհը» ուսումնական առարկան «ԲԴՃՄ», «Հասարակական գիտություններ». «Ֆիզիկական կրթություն և անվտանգ կենսագործունեություն» և «Հայրենագիտություն» ուսումնական բնագավառները ներկայացնող ինտեգրված պետական պարտադիր առարկա է 2-4-րդ դասարանների համար: Այն նաև հուսալի հիմք է ապահովում միջին և ավագ դպրոցների «Բնագիտություն» և «Հասարակություն», ինչպես նաև՝ «Ֆիզիկա», «Կենսաբանություն», «Քիմիա», «Աշխարհագրություն», «Պատմություն» առարկաների համար, ինչպես նաև «Առողջ և անվտանգ կենսակերպ» ինտեգրվող բովանդակային ուղղության համար:

Առարկայի նպատակը

Առարկայի ուսումնական նպատակը տարրական դպրոցում աշխարհի ամբողջականության՝ նրա բազմազանության և փոխկապվածությունների, բնության, հասարակության և սոցիալմշակութային օբյեկտների և երևույթների միասնականության ամբողջական պատկերի ձևավորումն է, ինչպես նաև՝ հոգեպես, ֆիզիկապես առողջ և ներդաշնակ զարգացող, ստեղծագործ անձի ձևավորումը, որն ունի էկոլոգիական, մշակութաբանական գրագիտություն, մարդկանց և բնության հետ փոխհարաբերություններում ունի բարոյաէթիկական նորմերին համապատասխան, չվնասող, անվտանգ, պատասխանատու վարքագիծ և հայրենասեր քաղաքացու նկարագիր:

Մասնավորապես՝ առարկան նպատակ ունի սովորողներին օգնելու.

- հասկանալ սեփական ինքնությունը՝ որպես անձ, անհատականություն, ունենալ ազգային և համերկրային աշխարհայացք, իմանալ բազմազանության մասին եւ ընդունել այն,
- արդյունավետ հաղորդակցվել, հասկանալ, քննադատաբար վերլուծել տարբեր տեսակետներ, արտահայտել սեփականը,
- ձեռք բերել փորձառություններ, որոնք հիմնված են իրենց հետաքրքրության վրա և խթանում են իրենց շրջակա աշխարհն ուսումնասիրելու հանդեպ հետաքրքրասիրություն,
- ուսումնասիրել աշխարհը՝ Հայաստանի տեսանկյունից,
- կիրառել ռեֆլեքսիվ մտածողություն (reflective thinking)¹ տարբեր իրավիճակներ վերլուծելու, խնդիրներ լուծելու, որոշումներ կայացնելու հարցում,
- զարգացնել բնագիտական հետազոտությունների համար անհրաժեշտ գաղափարներ, հմտություններ և սովորություններ,
- գնահատել, թե ինչպես է գիտությունը ազդում մարդկանց և շրջակա միջավայրի վրա, ունենալ պատասխանատու և խնայող վերաբերմունք մարդկային և բնական ռեսուրսների հանդեպ,

¹ <https://www.open.edu/openlearn/ocw/mod/oucontent/view.php?id=51386§ion=2>

- տրամադրել հիմնական բնագիտական տերմիններ և հասկացություններ, որոնք կօգնեն նրանց հետագա ուսումնառության ընթացքում հասկանալ իրենց և իրենց շրջապատող աշխարհը
- գնահատել և ընտրել արժանահավատ տեղեկատվություն, հաշվի առնել տարբեր տեսակետներ և խորաթափանցություն դրսևորել լավ մտածված եզրահանգումների և պատասխանատու որոշումների կայացման հարցում,
- հաղթահարել կոնֆլիկտային իրավիճակները, բանակցել և նախընտրել խաղաղ տարբերակներ, կարողանալ զերծ մնալ բռնությունից և բռնություն կիրառելուց
- կարևորել հասարակական գործընթացները, գիտակցել սեփական արձագանքի հնարավոր ազդեցությունը հասարակության վրա,
- ցուցաբերել նվիրվածություն սոցիալական համախմբմանը՝ գնահատելով հասարակության բազմազանությունը,
- տեղեկացված լինել որոշումների կայացման էթիկական հետևանքների մասին,
- ունենալ պատասխանատու և գիտակից վերաբերմունք սեփական և ուրիշների առողջության և անվտանգության հանդեպ, ունենալ համապատասխան սովորություններ
- կրել անձնական և կոլեկտիվ պատասխանատվություն՝ ընդհանուր բարիքի համար փոփոխություններ կատարելու համար:

Առարկայի հիմնական խնդիրներն են.

- երեխայի սոցիալականացումը,
- ճանաչողական ակտիվության և շրջակա աշխարհի մասին գիտելիքներ ձեռք բերելու ինքնուրույնության ձևավորումը,
- անձնային, ճանաչողական, հաղորդակցական, ստեղծագործական բազմաբնույթ կրթական գործելակերպերի զարգացումը,
- մեդիագրագիտության ձևավորումը,
- բնության, մարդկանց, հայրենիքի հանդեպ սիրո, հարգանքի և խնայող վերաբերմունքի դաստիարակությունը,
- սեփական և ուրիշների առողջության հանդեպ գիտակից և պատասխանատու վերաբերմունքը,
- իր նախնիների, անցյալի հանդեպ հարգանքը, պատմական և մշակութային ժառանգության պահպանության ցանկությունը:

Առարկայի ընդհանուր բնութագիրը

7-10 տարեկան հասակը լավագույն տարիքն է հետաքրքրությունների ձևավորման, հարցեր ձևակերպելու և այդ հարցերի պատասխանները քննելու, վերլուծելու և գտնելու, ինպես նաև համագործակցությունը, քննադատական և ստեղծագործական մտածողությունը զարգացնելու համար: Դա մարդու կյանքում սոցիալական ինքնագիտակցության աճի ժամանակաշրջանն է, և անհրաժեշտ է, որ հենց այս տարիքում ուսումնական գործընթացում քննարկման հիմնական թեմա դառնան յուրաքանչյուրի նկատմամբ արդարացի վերաբերմունքի, սեփական

արժանապատվության զգացման, հանդուրժողականության, շրջապատի մարդկանց և բնության նկատմամբ բարյացակամության, հոգատարության ձևավորմանն ուղղված հարցերը: Երեխայի համար շատ կարևոր է հենց այս տարիքում ընդունված լինել կոլեկտիվի կողմից, լինել նրա լիիրավ անդամը:

«Ես և շրջակա աշխարհը» ինտեգրված առարկայի չափորոշչով սահմանվել են հիմնական գաղափարներ և ենթագաղափարներ, որոնց համապատասխան, յուրաքանչյուր դասարանի համար նախատեսվել են չափորոշչային պահանջներ կամ վերջնարդյունքներ: Ամեն գաղափարի համապատասխան վերջնարդյունքները ձևավորում են սովորողի գնահատման չափանիշը:

Սահմանված են հետևյալ հիմնական հասկացություններ ու ենթահասկացությունները՝

Ես (Ե) ²	Ինքնություն, ինքնաճանաչում (Ի)	Ներաշխարհ (Ն)
		Մարմին (Մ)
	Անվտանգություն (Ա)	Առողջ սնուցում (Ս)
		Արտակարգ իրավիճակներ (Ի)
		Վնասակար սովորություններ, վարակիչ, ոչ վարակիչ հիվանդություններ (Վ)
Ես և մարդիկ (Ս)	Փոխհարաբերություններ (Փ)	Ընտանիք (Ը)
		Դպրոց (Դ)
		Համայնք (Հ)
		Իրավունքներ (Ի)
	Կոնֆլիկտ (Կ)	
	Հասարակական փոփոխություններ (Հ)	Քաղաքակրթական, տնտեսական (ՔՏ)
Ես և բնություն (Բ)	Բնության բազմազանություն	Օբյեկտներ՝ կենդանի, անկենդան (Օ)
	Փոխազդեցություններ (Բ)	Կենդանի բնության օբյեկտներ (Կ)
		Անկենդան բնության օբյեկտներ (Ա)
		Փոփոխությունները բնության մեջ (Փ)
Ես և տիեզերք (Տ)	Երկնային մարմիններ (Ե)	Երկնային մարմիններ
		Պարբերական երևույթները բնության մեջ (Պ)
	Շարժում ֆոխազդեցություններ (Շ)	Ուժեր, Շարժում (Ու)
		Ձայն և լույս (ՁԼ)
		Էներգիա (Է)

² Հիմնական գաղափարների նշագրերը, որոնցով ձևավորվել են վերջնարդյունքների գաղտնագրերը

	Մարմիններ, նյութեր Մասնիկներ (Մ)	Նյութեր, մասնիկներ (Ն)
		Նյութի վիճակ և հատկություն (<
		Չափեր և չափումներ (Չ)

Բովանդակության կառուցման հիմնական սկզբունքները.

Առարկայի բովանդակությունը կառուցելիս առաջնորդվել ենք հետևյալ ընդհանրական սկզբունքներով.

- Առարկայի բովանդակությունը կառուցված է գիտականության, տեխնոլոգիայի և մշակույթի ժամանակակից նվաճումներին համապատասխան:
- Պահպանված է տրամաբանական հաջորդականությունը:
- Նյութի կառուցման հիմքում ընկած են հիմնարար գաղափարներ, որոնցից բխում են բոլոր թեմաներն ու գաղափարները:
- Առարկայի բովանդակությունը կառուցված է հաջորդականության և շարունակականության սկզբունքով՝ պարզից բարդ, նաև՝ հաշվի առնելով ներառականությունը:
- Հիմնված է երեխայի անձնական փորձառության, իրական կյանքից օրինակների և աշխարհում արագ կատարվող փոփոխություններին նախապատրաստելու սկզբունքի վրա:
- Թեմաները ներկայացվում են պարուրածն սկզբունքով՝ դասընթացի ընթացքում ուսումնասիրված նյութերը ընդլայնելվում և խորացվում են մյուս դասարաններում նույն թեմայի աստիճանական ավելի բարձր մակարդակում, այնուհետև՝ հիմնական դպրոցի բնագիտական, հասարակագիտական, հայրենագիտական և անվտանգ կենսակերպի բնագավառների դասընթացներում:
- Առարկայի բովանդակությունը ներկայացվում է սովորողների տարիքային առանձնահատկություններին համապատասխան, որպեսզի նրանք հնարավորություն ունենան ինքնուրույն, միմյանց օգնելով կամ ուսուցչի ուղղորդմամբ յուրացնել այն:
- Առարկայի բովանդակությունը կառուցվում է այնպես, որ գիտելիքների և կարողությունների զարգացմանը զուգընթաց, ձևավորվեն սովորողների վերաբերմունքները, արժեքային համակարգը, զարգանան սոցիալական հմտություններն ու ստեղծագործական ունակությունները:

Առարկայի բովանդակությունը կառուցվում է «Ես» գաղափարի շուրջ, հետագայում ընդլայնելով ես-ի շուրջն եղած շրջանակը՝ բացահայտելով անձի և այդ շրջանակների բազմաշերտ փոխազդեցությունները: «Ով եմ ես», «Ես և մյուսները», «Ես և բնությունը» և «Ես և տիեզերքը» ինտեգրված միավորները կրտսեր դպրոցականներին թույլ են տալիս պատկերացնելու իր շուրջն եղած աշխարհի ամբողջական և միևնույն ժամանակ մազմաշերտ էությունը իր փոխադարձ կապվածություններով և փոխկախվածություններով՝ ինքնաճանաչումից մինչև աշխարհաճանաչողություն: «Ես և շրջակա աշխարհը» ինտեգրված դասընթացը կոչված է օգնելու երեխային ճանաչել իրեն ոչ միայն որպես անհատ, այլև որպես հասարակության և բնության մասնիկ: Դասընթացի օգնությամբ կրտսեր դպրոցականը սկսում է «կառուցել» իր սեփական աշխարհը՝ գծելով իր պատկերացումների, զգացողությունների, մտքերի ու նախասիրությունների շրջանակը: Թեմաներն ընտրված են այնպես, որ աշակերտի մեջ քայլ առ քայլ ձևավորվի

այն գիտակցությունը, որ ինքն աշխարհում մենակ չէ, որ իր սեփական ցանկություններից ու երազներից այն կողմ կան ուրիշ մարդիկ, որոնք իրեն նման չեն, և, ինչպես ինքը, անկրկնելի անհատականություն են, ուստի նույնպես արժանի են հարգանքի: Այնուհետև պատկերացումներն ընդլայնվում են շրջակա աշխարհի հետ ծանոթացման շնորհիվ: Երեխաներն ուսումնասիրում են իրենց բակը, քաղաքը, մարզը, հայրենիքը, նրա ներկան և անցյալը, պատմամշակութային արժեքները, ծանոթանում են տարբեր մասնագիտությունների տեր մարդկանց, սովորում են հասարակական վայրերում օրինակելի վարքագիծ դրսևորել, ձեռք են բերում հաղորդակցական հմտություններ, առողջ և անվտանգ ապրելակերպի համար անհրաժեշտ կարողություններ, նախնական պատկերացումներ են ձեռք բերում բնության, տիեզերքի և դրանցում գործող օրենքների և օրինաչափությունների մասին: Բացի բնագավառներով պայմանավորված բովանդակությունն ու կարողունակությունները առարկան ներառում է նաև մի շարք կարևորվող բովանդակային ուղղություններ, ինչպիսիք են՝ ֆինանսական կրթության, կանանց և տղամարդկանց իրավահավասարության, քաղաքացիական, էկոլոգիական կրթության, բնության և հալածանքի (բուլիինգի) կանխարգելման և, մեդիագրագիտության վերաբերյալ ուսուցում:

«Ես և շրջակա աշխարհը» առարկայի ուսումնասիրման գործընթացում կրտսեր դպրոցականները հնարավորություն են ունենում.

- համակարգելու, ընդլայնելու, խորացնելու իրենց ունեցած (ընտանիքում, նախադպրոցական հաստատություններում, մարդկանց և բնության հետ շփման անձնական փորձից ձեռք բերած) պատկերացումները բնության և հասարակական օբյեկտների մասին.
- իմաստավորելու մարդու և բնության միջև փոխհարաբերությունների բնույթը, հասարակական տարբեր խմբերի (ընտանիք, դասարան, դպրոց համայնք, ազգ) ներսում առկա փոխհարաբերություններն ու օրինաչափությունները,
- յուրացնելու և ցուցաբերելու առողջ ապրելակերպին բնորոշ վարքագծեր և սովորություններ, անվտանգության կանոնները, էկոլոգիապես գրագետ և բարոյական վարք բնության գրկում և հասարակության մեջ,
- գիտակցելու շրջապատի մարդկանց (տարբեր տարիքի, սեռի, ազգության, հավատքի և առողջական խնդիրներով) հանդեպ հարգալից և ուշադիր վերաբերմունքի կարևորությունը
- խնայող վերաբերմունք ցուցաբերելու բնության, պատմական և մշակութային արժեքների հանդեպ:

Տարրական դպրոցում սովորողի գիտելիքները սերտորեն առնչվում են մայրենիին, մաթեմատիկային, տեխնոլոգիային, արվեստին և ֆիզիկական կուլտուրային և ապահովվում են միջառարկայական թեմատիկ կապերի և խաչվող հասկացությունների միջոցով: Այս դասընթացի արդյունքում ձեռք բերված գիտելիքները, հմտությունները և վերաբերմունքները արժեքավոր են և հիմք են հանդիսանում հետագայում միջին դպրոցի

հասարակագիտական և բնագիտական, հայրենագիտական բնագավառների առարկաների համար:

Ուսումնառությունը առավել արդյունավետ և տևական է լինում, երբ խրախուսվում է բարձրակարգ մտածողության և քննադատական մտածողության զարգացումը, խթանվում են վերլուծական հմտությունները, որոնք իրենց մեջ ներառում են կիրառություն, վերլուծություն, գնահատում և ստեղծում: Պետք է ուշադրություն դարձնել նաև սովորողների հուզական և հոգեբանական հմտությունների զարգացմանը:

Խաչվող գաղափարներ

Աշխարհի ճանաչողության միասնական մեթոդաբանական հիմքերի ապահովման նպատակով առարկայի բովանդակությունը կառուցվում է նաև մի շարք ընդհանրական խաչվող հասկացությունների հենքի վրա: Դրանք առանցքային հասկացություններ են, որոնք ընդհանրական են տարբեր գիտությունների համար և օգնում են սովորողներին միավորելու, փոխկապակցելու տարբեր առարկաներից ձեռք բերած գիտելիքները աշխարհի մասին մեկ ամբողջական պատկերացման շրջանակներում:

Այդ հասկացությունները պետք է մեծ ուշադրության արժանանան դպրոցի բոլոր աստիճաններում, բոլոր առարկաների, այդ թվում՝ «Ես և շրջակա աշխարհը» առարկայի ուսուցման ժամանակ:

Առանձնացվում են յոթ այդպիսի խաչվող գաղափարներ.

1. Օրինաչափություններ
2. Պատճառ և հետևանք
3. Մասշտաբ, համամասնություն և քանակ
4. Համակարգեր և մոդելներ
5. Էներգիա և նյութ
6. Կառուցվածք և գործառույթ
7. Կայունություն և փոփոխություն

Ինչպես նաև որոշ ընդհանրական գաղափարներ, որոնք ավելի համապատասխանում են հասարակագիտական առարկաներին և թեմաներին.

1. Անհատ և հարաբերություններ
2. Ժամանակ և տարածություն
3. Անհատական և մշակութային արտահայտություն
4. Գիտատեխնիկական նորարարություն
5. Գլոբալիզացիա և կայունություն
6. Արդարություն և զարգացում

Այս երկու ցանկով ներկայացված խաչվող հասկացություններն էլ կիրառելի են «Ես և շրջակա աշխարհը» առարկայում՝ որպես ինտեգրված առարկա:

Ուսումնական գործունեության տեսակները

Դասընթացի բոլոր թեմաների ուսումնասիրության ժամանակ կարևոր է ապահովել ուսումնառության ժամանակակից տեխնոլոգիաների կիրառմամբ նորարարական

բազմաբնույթ գործունեության ձևեր, որոնք կապահովեն աշակերտների հետարքրվածությունը, ակտիվ մասնակցությունը, միմյանց հետ մտքերի փոխանակման, սեփական առաջընթացի ամրագրման, տարբեր կարողություններով երեխաների հավասար ներգրավվածության հնարավորությունը, ուսումնառության երեխայակենտրոն, բարոյահոգեբանական նպաստավոր միջավայրի ապահովումը: Առարկայի ուսումնառության ժամանակ սովորողները իրականացնում են տարբեր աղբյուրներից տեղեկույթի հայթայթում, վերլուծություն, ընդհանրացում, համակարգում, տարբեր ձևաչափերով ներկայացում, փոքրիկ հետազոտությունների, ուսումնասիրությունների պլանավորում և իրականացում, որն ուղղված է ուսումնասիրության օբյեկտի հատկությունները հայտնաբերելուն, պատճառահետևանքային կապերը, բնական և սոցիալական գործընթացների հաջորդականությունը բացահայտելուն: Միևնույն ժամանակ, իրականացվում են ուսումնական գործունեության (պրակտիկաների) բոլոր բաղադրիչները՝ հարցի ձևակերպում, խնդրի առաջադրում, դրա լուծմանն ուղղված գործողությունների պլանավորում, իրականացում, արդյունքների վերլուծություն, գնահատում, եզրակացությունների ձևակերպում: Կրտսեր դպրոցականները սովորում են համագործակցել ուսուցչի և դասընկերների հետ, փոքր և մեծ խմբերում համատեղ գործողություններ իրականացնել, տիրապետել հաղորդակցման և փոխօգնության տարբեր եղանակների: Այս բոլոր գործելակերպերը սովորողների համար ստեղծում են հիմնական դպրոցում ուսումնառությունը հաջողությամբ շարունակելու նպաստավոր պայմաններ:

Մասնավորապես՝ առարկայի դասավանդման համար անհրաժեշտ է կիրառել գործունեության բազմազան ձևեր, որոնք են.

- Ուսումնական տարբեր նպատակներով կիրառվող խաղեր,
- դիտումներ,
- փորձեր,
- հետազոտական առաջադրանքներ
- խմբային, համագործակցային առաջադրանքներ
- իրավիճակների առաջադրում, քննարկում,
- դաշտային աշխատանք,
- պրոյեկտներ,
- դերային, մարմնավորման (սիմուլյացիոն) խաղեր,
- մրցույթներ, վիկտորինաներ, հանդեսներ,
- դասարանական քննարկումներ և դեբատներ,
- շնորհանդեսներ՝գրավոր, բանավոր, տեսողական,
- աշխատանքային թերթիկներ՝ տարբեր տիպի առաջադրանքներով,
- թեմատիկ միավորի վերաբերյալ առաջադրանքներ,
- մոդելավորում,
- ուսուցողական ֆիլմերի դիտումներ, քննարկում,
- տեսանյութերի ստեղծում,

- խաչբառների, գլուխկոտրուկների, հանելուկների կազմում, լուծում,
- պարզ հաստակագծերի, քարտեզների գծում, վերծանում, կողմնորոշում
- էքսկուրսիաներ
- նկարների դիագրամների, սահիկաշարերի, ֆիլմերի ցուցադրումը,
- փաստական նյութերի հետաքրքիր և խթանող ներկայացում,
- գիտական բառապաշարի և լեզվի գործածում,
- տեքստի հետ ուսումնասիրման աշխատանքներ,
- նկարների, գծապատկերների և սխեմաների ստեղծում,
- հարցադրումների սահմանում
- գաղափարների և հասկացությունների սահմանում և վերհանում,
- խնդրի առաջադրում, լուծումների որոնում, դիտարկման կամ փորձի միջոցով արդյունքների գնահատում և վերլուծություն, եզրահանգումների վերհանում և քննարկում:

Առարկայի ուսուցման չափորոշչային ընդհանրական վերջնարդյունքները (համապատասխան ծածկագրմամբ³)

ՇԵ-ԻՆ-Վ1 Ուսումնասիրել ինքնության վերաբերյալ գաղափարներ, ներառյալ՝ իր և ուրիշների, տարբերակել ինքնությունը ըստ սոցիալական և հուզական առանձնահատկությունների:

ՇԵ-ԻՆ-Վ2 Գտնել ինքնարտահայտման և ինքնության դրսևորման տարբեր եղանակներ:

ՇԵ-ԻՆ-Վ3 Ճանաչել սեփական կարողություններն ու հնարավորությունները, շահեկան ինքնադրսևորվել:

ՇԵ-ԻՆ-Վ4 Ճանաչել իր և ուրիշների հույզերը, կառավարել դրանք, ապրումակցել:

ՇԵ-ԻՆ-Վ5 Տարբերակել անցյալում, ներկայում և ապագայում կատարվելիք իրադարձությունները՝ իր կյանքի օրինակով, արդյունավետ տնօրինել ժամանակը:

ՇԵ-ԻՄ-Վ1 Ճանաչել զգայարանները, տարբերակել դրանցով ստացված տեղեկությունները՝ որպես աշխարհը ճանաչելու միջոց:

ՇԵ-ԻՄ-Վ2 Ճանաչել մարմնի հիմնական մասերի գործառույթներն ու կազմության որոշ բնորոշիչներ:

ՇԵ-ԻՄ-Վ3 Հարգել և ընդունել տարբերությունները, այդ թվում՝ հաշմանդամություն ունեցող և զարգացման առանձնահատկություններ ունեցող մարդկանց, ներառելով նրանց հնարավոր բոլոր ուսումնական գործընթացներում:

³ Ծածկագրումը կատարվել է հետևյալ կերպ՝ **1-ին տառը** Շ-Շրջակա, **2-րդ տառը** ցույց է տալիս մեծ հիմնական գաղափարը՝ Ե-Ես, Մ-Ես և մարդիկ, Բ-Ես և բնությունը, Տ-Ես և տիեզերքը, **3-րդ և 4-րդ տառերը**՝ երկրորդ և երրորդ հիմնական գաղափարի համապատասխան տառերը, օրինակ՝ ԻՆ- Ինքնաճանաչում-Ներաշխարհ. ԻՄ- Ինքնաճանաչում-Մարմին, և **5-6-րդ տառն ու թիվը**՝ վերջնարդյունքը և համարը՝ Վ1, Վ2 և այլն:

ՇԵ-ԻՄ-Վ4 Տիրապետել անձնական հիգիենայի կանոններին, հիմնավորել հիգիենայի, ֆիզիկական ակտիվության և կոփման անհրաժեշտությունը՝ որպես առողջությունը պայմանավորող կարևոր գործոններ:

ՇԵ-ԱՍ-Վ1 Բացատրել առողջ սնուցման բնութագրիչները՝ բամազանությունը, օրվա ռացիոնը, ընդունման պարբերականությունը և անվտանգությունը:

ՇԵ-ԱՍ-Վ2 Բացատրել, որ սնունդը ապահովում է օրգանիզմի էներգիան, որն էլ ապահովում է ֆիզիկական ակտիվությունը:

ՇԵ-ԱՍ-Վ3 Ներկայացնել ջրի նշանակությունը մարդու օրգանիզմի նյութափոխանակության համար:

ՇԵ-ԱԻ-Վ1 Ցուցադրել տարբեր հնարավոր աղետների և արտակարգ իրավիճակների ժամանակ խուճապի չմատնվելու, կողմնորոշվելու, անվտանգության կանոնների և քայլերի հաջորդականության իմացություն, ցուցադրել առաջին օգնության պարզ եղանակներ:

ՇԵ-ԱՎ-Վ1 Տարբերակել վնասակար սովորությունները՝ այդ թվում ծխելը, ալկոհոլ և այլ վնասակար նյութեր օգտագործելը և խուսափել դրանցից, թվարկել որոշ վարակիչ հիվանդություններ և կիրառել դրանք կանխարգելելուն ուղղված վարքագիծ:

ՇԵ-ԱՎ-Վ2 Դրսևորել ռիսկերից խուսափելուն և առողջությանը միտված վարքագիծ:

ՇՄ-ՓԸ-Վ1 Բնութագրել տարբեր կազմով ընտանիքները՝ մեծ, փոքր, փոփոխություններն ընտանիքում, նկարագրել դերերը, պարտականություններն ու կարիքներն ընտանիքում:

ՇՄ-ՓԸ-Վ2 Ներգրավվել տարբեր խմբերի խմբային գործունեություններում՝ այդ թվում ընտանիք, դասարան, համայնք և այլն, մեկնաբանել խմբերի առանձնահատկությունները, խմբային դերերը, փոխհարաբերությունները և խմբային գործունեության արդյունքը:

ՇՄ-ՓԴ-Վ1 Պահպանել դպրոցական համակեցության կանոնները, բերել մեծահասակների և հասակակիցների վարքագծի դրական և բացասական ազդեցության օրինակներ, հստակ արտահայտել ցանկություններն ու կամքը, թույլ չտալ որևէ բան առանց իր ցանկության, երբ դա կարող է վնասել իրեն:

ՇՄ-ՓԴ-Վ2 Կարևորել փոխօգնությունը, միմյանց հանդեպ բարեհաճ և փոխվստահող փոխհարաբերություններ ստեղծելու կամք ցուցաբերել:

ՇՄ-ՓԴ-Վ3 Բնութագրել և համապատասխանել բնութագրին, թե ինչպիսին պետք է լինի ընկերը, ո՞ր որակներն են բնորոշ լավ ընկերոջը, կարողանալ ձեռք բերել և պահպանել ընկերությունը:

ՇՄ-ՓԴ-Վ4 Բացատրել, օրինակներ բերել, որ բոլոր մարդիկ կարող են ունենալ նախասիրություններ և հետաքրքրություններ, որոնք պայմանավորված են անհատական առանձնահատկություններով և անձնային որակներով:

ՇՄ-ՓՀ-Վ1 Դրսևորել հարգալից, հոգատար, պատասխանատու և անխտրական վերաբերմունք հասարակության տարբեր խմբերի ներկայացուցիչների հանդեպ:

ՇՄ-ՓՀ-Վ2 Նկարագրել ազգային ինքնությունը սահմանող խորհրդանիշներն ու իրադարձությունները՝ անցյալի և ներկայի. տարբերակել իրենց ազգայինը այլ երկրների

հետ համեմատության համատեքստում և զարգացնել դրանցից իրենց հուզական կախվածությունը:

ՇՄ-ՓՀ-Վ3 Կողմնորոշվել տարածքում, բնութագրել տարբեր կառույցների, հաստատությունների նշանակությունը, դրանցից օգտվելու ձևերը:

ՇՄ-ՓՀ-Վ4 Ճանաչել իր բնակավայրի, հայրենիքի բնության և պատմամշակութային արժեքները, գնահատի և խնայող և պատասխանատու վերաբերմունք ցուցաբերի դրանց հանդեպ:

ՇՄ-ՓԻ-Վ1 Նկարագրել իրավունքների և քաղաքացիական պատասխանատվության հիմնական բաղադրիչները, որոնք հնարավորություն են տալիս իրենց հասարակությանը դուրս գալ ավելի զարգացած, ներդաշնակ ուղի:

ՇՄ-ՓԻ-Վ2 Կանխատեսել իր և ուրիշների արարքների հնարավոր հետևանքները, գնահատել դրանք, ունենալ անձնական դիրքորոշում:

ՇՄ-ՓԿ-Վ1 Ցուցաբերել արդյունավետ շփման, կոնֆլիկտները խաղաղ կարգավորելուն ուղղված վարքագիծ:

ՇՄ-ՓԿ-Վ2 Տարբերակել բռնության տարբեր դրսևորումները հասակակիցների և մեծահասակների կողմից/միջև, հրաժարվել բռնության բոլոր ձևերից, աջակցել բռնության ենթարկվածին:

ՇՄ-ՓԿ-Վ3 Տարբերակել փաստը տեսակետից:

ՇՄ-ՓԿ-Վ4 Նկարագրել և բերել օրինակներ ազատության, արդարության և հավասարության, պատասխանատվության և հանդուրժողականության վերաբերյալ:

ՇՄ-ՀՔՏ-Վ1 Հիշատակել հնում եղած որոշ նշանակալի քաղաքակրթությունների մասին տեղեկություններ, բացատրել, թե ինչպես, ինչ միջոցներով են մեզ հասել այդ մշակույթների մասին վկայությունները:

ՇՄ-ՀՔՏ-Վ2 Թվել տնտեսության ճյուղերը, բնորոշել դրանք, համեմատել նախկինում և ներկայում դրանց զարգացման առանձնահատկությունները և ապագայում՝ կայուն զարգացման համատեքստում, օրինակներ բերել:

ՇՄ-ՀՔՏ-Վ3 Ներկայացնել ապրանքափոխանակության, փողի առաջացման և նշանակության մասին, բացատրել բարիք-փող-բարիք շղթան, կազմել անձնական բյուջե:

ՇԲ-ԲՕ-Վ1 Տարբերակել և բնութագրել կենդանի և անկենդան բնության օբյեկտները, մեկնաբանել դրանց միջև առկա փոխկախվածությունը և փոխազդեցությունները:

ՇԲ-ԲՕ-Վ2 Ներկայացնել տարբեր գործոնների՝ եղանակ, քամի, տաք և սառը ջուր, ջրի քանակ և այլն, ազդեցությունը բույսերի աճի և զարգացման վրա:

ՇԲ-ԲՕ-Վ3 Բնութագրել տարբեր տեղանքներին բնորոշ կենդանական, բուսական աշխարհը՝ ներառյալ մարդկանց, բազմազանությունն ու միջավայրին հարմարվողականությունը, այդ բազմազանության պահպանության անհրաժեշտությունը:

ՇԲ-ԲԿ-Վ1 Նկարագրել, հիմնավորել, որ բնության մեջ գտնվող բուսական և կենդանական տեսակները դասակարգվում են ըստ տարբեր բնութագրերի, բերել տարբեր դասակարգումների օրինակներ:

ՇԲ-ԲԿ-Վ2 Դիտարկել և նկարագրել բույսերի հիմնական մասերը, նկարագրել դրանց հիմնական գործառույթները, հետազոտել, ներկայացնել սերմերի ծլման, աճի գործընթացը և դրա համար անհրժեշտ պայմանները:

ՇԲ-ԲԿ-Վ3 Դիտարկել և բացատրել, որ բոլոր կենդանի օրգանիզմները բազմանում են և առաջացնում են իրենց նման, բայց ոչ կրկնօրինակ սերունդ:

ՇԲ-ԲԿ-Վ4 Բացատրել, թե մարդը, կենդանիները և բույսերը որտեղից են ստանում իրենց սնունդը, նշելով, որ բույսերը արեգակնային էներգիայի հաշվին ստեղծում և կուտակում են սննդանյութեր, իսկ մարդը և կենդանիները սնվում են բույսերով կամ այլ կենդանիներով, սնման շղթաների օրինակներ բերել:

ՇԲ-ԲԱ-Վ1 Ճանաչել երկրի մակերևույթի հիմնական ձևերը, բնորոշել, նկարագրել իր շրջապատի ռելիեֆի տարբեր ձևերը՝ տափարակ, բլուր, սար, լեռ, գետ, լիճ, ծով և այլն:

ՇԲ-ԲԱ-Վ2 Բնութագրել և նկարագրել անկենդան բնությունը՝ որպես կենդանիների, բույսերի և մարդկանց բնակության միջավայր՝ օդը, ջուրը, հողը:

ՇԲ-ԲԱ-Վ3 Ներկայացնել մարդկանց, բույսերի և կենդանիների համար ջրի կենսական նշանակությունը, երկրագնդի վրա քաղցրահամ ջրի պաշարների սահմանափակությունը, աղտոտման խնդիրը, ջրի տնտեսման, պաշարների արդյունավետ օգտագործման անհրաժեշտությունը:

ՇԲ-ԲԱ-Վ4 Բացատրել, որ երկրագունդը շրջապատված է մթնոլորտով և ունի կենսական նշանակություն:

ՇԲ-ԲԱ-Վ5 Գլոբուսի և քարտեզի վրա ցույց տալ մայրցամաքները և օվկիանոսները, հորիզոնի հիմնական և միջանկյալ կողմերը և կողմնորոշվել դրանցով, կարողանալ օգտվել կողմնացույցից, ճանաչել մասշտաբ և պայմանական նշաններ հասկացությունները:

ՇԲ-ԲՓ-Վ1 Ճանաչել և նկարագրել բնության մեջ տեղի ունեցող պարբերական երևույթները՝ եղանակային փոփոխություններ, գիշեր-ցերեկ և այդ փոփոխություններով պայմանավորված այլ բնական երևույթները ինչ ազդեցություն են ունենում բնության վրա:

ՇԲ-ԲՓ-Վ2 Ներկայացնել, թե մարդու գործունեությունն ինչպես է ազդում շրջակա միջավայրի և կենսաբազմազանության վրա, օրինակ, աղբ, գետերի աղտոտվածություն, թափոնների արտանետում, մեկնաբանել բնության աղտոտվածության և առողջության կապը:

ՇԲ-ԲՓ-Վ3 Ներկայացնել էկոհամակարգերը դրանց փոխկախվածությունը, փոփոխությունները, վատթարացումը՝ տարբեր՝ կենսածին, մարդածին և ոչ կենսածին գործոնների ազդեցության տակ:

ՇԲ-ԲՓ-Վ4 Բացատրել աղբի տեսակավորման, վերամշակման, երկրորդային օգտագործման և թափոնների վերամշակման անհրաժեշտությունը բնապահպանության և խնայողության տեսանկյունից:

ՇՏ-ԵՊ-Վ1 Նկարագրել Արեգակնային համակարգը՝ մոլորակները, Երկիրը, Լուսինը, դիտարկել Արեգակի լույսը, ջերմությունը՝ որպես երկրի վրա կյանքի պահպանման կարևոր գործոն:

ՇՏ-ԵՊ-Վ2 Դիտարկել գլոբուսը որպես երկրի մոդել և ցուցադրել, թե ինչպես է Երկրի պտույտն Արեգակի և իր առանցքի շուրջը պայմանավորում գիշերվա և ցերեկվա, եղանակների հերթագայությունը:

ՇՏ-ԵՊ-Վ3 Փորձերի միջոցով ցուցադրել արևի և լուսնի խավարումները:

ՇՏ-ՇՈՒ-Վ1 Ցուցադրել, որ այն ամենն ինչ շարժվում է՝ շարժվում է որևէ ուժի շնորհիվ, որ կան մարմինը շարժման մեջ դնելու տարբեր եղանակներ (ձգել, հրել տարբեր ուժերով և ուղղություններով)

ՇՏ-ՇՈՒ-Վ2 Տարբերել ուղղագիծ, կորագիծ և պտտական շարժումները, բերել օրինակներ:

ՇՏ-ՇՈՒ-Վ3 Բացատրել, որ մարմիններն ընկնում են երկրի ձգողականության պատճառով:

ՇՏ-ՇՁԼ-Վ1 Ծանոթանալ ձայնի առաջացման և տարածման երևույթի հետ, համոզվել, որ ձայնը տարբեր կերպ է տարածվում փակ և բաց տարածքում, բացահայտել, որ ձայնը կարող է անդրադառնալ՝ դիպչելով մարմիններին (արձագանք):

ՇՏ-ՇՁԼ-Վ2 Ներկայացնել լույսի բնական և արհեստական աղբյուրներ, բացատրել որ լույսը տարածվում է ուղիղ գծով՝ ստվերների առաջացման և լույսի անդրադարձման օրինակով:

ՇՏ-ՇՁԼ-Վ3 Ճանաչել նյութերն ըստ իրենց՝ թափանցիկ, կիսաթափանց և անթափանց լինելու հատկության:

ՇՏ-ՇԷ-Վ1 Մեկնաբանել, որ ցերեկվա և գիշերվա, ինչպես նաև ամառվա և ձմեռվա ջերմաստիճանների տարբերությունը պայմանավորված է Արեգակից ստացած ջերմության քանակով:

ՇՏ-ՇԷ-Վ2 Բացատրել, որ բույսերի աճը, կենդանիների և առարկաների տաքանալը պայմանավորված է Արեգակից Երկիր հասնող լույսի էներգիայով:

ՇՏ-ՇԷ-Վ3 Փորձել և համոզվել, որ արևի տակ բոլոր առարկաները (ջուրը, օդը, հողը) տաքանում են:

ՇՏ-ՇԷ-Վ4 Բացատրել, որ յուրաքանչյուր երևույթ ընթանում է էներգիայի փոխակերպմամբ:

ՇՏ-ՄՆ-Վ1 Տարբերակել՝ ինչ են մարմինները, նյութերը, բացատրել, որ նյութերը կազմված են չափազանց փոքր մասնիկներից:

ՇՏ-ՄՆ-Վ2 Ներկայացնել ունեցած նախնական պատկերացումները մասնիկների շարժման և փոխազդեցության մասին:

ՇՏ-ՄՆ-Վ3 Նկարագրել դիֆուզիան պարզագույն օրինակների վրա:

ՇՏ-ՄՀ-Վ1 Բնութագրել նյութերն ըստ իրենց որակական հատկանիշների՝ կոշտ, պինդ, հեղուկ, գազային, կարծր, անհարթ, հարթ, ողորկ, տաք, սառը և այլն, դասակարգել բոլոր նյութերը՝ պինդ, հեղուկ, գազային:

ՇՏ-ՄՀ-Վ2 Նկարագրել նյութերն ու մարմիններն ըստ իրենց փոփոխվելու հատկությունների՝ ինչի հետևանքով են կոտրվում, ճկվում, ձգվում, ծռվում, հոսում, պատռվում և այլն:

ՇՏ-ՄՀ-Վ3 Ներկայացնել, որ ջուրը միակ նյութն է, որ բնության մեջ միաժամանակ հանդիպում է երեք վիճակներում էլ՝ հեղուկ, պինդ, գազային, դրա նշանակությունը, փորձերի միջոցով ներկայացնել մի վիճակից մյուսին անցումը, ջրի օրինակով բնութագրել նյութերի հալում, պնդացում, գոլորշիացում և խտացում երևույթները, ներկայացնել ջրի մեծ շրջապտույտի սխեման:

ՇՏ-ՄԶ-Վ1 Բնութագրել մարմիններն ըստ քանակական հատկանիշների, համապատասխան գործիքների օգնությամբ կատարել երկարության, զանգվածի, ջերմության և ծավալի չափումներ, կատարել անցումներ չափման միավորների չափողականությունների միջև:

ՇՏ-ՄԶ-Վ2 Թվարկել չափման միավորները և գտնել դրանց միջև եղած առնչությունները:

ՇՏ-ՄԶ-Վ3 Բացահայտել մարմինների կշռի և ձգողականության ուժի կապը:

Առարկայի գնահատումը

Համաձայն ՀՊԶ-ի 55-րդ կետի 1-4 դասարաններում և 5-րդ դասարանի առաջին կիսամյակում միավորային գնահատում չի իրականացվում: Ընթացիկ գնահատումը կատարվում է բնութագրման միջոցով, իսկ, որպես տարեկան ամփոփիչ գնահատական, կազմվում է յուրաքանչյուր սովորողի ուսումնական առաջադիմության բնութագիրը՝ համաձայն կրթության պետական կառավարման լիազորված մարմնի սահմանած կարգի: Գնահատումը տեղեկատվություն հավաքելու, վերլուծելու և դրա հիման վրա հանրակրթության իրականացման բովանդակային և կազմակերպական արդյունքները վերահսկելու գործընթաց է: Գնահատման հիմնական նպատակը սովորողների գիտելիքների, կարողությունների և հմտությունների յուրացման ու տիրապետման աստիճանի, նրանց անձնային որակների ստուգումն է և ուսման որակի վերահսկումը: Ընթացիկ գնահատումը գնահատման համակարգի առաջնային և կարևոր մասն է, որի միջոցով հստակեցվում են ուսուցման գործընթացի և արդյունքների առարկայական չափորոշիչներին և ծրագրային պահանջներին համապատասխան լինելը: Գնահատման արդյունքում բացահայտվում են ուսուցիչների, աշակերտների բացթողումները, դժվարություններն ու ձեռքբերումները, ինչպես նաև հստակեցվում են ուսուցման գործընթացի բարելավման ուղիները:

Այսօր գնահատման համակարգի կիրառումը պայմանավորված է Հանրակրթության պետական չափորոշիչի և առարկայական օրինակելի ծրագրի բովանդակությամբ: Գնահատման նոր համակարգը պետք է հիմնվի արդարության, հուսալիության, անկողմնակալության, հավաստիության, հիմնավորվածության, մատչելիության և թափանցիկության սկզբունքների վրա:

Առարկայի գնահատումը պետք է երեխաներին հնարավորություն ընձեռի գիտակցելու նոր գիտելիքների ու հմտությունների ձեռք բերման անհրաժեշտությունը: Այն երեխայի առաջընթացն ու զարգացումը պետք է արձանագրի այնպես, որ այն ակնհայտ լինի երեխաների, ծնողների և այլոց համար:

Ինչն ենք գնահատում:

Գնահատման համակարգը պետք է ներառի միջոցներ, որոնք կգնահատեն.

- գիտելիքները,
- հմտությունները,
- վարքագիծը,
- որակները:

Գնահատումը պետք է արձանագրի երեխայի սկզբնական գիտելիքները, հմտությունները, վարքագիծը, այնուհետև դրա համեմատ ձեռք բերած փոփոխությունները:

Ով պետք է իրականացնի գնահատումը:

Առաջնային գնահատումը պետք է իրականացնի առարկայի ուսուցիչը: Բայց գնահատումն իր մեջ պետք է ամփոփի նաև աշակերտի ինքնագնահատականը, ծնողների և այլ ուսուցիչների գնահատականը:

Ում համար է և ինչին պետք է ծառայի գնահատումը:

Աշակերտին՝ պետք է խրախուսի, արձանագրի աճը, ուժեղ և թույլ կողմերը, հաջողությունները, վրիպումները:

Ուսուցչի համար այն պետք է հանդիսանա աշխատանքը պլանավորելու, փոփոխությունները արձանագրելու միջոց:

Ծնողների համար այն պետք է երեխայի առաջընթացը արձանագրելու, ընտանիքում հմտությունների ձևավորմանը նպաստելու, ինչպես նաև դաստիարակության ձևերի շուրջ մտորելու, դրանք ավելի ճկուն և բազմազան դարձնելու միջոց լինի:

Այլոց՝ շահագրգիռ կամ հետաքրքրված անձանց համար. ուսուցիչներ, դասուղեկ, տնօրեն և այլն, առարկայի ազդեցությունը տեսնելու, արձանագրելու, երեխայի մասին տեղեկություններ ունենալու միջոց: Պետք է հանդիսանա միջառարկայական կապերը ավելի գործուն դարձնելու միջոց:

Ծրագրի ձևաչափի վերաբերյալ պարզաբանումներ

«Ես և շրջակա աշխարհը» առարկային անհրաժեշտ և հատկացվող ժամաքանակը՝ ըստ ծրագրի՝ ներկայացված է հետևյալ աղյուսակում:

	Հիմնական գաղափարներ	2-րդ դասարան 64 դասաժամ		3-րդ դասարան 68 դասաժամ		4-րդ դասարան 68 դասաժամ				
		Ընդհ.	Առողջ ապր.	Ընդհ.	Առողջ ապր.	Ընդհ.	Առողջ ապր.			
1.	Ես	15	9	16	12	8	8			
2.	Ես և մարդիկ	13	4	12	8	25	6			
3.	Ես և բնությունը	14		26		8	2			
4.	Ես և տիեզերքը	15		8		19				
	Ընդամենը	57	7	13	62	6	20	60	8	16

Ծրագրի ձևաչափը իր մեջ ներառում է հետևյալ բաժինները՝

- Հիմնական գաղափարները
- Թեմաները
- Նպատակը
- Առարկայի ընդհանրական չափորոշչային վերջնարդյունքները՝ ծածկագրված
- Թեմայի վերջնարդյունքները՝ ծածկագրված
- Բովանդակությունը
- Առաջարկվող գործունեության ձևերը
- Խաչվող գաղափարները
- Միջառարկայական կապերը
- Ներառարկայական կապերը
- Կապը ՀՊՁ տարրական դպպրոցի չափորոշիչների հետ՝ ծածկագրված

2-րդ դասարան

Ես	
Ինքնություն Ինքնաճանաչում	
Ներաշխարհի (3 ժամ)	Մարմին (3 ժամ)
ԹԵՄԱ ՈՎ ԵՄ ԵՍ (6 ժամ)	
Նպատակ	
<ul style="list-style-type: none"> • Ձևավորել ինքնաճանաչման, ինքնարժևորման, ինքնագնահատման և ինքնաարտահայտվելու հմտությունները, սեփական անհատականությունը բացահայտելու և յուրաքանչյուրի անհատականությունը տեսնելու և գնահատելու ունակությունը, յուրաքանչյուրի առանձնահատկությունը հարգելու կարողությունը: Օգնել դիտարկել իրենց և ուրիշներին՝ անցյալում, ներկայում և ապագայում: • Իսթանել տարբեր զգայարաններով ստացած տեղեկությունների տարբերակման և դրանցից ստացված տեղեկությունների համադրման կարևորության գիտակցումը: • Օգնել ընդլայնելու պատկերացումն ու ճանաչողությունը սեփական մարմնի, տարբեր մասերի, նաև ֆիզիկական հատկանիշների, անձնական հիգիենայի վերաբերյալ տարրական գիտելիքի ձևավորում: 	
Առարկայի ընդհանրական չափորոշչային վերջնարդյունքներ	
<p>Ներաշխարհի</p> <p>ՇԵ-ԻՆ-Վ1 Ուսումնասիրել ինքնության վերաբերյալ գաղափարներ, ներառյալ՝ իր և ուրիշների, տարբերակել ինքնությունը ըստ սոցիալական և հուզական առանձնահատկությունների:</p> <p>ՇԵ-ԻՆ-Վ2 Գտնել ինքնարտահայտման և ինքնության դրսևորման տարբեր եղանակներ:</p> <p>ՇԵ-ԻՆ-Վ3 Ճանաչել սեփական կարողություններն ու հնարավորությունները, շահեկան ինքնադրսևորվել:</p> <p>ՇԵ-ԻՆ-Վ4 Ճանաչել իր և ուրիշների հույզերը, կառավարել դրանք, ապրումակցել:</p> <p>ՇԵ-ԻՆ-Վ5 Տարբերակել անցյալում, ներկայում և ապագայում կատարվելիք իրադարձությունները՝ իր կյանքի օրինակով, արդյունավետ տնօրինել ժամանակը:</p>	
<p>Մարմին</p> <p>ՇԵ-ԻՄ-Վ1 Ճանաչել զգայարանները, տարբերակել դրանցով ստացված տեղեկությունները՝ որպես աշխարհը ճանաչելու միջոց:</p> <p>ՇԵ-ԻՄ-Վ2 Ճանաչել մարմնի հիմնական մասերի գործառույթներն ու կազմության որոշ բնորոշիչներ:</p> <p>ՇԵ-ԻՄ-Վ3 Հարգել և ընդունել տարբերությունները, այդ թվում՝ հաշմանդամություն ունեցող և զարգացման առանձնահատկություններ ունեցող մարդկանց, ներառելով նրանց հնարավոր բոլոր ուսումնական գործընթացներում:</p> <p>ՇԵ-ԻՄ-Վ4 Տիրապետել անձնական հիգիենայի կանոններին, հիմնավորել հիգիենայի, ֆիզիկական ակտիվության և կոփման անհրաժեշտությունը՝ որպես առողջությունը պայմանավորող կարևոր գործոններ:</p>	
Թեմայի վերջնարդյունքները	
<p>Ներաշխարհի</p> <p>2ՇԵ-ԻՆ-Վ1-2-3 Նկարագրել իրենց զբաղմունքը, նախասիրությունները, հետաքրքրությունները, համեմատել մյուսների հետ:</p>	

- 2ՇԵ-ԻՆ-Վ1-2-3** Դիտարկել և մեկնաբանել, թե ինչպես կարող են իր նախասիրությունները, հետաքրքրություններն ու սովորությունները պայմանավորել իր նպատակները:
- 2ՇԵ-ԻՆ-Վ4** Տարբերակել և արտահայտել իր զգացմունքներն ու հույզերը տարբեր միջոցներով (խոսքով, հայացքով, ժեստերով, միմիկայով):
- 2ՇԵ-ԻՆ-Վ5** Տարբերակել իր անցյալը, ներկան և ապագան, նկարագրի իրադարձությունները տարբեր ժամանակներում:
- 2ՇԵ-ԻՆ-Վ5** Կազմել օրվա ռեժիմ՝ ճիշտ բաշխելով օրը աշխատանքի, հանգստի, զբաղմունքի, քնի միջև:

Մարմին

- 2ՇԵ-ԻՄ-Վ1** Տարբերակել և համադրել տարբեր զգայարաններով ստացած տեղեկությունները, հետազոտել, ներկայացնել, որ նույն տեղեկությունը կարելի է տարբեր զգայարաններով զգալ:
- 2ՇԵ-ԻՄ-Վ2** Բացատրել մարմնի մասերի նշանակությունը, գործածությունը՝ որն ինչի համար է:
- 2ՇԵ-ԻՄ-Վ3** Մտորել հաշմանդամություն կամ զարգացման առանձնահատկություններ ունեցող մարդկանց մասին. ինչպես հեշտացնել և հավասար հնարավորություններ ապահովել բոլորի համար:
- 2ՇԵ-ԻՄ-Վ4** Հիմնավորել, որ հիգիենայի պահպանման սովորություններ ունենալը առողջության գրավականներից մեկն է. լվացվելը, մաքուր կենցաղը:
- 2ՇԵ-ԻՄ-Վ4** Տարբերակել և ունենալ անձնական հիգիենայի անհատական պարագաներ, բացատրել դրանց անհրաժեշտությունը:
- 2ՇԵ-ԻՄ-Վ4** Պահպանել անձնական հիգիենան. մարմնի խնամքը. տեսողություն, լսողություն, կեցվածք, բերանի խոռոչ, մաշկ, մազեր, եղունգներ և այլն:
- 2ՇԵ-ԻՄ-Վ3** Բացատրել, որ տարբեր մարդիկ տարբեր մարմնակազմվածք ունեն (Ներառականություն մասին, տարբեր կարողություններով և զարգացման առանձնահատկություններով մարդկանց մասին):
- 2ՇԵ-ԻՄ-Վ4** Պատրաստ լինել ամեն օր մարմնամաքությանը զբաղվել և կոփվել և հաճախ գտնվել մաքուր օդում:

Բովանդակություն

- Ով եմ ես: Ինչպես եմ կազմակերպում կյանքս: Նախասիրություններ, հետաքրքրություններ:
- Զգացմունքների, հույզերի արտահայտումը ժեստերի, միմիկայի, հայացքի, խոսքի միջոցով:
- Անցյալ, ներկա և ապագա, տարբեր ժամանակներում իրադարձությունների նկարագրում:
- Տարբեր զգայարաններով ստացած տեղեկություններ, համադրում:
- Հաշմանդամություն կամ զարգացման առանձնահատկություններ ունեցող մարդիկ (Ինչպես հեշտացնել և հավասար հնարավորություններ ապահովել բոլորի համար): Տարբեր մարմնակազմվածք ունեցող մարդիկ (ներառականություն):
- Հիգիենայի պահպանումը որպես առողջ լինելու գրավական: Մաքուր կենցաղ:
- Ամենօրյա Ֆիզիկական ակտիվություն մարմնամաքությանը զբաղվելու, կոփվելու և հաճախ մաքուր օդում գտնվելու կարևորությունը:

Առաջարկվող գործունեության ձևեր	Խաչվող գաղափարներ
<ul style="list-style-type: none"> • Խմբային, համագործակցային առաջադրանքներ, խաղեր, վարժություններ Ինքնաճանաչումը, միմյանց ճանաչելը, ինքնավստահությունն ու փոխադարձ վստահությունը խթանող՝ զույգերով, մեծ կամ փոքր խմբերով խաղեր, վարժանքներ: Նկարագրել թե ինչով են սիրում զբաղվել՝ նախասիրությունները, զբաղմունքները: Պարզել՝ կա՞ն իր նախասիրություններն իր հետ կիսող մարդիկ, համեմատել, նկարագրել՝ ինչն է, որ բոլորին է հատուկ, ինչով են նման աշխարհի բոլոր մարդկանց, դիտարկել և մեկնաբանել, թե ինչպես կարող են իր նախասիրությունները, հետաքրքրություններն ու 	<ul style="list-style-type: none"> • Անհատ և հարաբերություններ Յուրաքանչյուրը պետք է հնարավորություն ունենա իրեն ճանաչելու, իր մասին խոսելու, մյուսներին լսելու, ճանաչելու և համեմատություններ անելու համատեքստում խորացնելու ինքնաճանաչումն ու ինքնաբացահայտումը, կարողանա արժեքների, համոզմունքների և կարծիքների փոխանակման միջոցով հստակեցնել դրանք: • Ժամանակ և տարածություն

սովորությունները պայմանավորել իր նպատակները: **Քննել և պարզել՝** կա՞ն արդյոք նպատակներ, որոնք դժվար իրագործելի են թվում, ինչ է պետք և ինչն է իրեն պակասում դրանց իրագործման համար՝ օրը ճիշտ կազմակերպելու համատեքստում (օրվա ռեժիմ): **Քննարկել**, թե երբ են իրագործվելու նպատակները, անցյալի, ներկայի ու ապագայի սպասվելիք իրադարձությունների համատեքստում:

- **Դերային, մարմնավորման (սիմուլյացիոն) խաղեր՝** զգայարանների, զգացմունքների, հույզերի արտահայտման վերաբերյալ: Երեխաները պետք է կարողանան **տարբերակել և համադրել** տարբեր զգայարաններով ստացած տեղեկությունները (աչքերը փակել, ականջները փակել, ձեռքերը կապել, քիթը փակել և այլն և փորձել սահմանափակ հնարավորություններով ստացած տեղեկությունները **նկարագրել**, ապա՝ **համադրել**), ապա հետագոտել, ներկայացնել, որ նույն տեղեկությունը կարելի է տարբեր զգայարաններով զգալ: **Նկարագրել**, տարբեր առարկաների, տարբեր երևույթների վերաբերյալ տարբեր զգայարաններով ստացած տեղեկությունները: **Տարբերել** հույզերը զգացմունքներից: **Տարբերակել և արտահայտել** զգացմունքներն ու հույզերը տարբեր միջոցներով (խոսքով, հայացքով, ժեստերով, միմիկայով: **Նկատել և ճանաչել** ուրիշների հույզերը՝ դրական (հիացմունք, ուրախություն, սեր, վստահություն, ապրումակցում, երախտագիտություն) և բացասական (զայրույթ, ցասում, զզվանք, ձանձրույթ, վիշտ, տխրություն, թախիծ, սարսափ, վախ և այլ), և չեզոք (զարմանք, հետաքրքրություն և այլ): **Տարբերակել** իր և մյուսների հետաքրքրությունները, ցանկություններն ու կարիքները: **Բնութագրել** հույզերը, զգացմունքները, որը երբ ենք ապրում, նկարագրել՝ ինչպես ենք արտահայտում: **Մտորել** հաշմանդամություն կամ զարգացման առանձնահատկություններ ունեցող մարդկանց մասին. Ինչպես հեշտացնել և հավասար հնարավորություններ ապահովել բոլորի համար

- **Աշխատանքային թերթիկներ՝ տարբեր տիպի առաջադրանքներով**, հարցաթերթիկներ, կարճ թեստային աշխատանքներ՝ նկարներով, խաչբառերով, հարցաթերթիկներով և այլն, վերևում թվարկված տարբեր նպատակների համար: Օրինակ՝ վարակիչ հիվանդությունների փոխանցման ուղիների և դրանց կանխարգելման (հիգիենա, պատվաստում) մասին, քայլաշարերի ընտրություն ըստ գործողություններ ցույց տվող նկարների, փոքրիկ տեքստերի, կամ սեփական ուժերով արված ցուցադրական նյութերի, նկարների հիման վրա:

- **Ներկայացումներ և մոդելավորում**

Ցույց տալ լվացվելու, ատամ լվանալու ճիշտ տեխնիկան, **հիմնավորել**, որ հիգիենայի պահպանման սովորություններ ունենալը առողջության գրավականներից մեկն է:

- **Ուսուցողական ֆիլմերի դիտումներ, քննարկում** (հիգիենայի, կոփման, հաշմանդամության և այլ թեմաներով)

Անցյալում, ներկայում և ապագայում իրենց հետ կատարված փոփոխությունների, ապրած վայրերի, այցելած տեղերի համատեքստում փորձել տարրական պատկերացումներ ունենալ՝ առաջ, հետո, հիմա, նախկինում, հետագայում հասկացությունների և դրանց ճիշտ գործածության մասին:

- **Օրինաչափություններ** (դեպքերի, իրադարձությունների և դրանց պատճառով առաջացած հույզերի, ապրումների միջև տեսնել օրինաչափություններ, օրինակ՝ օրինաչափ և կանխատեսելի է, որ դրական իրադարձությունը կառաջացնի դրական հույզեր և՛ հակառակը)

- **Պատճառ և հետևանք**, մեխանիզմ և կանխատեսում (հիգիենայի և առողջության կապը՝ հիգիենան չպահելը կարող է պատճառ դառնալ հիվանդությունների և այլն):

- **Կառուցվածք և գործառույթ** (Մարմնի տարբեր մասերի կառուցվածքի և դրանց գործառույթների միջև կապը):

- **Կայունություն և փոփոխություն** (անցյալում, ներկայում և ապագայում փոփոխություններն ու անփոփոխ երևույթները):

<ul style="list-style-type: none"> • Հարցադրումների սահմանում (բոլոր թեմաների վերաբերյալ պետք է խրախուսել, որ սովորողներն իրենք հարցադրումներ անեն) • Նկարների, գծապատկերների և սխեմաների ստեղծում (բոլոր թեմաների վերաբերյալ կարելի նկարների, գծապատկերների և սխեմաների միջոցով ներկայացնել հանձնարարությունները) 	
--	--

Միջառարկայական կապեր

<p>Մայրենի</p> <ul style="list-style-type: none"> • Կարողանա մտքերը հստակ ձևակերպել, խոսքը գրագետ կառուցել, • Լսել և հասկանալ տեղեկատվությունը, հրահանգերը, իրեն ուղղված խոսքը և համապատասխան արձագանք տալ, ձևակերպի հարցեր լսածի, տեսածի, զգացածի, ընթերցածի, իրեն հետաքրքրող հարցերի մասին և պատասխանի տրված հարցերին, • Ունկնդրածի կամ ընթերցածի վերաբերյալ հույզերն ու մտքերը արտահայտի խոսքի, ինչպես նաև ժեստերի, դիմախաղի, մարմնի լեզվի միջոցով, համապատասխան վերաբերմունք դրսևորի ուրիշների հույզերի նկատմամբ, տարբերակի հաղորդակցման խոսքային և ոչ խոսքային ձևերը: <p>Արվեստ</p> <ul style="list-style-type: none"> • Կարողանա պատկերել և արտահայտել զգացմունքներ, հույզեր միմիկայով, նկարելով, երգելով և այլ արտահայտչամիջոցներով: • Կարողանա թեմային համապատասխան նկարներ դիտել, նկարել, երաժշտություն լսել, ծեփել, կտրել: • Նկարել հիգիենայի պարագաները՝ առանձնացնելով անհատական պարագաները: • Կարողանա թեմային համապատասխան դերախաղ կատարել: <p>Տիպոլոգիա</p> <ul style="list-style-type: none"> • Պատկերացում ունենա օրվա ռեժիմի, անձնական հիգիենայի պահպանման, սեփական անձի և ուրիշների նկատմամբ հարգանքի և հոգատարության անհրաժեշտության մասին, պատկերացում ունենա սեփական մարմնի կառուցվածքի և աշխատանքի մասին: <p>Մաթեմատիկա</p> <ul style="list-style-type: none"> • Կարողանա անցյալի, ներկայի և ապագայի մասին խոսելիս ժամանակի թվագրման, հետոյի, առաջի մասին ճիշտ բառապաշար օգտագործի և պատկերացումներ ունենա: <p>Օտար լեզու</p> <ul style="list-style-type: none"> • Կարողանա ներկայանալ, պատմել իր մասին: • Լսի և հասկանա իրեն ուղղված հարցերը, ուղղի հարցեր ընկերներին: • Կարողանա պատմել իր առօրյայի, ռեժիմի մասին: <p>Տեխնոլոգիա</p> <ul style="list-style-type: none"> • Սովորի և կարողանա պահպանել անձնական հիգիենայի կանոնները: • Կարողանա պահպանել սննդի անվտանգության կանոնները՝ ուտեստներ պատրաստելիս, սովորի նայել ուտելիքի պահպանման ժամկետները՝ գնումներ կատարելիս:
--

Ներառարկայական կապեր

<ul style="list-style-type: none"> • Թեման սերտորեն կապվում է առողջ սնուցման, սննդի հիգիենայի, սննդի անվտանգության թեմայի հետ: • Ընտանիքում, դպրոցում և համայնքում ազգականների, ընկերների և հարևանների հետ փոխհարաբերություններ կառուցելու, կոնֆլիկտներից խուսափելու, հարգանքի և հանդուրժողականության թեմաների հետ:

Կապը Հանրակրթության պետական չափորոշչի տարրական դպրոցի վերջնարդյունքների հետ

Թեմային ուղղակի առնչվող՝ S26, S27, S36

Թեմային մասամբ առնչվող՝ S1, S2, S15, S16, S23

Ես		
Անվտանգություն		
Առողջ սնուցում (3 ժամ)	Արտակարգ իրավիճակներ (3 ժամ)	Վնասակար սովորություններ Վարակիչ և ոչ վարակիչ հիվանդությունների կանխարգելում (3 ժամ)
ԵՍ ԱՊԱՀՈՎ ԵՄ (9 ժամ)		
Նպատակ		
<ul style="list-style-type: none"> Գաղափար տալ առողջ և անառողջ սննդի, դրա բազմազանության, սննդամթերքի հիմնական խմբերի, օրվա ռացիոնի մասին: Խթանել առողջ և անվտանգ սնվելու սովորությունների ձևավորումը՝ պահպանել սնման նույն պարբերականությունը, կարողանալ ընտրել և գնել օգտակար և թարմ սննդամթերք: Օգնել յուրացնել, որ սնունդն է ապահովում մեր մարմնի աճը, զարգացումն ու եռանդը: Օգնել ընդլայնել անվտանգության պարզ կանոնների մասին իմացությունը, կողմնորոշվել և պահպանել անվտանգության կանոնները տանը, դպրոցում, փողոցում և բնության գրկում: Ձևավորել արտակարգ իրավիճակներում կողմնորոշվելու, համապատասխան օգնություն կանչելու և ցուցումներին հետևելու հմտություններ: Օգնել գիտակցել շրջակա միջավայրի (աղտոտման և մաքրության) ազդեցությունը առողջության վրա, ինչպես նաև իմանալ որոշ վարակիչ հիվանդությունների տարածման և դրանց կանխարգելման ուղիների մասին: 		
Առարկայի ընդհանրական չափորոշչային վերջնարդյունքներ		
<p>Առողջ սնուցում</p> <p>ՇԵ-ԱՍ-Վ1 Բացատրել առողջ սնուցման բնութագրիչները՝ բազմազանությունը, օրվա ռացիոնը, ընդունման պարբերականությունը և անվտանգությունը:</p> <p>ՇԵ- ԱՍ-Վ2 Բացատրել, որ սնունդը ապահովում է օրգանիզմի էներգիան, որն էլ ապահովում է ֆիզիկական ակտիվությունը:</p> <p>ՇԵ-ԱՍ-Վ3 Ներկայացնել ջրի նշանակությունը մարդու օրգանիզմի նյութափոխանակության համար:</p> <p>Արտակարգ իրավիճակներ</p> <p>ՇԵ-ԱԻ-Վ1 Յուրաքանչյուր տարբեր հնարավոր աղետների և արտակարգ իրավիճակների ժամանակ խուճապի չմատնվելու, կողմնորոշվելու, անվտանգության կանոնների և քայլերի հաջորդականության իմացություն, ցուցադրել առաջին օգնության պարզ եղանակներ:</p> <p>Վնասակար սովորություններ, Վարակիչ և ոչ վարակիչ հիվանդությունների կանխարգելում</p> <p>ՇԵ-ԱՎ-Վ1 Տարբերակել վնասակար սովորությունները՝ այդ թվում ծխելը, ալկոհոլ և այլ վնասակար նյութեր օգտագործելը և խուսափել դրանցից, թվարկել որոշ վարակիչ հիվանդություններ և կիրառել դրանք կանխարգելելու ուղղված վարքագիծ:</p> <p>ՇԵ-ԱՎ-Վ2 Դրսևորել ռիսկերից խուսափելուն և առողջությանը միտված վարքագիծ:</p>		
Թեմայի վերջնարդյունքները		
Առողջ սնուցում		

2ՇԵ-ԱՍ-Վ1 Նկարագրել՝ ինչպիսին պետք է լինի առողջ և սննդարար ուսելիքի պարունակությունը, օրվա ռացիոնը, կարևորել նախաճաշելու սովորությունը, նկարագրել՝ ինչպես բաշխել օրվա ռացիոնը նախաճաշին, ճաշին, ընթրիքին և այլն:

2ՇԵ-ԱՍ-Վ1 Խմբավորել սննդամթերքը հիմնական խմբերի մեջ՝ ձավարեղեն/հացեղեն, մսեղեն/լոբազգիներ, միրգ, բանջարեղեն կաթնեղեն:

2ՇԵ-ԱՍ-Վ1 Տարբերակել առողջ և անառողջ սնունդը, կենդանական և բուսական ծագման սննդատեսակները:

2ՇԵ-ԱՍ-Վ2 Գիտակցել, որ սնունդը և ջուրը անհրաժեշտ են մեր մարմնի աճի, զարգացման և եռանդի համար:

2ՇԵ-ԱՍ-Վ1 Հասկանալ սննդի ընդունման նույն պարբերականության պահպանման կարևորությունը:

2ՇԵ-ԱՍ-Վ1 Գնումներ կատարելիս, կատարել ճիշտ ընտրություն՝ ընտրել առողջ սնունդ:

2ՇԵ-ԱՍ-Վ1 Տարբերել փչացած սնունդը և չուտել:

Արտակարգ իրավիճակներ

2ՇԵ-ԱԻ-Վ1 Թվարկել, թե ինչերը կարող են վտանգավոր լինել՝ տանը, դպրոցում և փողոցում:

2ՇԵ-ԱԻ-Վ1 Կիրառել անվտանգության կանոնները բնության գրկում. կենդանիներ, հրդեհ, մոլորվել և այլն:

2ՇԵ-ԱԻ-Վ1 Կողմնորոշվել արտակարգ իրավիճակներում և հետևել համապատասխան ցուցումներին:

2ՇԵ-ԱԻ-Վ1 Օգնություն խնդրել միայն վստահելի մեծահասակից կամ օգտվել համապատասխան հեռախոսահամարներից:

Վնասակար սովորություններ, Վարակիչ և ոչ վարակիչ հիվանդությունների կանխարգելում

2ՇԵ-ԱՎ-Վ1 Մեկնաբանել՝ ինչ են վնասակար սովորությունները, նշել չնախաճաշելու, եղունգ կրծելու, սնունդն ու քաղցրը չարաշահելու, համակարգչային խաղերը չարաշահելու, հեռախոսով երկար զբաղվելու վնասները:

2ՇԵ-ԱՎ-Վ1 Նշել, որ ծխախոտի ծուխը վնասակար է առողջությանը, բացատրել, որ չպետք է մնալ ծխողների շրջապատում, այլ արագ լքել տարածքը, իսկ հետո օդափոխել և զգուշացնել մեծերին, որ ծխելը վնասակար է առողջությանը:

2ՇԲ-ԲՓ-Վ2-3-4 Բացատրել, որ առողջությունը կախված է նաև շրջակա միջավայրի մաքրությունից:

2ՇԵ-ԱՎ-Վ1 Օրինակներ բերել՝ վարակիչ հիվանդությունների փոխանցման ուղիների և դրանց կանխարգելման (հիգիենա, պատվաստում)

2ՇԵ-ԱՎ-Վ1 Նշել, որ կան վարակիչ հիվանդություններ, որոնց տարածումը կախված է նաև պատվաստումներից հրաժարումից:

Բովանդակություն

- Օրվա ռացիոն, սննդամթերքի հիմնական խմբեր՝ ձավարեղեն, կաթնամթերք, միրգ, բանջարեղեն, մսամթերք
- Առողջ և անառողջ սնունդ, կենդանական և բուսական ծագման սննդատեսակներ
- Սնունդը որպես մարմնի աճի, զարգացման և եռանդի հիմնական գործոն
- Սննդի ընդունման նույն պարբերականության պահպանման կարևորությունը
- Գնումներ՝ առողջ սնունդ, առողջ և փչացած սնունդ
- Վտանգները տանը (ծակող, կտրող գործիքներ, գազօջախ, էլեկտրականություն, բարձրություն, անձանոթ, կամ ծանոթ՝ ում արարքները սխալ կամ անհասկանալի են թվում), դպրոցում (աստիճաններ, հրմշտոց, հալածանք), փողոցում (երթևեկության կանոններ), բնության գրկում (կենդանիներ, հրդեհ, մոլորվել) և այլ
- Արտակարգ իրավիճակներում կողմնորոշվելու և համապատասխան ցուցումներին հետևելու կարևորությունը:
 - Նման իրավիճակներում օգտագործվող հեռախոսահամարներ
 - Շրջակա միջավայրի մաքրությունը՝ առողջության գրավական
 - Վարակիչ հիվանդությունների փոխանցման ուղիներ և դրանց կանխարգելում (հիգիենա, պատվաստում)

Առաջարկվող գործունեության ձևեր	Խաչվող գաղափարներ
<ul style="list-style-type: none"> Խմբային, համագործակցային առաջադրանքներ Աննդամթերքները դասակարգել ըստ իրենց հատկանիշների, օրինակ՝ կենդանական, բուսական, ծավարեղեն/հացեղեն, մսեղեն/լոբազգիներ, միրգ, բանջարեղեն, կաթնեղեն: Որոշ բնորոշիչների մասին հուշող հանելուկներով ներկայացնել, թե որ աննդամթերքը ինչ անդարար, օգտակար հատկանիշներ ունի, ինչ է պետք ուտել և ինչ քանակով, ինչը չչարաշահել, որպեսզի համարվի առողջ սնուցում: Առողջ սննդի մենյուի կազմում, ընտրություն, օրվա ռացիոնին համապատասխան, բուսական և կենդանական սննդի դասակարգում, սանդղակի կազմում և այլն: Ընտրել և օրինակներ բերել, թե ինչպես է պետք պահպանել աննդամթերքների տարբեր տեսակները. փաթեթավորում/սառեցում և այլն: Բացացրել՝ ինչու է սնունդը փչանում և ինչպես է պետք վարվել հնացած սննդի հետ: Խաղերի միջոցով բացահայտել, թե ինչ վտանգներ կարող են լինել տանը՝ գազօջախ, լուցկի, կրակայրիչ, էլեկտրական սարքավորումներ, անձանոթ, որը հնարավոր է վտանգավոր է, կամ ծանոթ, որը մեզ անթույլատրելի բաներ է համոզում անել, օրինակ հարևանի տղա, որը կարող է ծխել սովորեցնել և այլն: Դերային, մարմնավորման (սիմուլյացիոն) խաղեր Դերային խաղերով կարելի է բեմականացնել տարբեր վտանգավոր իրավիճակներ և խաղարկելով փորձել ձեռք բերել ճիշտ վարքագծեր և անհրաժեշտ կանխարգելիչ քայլեր իմանալ: Կարևոր է վստահելի մեծահասակի մասին գաղափարը, որը կարող է լինել ծնողը, մեծ քույրը, եղբայրը, հարևանը, որին իր ծնողները վստահում են, ուսուցիչը և այլն, ում պետք է անպայման դիմեն, երբ իրենց հետ որևէ վախեցնող կամ անհասկանալի բան է պատահել: Իրավիճակների առաջադրում, քննարկում Վնասակար սովորությունների համատեքստում քննարկել տարբեր իրավիճակներ, պատմություններ օրինակելի և սխալ վարքի օրինակների դիտարկում, տարբերակում, մեկնաբանում: Ինչպես զերծ մնալ վնասակար նյութերի ներգործությունից, խուսափել ծխող մարդկանց կողքը գտնվելուց, հրաժարվել նման առաջարկներից, բացատրելով, որ դա առողջարար չէ: Տարբերակել ընդունելի և անընդունելի վարքի օրինակներ՝ ինչպես հասակակիցների, այնպես էլ մեծահասակների և այլն: Դաշտային աշխատանք Շրջակա տարածքում կատարել դիտումներ, գնահատում՝ մաքրության վերաբերյալ: Գնումներ կատարել՝ ընտրել առողջ և թարմ սնունդ, ընտրել թե որն ինչպես է պետք պահպանել՝ սառնարանում, պահարանում կամ այլ կերպ: Բակում, բաց տարածքում իրականացնել շարժական խաղեր՝ անվտանգության, փողոցային երթևեկության կանոնների վերաբերյալ, սիմուլյացիոն վարժություններ՝ վտանգներից խուսափելու և կողմնորոշվելու հմտությունները զարգացնող և այլն: 	<ul style="list-style-type: none"> Օրինաչափություններ Դասակարգել աննդամթերքները ըստ տարբերակիչ հատկանիշների, ինչից են ստանում, ինչով են նման, ինչով են հարուստ, խմբավորել ըստ այդ հատկանիշների՝ կենդանական, բուսական և այլն: Դասակարգել նաև վտանգները՝ տանը, փողոցում և բնության գրկում հանդիպող: Հասկանալ թե որ վտանգը որտեղ է բնորոշ: Պատճառ և հետևանք Շրջակա միջավայրի աղտոտվածությունը կարող է պատճառ դառնալ հիվանդությունների, վտանգել բույսերի, կենդանիների և մարդու կյանքը: Անառողջ սնունդը, մեր սխալ ընտրությունը, հիգիենային չհետևելը, անվտանգության կանոնները չիմանալն ու չպահելը նույնպես կարող են պատճառ լինել անցանկալի հետևանքների: Էներգիա և նյութ Ներկայացնել սնունդը որպես էներգիայի աղբյուր, բուսական և կենդանական սննդի տեսակների և մեկից մյուսը նյութերի փոխանցման և էներգիայի փոխակերպման մասին տարրական պատկերացումներ, որոնք կընդլայնվեն այլ թեմաներում: Կայունություն և փոփոխություն Վտանգները կարող են հայտնվել հանկարծակի և խախտել ցանկացած կայուն թվացող իրավիճակ: Կարող են լինել և իրավիճակներ, որոնք կխախտեն կայուն իրավիճակը ավելի երկար ժամանակում, օրինակ՝ աղտոտված միջավայրը կարող է թվալ կայուն, որովհետև ազդեցությունը կարող է տեսանելի չլինել տվյալ պահին, բայց այն կարող է անկայուն դարձնել իրավիճակը որոշ ժամանակ հետո: Շատ լավ օրինակ են համաճարակները, դրանք կարող են շատ արագ խաթարել կայուն իրավիճակը և երկարատև անկայուն իրավիճակի պատճառ դառնալ, օրինակ՝ կորոնավիրուսի համաճարակը և աշխարհի կայունության խաթարումը: Գիտատեխնիկական նորարարություն Այս համատեքստում կարելի է անդրադառնալ

<ul style="list-style-type: none"> • Ուսումնական տարբեր նպատակներով կիրառվող խաղեր Լոտո, սեղանի խաղեր տարբեր թեմաների վերաբերյալ • Դիտումներ Շրջակա տարածքի դիտումներ, լուսանկարել, համեմատել տարբեր տարածքների վիճակը, ներկայացնել • Տեսանյութերի ստեղծում Տեսանկարահանել շրջակա տարածքները, գտնել առավել աղտոտված տարածքներն ու նկարահանել, իրավիճակը բարելավելու քայլեր ձեռնարկել, պլանավորել: • Փորձեր Կարելի է տարբեր սննդամթերքների փչանալու փորձեր անել, դիտարկել, թե որ մթերքներն են շուտ փչանում, որոնք՝ ուշ, նշումներ անել, նկարագրել թարմ և փչացած սնունդը, համեմատել: • Դերային խաղեր Անվտանգության կանոնների, իրավիճակների խաղարկումը դերերով: • Աշխատանքային թերթիկներ՝ տարբեր տիպի առաջադրանքներով Լրացնել բաց թողնված բառերը, գծերով միացնել ճիշտ պատասխանները նկարներին, աղյուսակների լրացում կամ այլ տիպի առաջադրանքներով թերթիկներ: • Ուսուցողական ֆիլմերի դիտումներ, քննարկում • Խաչբառների, գլուխկոտրուկների, հանելուկների կազմում, լուծում Օգտակար սննդամթերքների վերաբերյալ հանելուկներով լոտո, երթևեկության և անվտանգության կանոնների վերաբերյալ խաչբառեր և այլն: • Պարզ հատակագծերի քարտեզների գծում, վերծանում, կողմնորոշում Ճանապարհային երթևեկության կանոնները խաղարկելու համար կարող են բախում կավիճով գծել ճանապարհ, անցում, մայթեր, անցուղի և այլն: • Նկարների դիագրամների, սահիկաշարերի, ֆիլմերի ցուցադրումը Կատարած աշխատանքների ցուցադրում: 	<p>պատվաստումներին և դրանց նշանակությանը որպես նորարարական լուծում, որն օգնել է հաղթահարել բազմաթիվ հիվանդություններ և համաճարակներ, ինչպիսիք են՝ կարմրուկը, պոլիոմիելիտը, ծաղիկը և այլն:</p>
Միջառարկայական կապեր	

Մայրենի

- Կարողանա մտքերը հստակ ձևակերպել, խոսքը գրագետ կառուցել, լսել հրահանգերը, իրեն ուղղված խոսքը և համապատասխան արձագանք տալ, լսել և հասկանալ տեղեկատվությունը
- Ձևակերպել հարցեր լսածի, տեսածի, զգացածի, ընթերցածի, իրեն հետաքրքրող հարցերի մասին և պատասխանել տրված հարցերին
- Տիրապետել հաղորդակցման խոսքային և ոչ խոսքային ձևերին:

Արվեստ

- Միմիկայի, զգացմունքների, հույզերի մասին որոշ պատկերացումներ ունենալ:
- Կարողանա թեմային համապատասխան նկարներ դիտել, նկարել, երաժշտություն լսել, ծեփել, կտրել:
- Կարողանա թեմային համապատասխան դերախաղ կատարել:
- Նկարելու միջոցով արտահայտել զգացումները, երբ պատկերացնում են վտանգներ, սեր, ընկերություն և այլն:

Ֆիզկուլտուրա.

- Առողջ սնուցման՝ որպես եռանդի աղբյուր, անձնական հիգիենայի պահպանման, շրջակա միջավայրի մաքրության պահպանման, հարգանքի և հոգատարության զարգացում, սեփական մարմնի կառուցվածքի և աշխատանքի ճանաչում:

Մաթեմատիկա

- Կարողանա աղյուսակներ, պարզ սանդղակներ կազմել, գծագրել, լրացնել, պարզագույն հաշվումներ կատարել:

Տեխնոլոգիա

- Սովորի և կարողանա պահպանել անձնական հիգիենայի կանոնները:
- Կարողանա պահպանել սննդի անվտանգության կանոնները՝ ուտեստներ պատրաստելիս, սովորի նայել ուտելիքի պահպանման ժամկետները՝ գնումներ կատարելիս:
- Կարողանա պահպանել անվտանգության կանոններ, չխաղալ գազօջախի, լուցկու, կրակայրիչի, էլեկտրական սարքավորումների

Օտար լեզու

- Անվորի բառապաշար՝ սովորելով համապատասխան բառեր
- Ամրապնդել օտար լեզվով հնչող պարզ հրահանգների ընկալումը:

Ներառարկայական կապեր

- Առողջ սնուցման թեման կապվում է մարմնի կազմության, մարսողության, զգայարանների՝ համի, հոտի զգացողության, ատամների, բերանի խոռոչի, ձեռքերի, սննդի հիգիենայի հետ:
- Բնության մեջ անվտանգության թեման կապվում է բնության, բույսերի և կենանիների, տեղանքի ուսումնասիրության, բնության գրկում դիտումների հետ:
- Վնասակար սովորություններ և վարակիչ հիվանդությունների կանխարգելումը կապվում է հիգիենայի պահպանման հետ, ինչպես նաև, ինքնագնահատման, ինքնաճանաչման և ինքնարտահայտման թեմաների հետ:
- **2ՇԲ-ԲՓ-Վ2-3-4** (Բացատրել, որ առողջությունը կախված է նաև շրջակա միջավայրի մաքրությունից) Այս վերջնարդյունքը ուղիղ կապվում է «Բնություն» հիմնական գաղափարի վերջնարդյունքների հետ, բայց իրագործվում է նաև վնասակար սովորությունների թեմայի միջոցով, քանի որ հաճախ շրջապատն աղտոտելը սովորույթ է դառնում, որը պետք է հաղթահարել ու ձեռք բերել խնայող, չաղտոտող և մաքուր պահող սովորույթներ:

Կապը Հանրակրթության պետական չափորոշի տարրական դպրոցի վերջնարդյունքների հետ

Թեմային ուղղակի առնչվող՝ S33, S34, S36

Թեմային մասամբ առնչվող՝ S1, S2, S7, S15, S16, S23, S24, S28.

Ես և մարդիկ		
Փոխհարաբերություններ		
Ընտանիք (3 ժամ)	Դպրոց (3 ժամ)	Համայնք (3 ժամ)
ԹԵՄԱ ԵՍ ՄԵՆԱԿ ՉԵՄ (9 ժամ)		
Նպատակ		
<ul style="list-style-type: none"> • Հստակեցնել և ամբողջացնել երեխաների պատկերացումներում տուն, ընտանիք, տոհմ, գերդաստան գաղափարները, ձևավորել դերերի գիտակցման, սեփական դերին համապատասխան գործողությունների, ընտանեկան տոների, հանգստի, ժամանցի կազմակերպման, ինչպես նաև՝ ազգականների հետ արդյունավետ շփման և հոգատար վերաբերմունք դրսևորելու հմտություններ: • Ձևավորել իսկական ընկերոջ մասին պատկերացումներ, օգնել ձեռք բերել ընկերներ և պահպանել ընկերությունը, օգնել գիտակցել, որ ընկերությունը պայմանավորված է սեռով, թե աղջիկները, թե տղաները կարող են լավ ընկերներ լինել: • Ընդլայնել գիտելիքները սեփական բնակավայրի, մարդկանց, զբաղմունքների, սովորույթների, առանձնահատկությունների, տեսարժան վայրերի, բուսական և կենդանական աշխարհի մասին՝ ձևավորելով հոգատար, խնայող և պատասխանատու վարքագիծ: 		
Առարկայի ընդհանրական չափորոշչային վերջնարդյունքներ		
<p>Ընտանիք</p> <p>ՇՄ-ՓԸ-Վ1 Բնութագրել տարբեր կազմով ընտանիքները՝ մեծ, փոքր, փոփոխություններն ընտանիքում, նկարագրել դերերը, պարտականություններն ու կարիքներն ընտանիքում:</p> <p>ՇՄ-ՓԸ-Վ2 Ներգրավվել տարբեր խմբերի խմբային գործունեություններում՝ այդ թվում ընտանիք, դասարան, համայնք և այլն, մեկնաբանել խմբերի առանձնահատկությունները, խմբային դերերը, փոխհարաբերությունները և խմբային գործունեության արդյունքը:</p> <p>Դպրոց</p> <p>ՇՄ-ՓԴ-Վ1 Պահպանել դպրոցական համակեցության կանոնները, բերել մեծահասակների և հասակակիցների վարքագծի դրական և բացասական ազդեցության օրինակներ, հստակ արտահայտել ցանկություններն ու կամքը, թույլ չտալ որևէ բան առանց իր ցանկության, երբ դա կարող է վնասել իրեն:</p> <p>ՇՄ-ՓԴ-Վ2 Կարևորել փոխօգնությունը, միմյանց հանդեպ բարեհաճ և փոխվստահող փոխհարաբերություններ ստեղծելու կամք ցուցաբերել:</p> <p>ՇՄ-ՓԴ-Վ3 Բնութագրել և համապատասխանել բնութագրին, թե ինչպիսին պետք է լինի ընկերը, ո՞ր որակներն են բնորոշ լավ ընկերոջը, կարողանալ ձեռք բերել և պահպանել ընկերությունը:</p> <p>ՇՄ-ՓԴ-Վ4 Բացատրել, օրինակներ բերել, որ բոլոր մարդիկ կարող են ունենալ նախասիրություններ և հետաքրքրություններ, որոնք պայմանավորված են անհատական առանձնահատկություններով և անձնային որակներով:</p> <p>Համայնք</p>		

ՇՄ-ՓՀ-Վ1 Դրսևորել հարգալից, հոգատար, պատասխանատու և անխտրական վերաբերմունք հասարակության տարբեր խմբերի ներկայացուցիչների հանդեպ:

ՇՄ-ՓՀ-Վ2 Նկարագրել ազգային ինքնությունը սահմանող խորհրդանիշներն ու իրադարձությունները՝ անցյալի և ներկայի. տարբերակել իրենց ազգայինը այլ երկրների հետ համեմատության համատեքստում և զարգացնել դրանցից իրենց հուզական կախվածությունը:

ՇՄ-ՓՀ-Վ3 Կողմնորոշվել տարածքում, բնութագրել տարբեր կառույցների, հաստատությունների նշանակությունը, դրանցից օգտվելու ձևերը:

ՇՄ-ՓՀ-Վ4 Ճանաչել իր բնակավայրի, հայրենիքի բնության և պատմամշակութային արժեքները, գնահատել և խնայող և պատասխանատու վերաբերմունք ցուցաբերել դրանց հանդեպ:

Թեմայի վերջնարդյունքները

Ընտանիք

2ՇՄ-ՓԸ-Վ1 Բացատրել դերերն ընտանիքում, իրավունքներն ու պարտականություններն ընտանիքում, ինչպես են դրանք փոփոխվում ժամանակի ընթացքում:

2ՇՄ-ՓԸ-Վ1-2 Ցուցադրել սեփական դերի գիտակցումն ու համապատասխան գործողությունները

2ՇՄ-ՓԸ-Վ1-2 Ցուցաբերել հոգատար վերաբերմունք մերձավորների նկատմամբ:

2ՇՄ-ՓԸ-Վ1 Նկարագրել ինչպես են տարբեր ընտանիքները կազմակերպում հանգիստը, ժամանցը, տոները

2ՇՄ-ՓԸ-Վ1 Արդյունավետ շփվել ընտանիքում, ծնողների, տատիկ-պապիկների, քույրերի ու եղբայրների, այլ ազգականների հետ:

Դպրոց

2ՇՄ-ՓԴ-Վ2 Կարևորել հարգանքը, փոխօգնությունը, պատրաստակամ լինել և կիսել ունեցածը, երբ դրա անհրաժեշտությունը կա

2ՇԵ-ԻՄ-Վ3 Հարգել միմյանց տարբերությունները, նշել, որ բոլորը տարբեր կարողություններ ունեն, ինչպես նաև հաշմանդամություն և զարգացման առանձնահատկություններ ունեցող մարդիկ

2ՇՄ-ՓԴ-Վ1-3 Նկարագրել և օրինակներ բերել, թե ինչը կարող է օգնել կամ խանգարել ընկերությանը

2ՇՄ-ՓԴ-Վ3 Բնութագրել, թե ինչպիսին պետք է լինի ընկերը, ո՞ր որակներն են բնորոշ լավ ընկերոջը և, որ դրանք պայմանավորված չեն սեռով

2ՇՄ-ՓՀ-Վ1,

2ՇՄ-ՓԿ-Վ1 Արդյունավետ շփվել, կարողանալ լսել միմյանց, հարգել միմյանց կարծիքը, հաշտության ճանապարհներ գտնել

2ՇՄ-ՓԴ-Վ1 Բերել մեծահասակների և հասակակիցների վարքագծի դրական և բացասական ազդեցության օրինակներ:

Համայնք

2ՇՄ-ՓՀ-Վ3 Կողմնորոշվել տարածքում, իմանալ հասցեն, տան, դպրոցի, կարողանալ կարդալ ցուցանակները, իմանալ կանոնները, դրանց կարևորությունն ու պահպանումը:

2ՇՄ-ՓՀ-Վ1-3-4 Նկարագրել իրենց բնակավայրում ապրող մարդկանց, զբաղմունքները, սովորույթները, առանձնահատկությունները:

2ՇՄ-ՓՀ-Վ3 Բացատրել, թե ինչի համար են դպրոցը, հիվանդանոցը, բանկը, ոստիկանությունը, զբոսայգին (հարևանությամբ գտնվող տարբեր հանրային նշանակություն ունեցող կառույցներ), ինչպես օգտվել դրանցից:

2ՇՄ-ՓՀ-Վ2-4 Համեմատել և բնութագրել քաղաքի և գյուղի տարբերությունները, առանձնահատկությունները:

2ՇՄ-ՓՀ-Վ4 Թվարկել և նկարագրել տվյալ բնակավայրի տեսարժան վայրերն ու հուշարձանները, բնակավայրի բնությունը, բույսերն ու կենդանական աշխարհը

2ՇՄ-ՓՀ-Վ1-4 Ցուցաբերել պատասխանատու, խնայող և հոգատար վերաբերմունք շրջակա միջավայրի և բնակիչների հանդեպ

Բովանդակություն

- Դերերն ընտանիքում, իրավունքներն ու պարտականություններն ընտանիքում, դրանց փոփոխությունը ժամանակի ընթացքում: Սեփական դերի գիտակցումն ու համապատասխան գործողությունները:
- Հոգատար վերաբերմունք մերձավորների նկատմամբ, արդյունավետ շփում ընտանիքում:
- Տարբեր ընտանիքներում կազմակերպվող հանգիստը, ժամանցը, տոները:
- Ընկերություն, ընկերոջը բնորոշ որակներ, լավ և վատ արարք, ինչպես պահպանել ընկերությունը, հաշտություն, արդյունավետ շփում
- Իրենց բնակավայրում ապրող մարդիկ, նրանց զբաղմունքները, սովորույթները, առանձնահատկությունները
- Հարևանությամբ գտնվող ծառայությունները, դրանց նշանակությունը, ինչպես օգտվել դրանցից քաղաքի և գյուղի տարբերությունները, առանձնահատկությունները
- Տվյալ բնակավայրի տեսարժան վայրերն ու հուշարձանները, բնակավայրի բնությունը, բույսերն ու կենդանական աշխարհը
- Պատասխանատու, խնայող և հոգատար վերաբերմունք շրջակա միջավայրի և բնակիչների հանդեպ

Առաջարկվող գործունեության ձևեր

Խաչվող գաղափարներ

- **Խմբային, համագործակցային առաջադրանքներ**
Ստորև ներկայացված բոլոր առաջադրանքները կարելի է հանձնարարել խմբերով և համագործակցելով կատարել:
Նկարագրել, բացատրել, որ ընտանիքում ամեն մեկն իր դերն ու պարտականություններն ունի, խաղերի միջոցով **ընտրել և բաշխել** այդ դերերը, **մեկնաբանել**, ով ինչ իրավունք և պարտականություն ունի: **Ընտրել և առանձնացնել** այն պարտականությունները, որ բոլորինն են, **թվարկել** դրանք, **համեմատել, հակադրել**: Կարելի է համապատասխան պատկերների միջոցով **ընտրել**, թե ընտանիքներն ինչի կարիք ունեն՝ տանիքի, հագուստի, սննդի, մաքրության, խնամքի, սիրո:
Կարելի է նաև՝ հոգատար վերաբերմունքի տարբեր դրսևորումների նկարներ կամ փոքրիկ տեքստեր, բառեր տրամադրել, որպեսզի երեխաներն **ընտրեն** մերձավորների հանդեպ ընդունելի և ցանկալի վերաբերմունքները:
Նկարագրել և համեմատել, թե որ ընտանիքն ինչպես է կազմակերպում իր հանգիստը, տոները, ժամանցը, ազգային և պետական տոները:
- **Իրավիճակների առաջադրում, քննարկում**
Տարբեր իրավիճակների, պատմությունների **քննարկում**, օրինակելի և սխալ վարքի **դիտարկում**, **տարբերակում**, **մեկնաբանում**:
- **Դաշտային աշխատանք**
Շրջակա տարածքում **դիտումներ կատարել, նշել** հասցեն, **գծել կամ նկարագրել** դպրոցի ճանապարհը, **դիտարկել** մոտակա կառույցներն ու նրանց նշանակությունը, **կողմնորոշվել** տարածքում: Տարածքը **գնահատել** մաքրության

- **Անհատ և հարաբերություններ**
Փորձել հասկանալի դարձնել յուրաքանչյուրի դերը դրական, հարգալից, առողջ և պատասխանատու փոխհարաբերություններ ստեղծելու հարցում: Քննարկել յուրաքանչյուր
- **Ժամանակ և տարածություն**
Քննարկել ժամանակի ընթացքում ընտանիքների փոփոխությունները, իրենց և հարազատների մեծանալը, տատիկ-պապիկների օրինակով, նախնիների հեռանալը, բայց և հիշողության, նրանց ժառանգության մասին սերունդների հերթագայումը, բնակավայրերի փոփոխությունը,
- **Անհատ և մշակույթ**
Իրենց բնակավայրում եղած մշակութային օբյեկտների վերաբերյալ տեղեկություններ, արհեստների, այդ արհեստներով զբաղվող մարդկանց, մշակութային օբյեկտների ստեղծման, ստեղծողների մասին պատմությունների հետ ծանոթացում: Ավանդույթների, երգերի, պարերի, խոհանոցի առանձնահատկությունների մասին տեղեկություններ և այլն:
- **Օրինաչափություններ**
Օրինաչափություններ կարող են տեսնել ցանկացած պարբերաբար կրկնվող և ժամանակի ընթացքում համեմատաբար անփոփոխ գործողություններում՝ ընտանիքում (օրինակ՝ օրինաչափ է սերունդների հերթագայումը, ծնողների կողմից սերն ու խնամքը և այլն), համայնքում, բնության մեջ և այլն:

<p>տեսանկյունից: Ընտանիքի համար որոշ գնումներ կատարել՝ ընտրել առողջ և թարմ սնունդ: Բակում, բաց տարածքում իրականացվող շարժական խաղեր՝ անվտանգության, փողոցային երթևեկության կանոնների վերաբերյալ, սիմուլյացիոն վարժություններ՝ վտանգներից խուսափելու և կողմնորոշվելու հմտությունները զարգացնող և այլն:</p> <ul style="list-style-type: none"> • Դիտումներ Շրջակա տարածքի դիտումներ, լուսանկարել, համեմատել տարբեր տարածքների վիճակը, ներկայացնել: Համայնքի տեսարժան վայրերը բացահայտել, ամենահին ծառը, ամենհին տունը, ամենատարեց բնակիչը... պարզել դրանց պատմություններն ու գրի առնել, ներկայացնել: Իրենց տարածքին բնորոշ բնության և կենդանական աշխարհի հետ ծանոթացում, դիտարկումներ և նշումներ անելով, դրանք արտահայտելով այլ գործնական աշխատանքների մեջ՝ այստեղ թվարկված: • Տեսանյութերի ստեղծում Շրջել համայնքում, և բջջային հեռախոսներով նկարահանել տեսարժան վայրերն ու հետաքրքիր, դիտարժան երևույթները՝ բնության և մշակութային օբյեկտների (փոքրիկ տեսանյութերի ձևով): • Դերային խաղեր Ընկերների հետ վեճերի, կոնֆլիկտային իրավիճակների խաղարկում և հաշտության տարբերակների առաջարկում: • Աշխատանքային թերթիկներ՝ տարբեր տիպի առաջադրանքներով Լրացնել բաց թողնված բառերը, գծերով միացնել ճիշտ պատասխանները նկարներին, աղյուսակների լրացում կամ այլ տիպի առաջադրանքներով թերթիկներ՝ ընտանեկան տոների, դերերի և պարտականությունների վերաբերյալ, ընտանիքի կարիքների մասին և այլն: • Պարզ հատակագծերի քարտեզների գծում, վերծանում, կողմնորոշում Կողմնորոշվել համայնքում, գծել տանիք դպրոց ճանապարհը և ճանապարհին գտնվող կառույցներն ու տները, ծառերը և այլն: Եթե գնում են խանութ գնումների՝ նաև խանութի ճանապարհը և այլն: • Նկարների դիագրամների, սահիկաշարերի, ֆիլմերի ցուցադրումը Կատարած աշխատանքների ցուցադրում 	<ul style="list-style-type: none"> • Պատճառ և հետևանք, մեխանիզմ և կանխատեսում Պատճառին և հետևանքին կարելի է անդրադառնալ գրեթե բոլոր թեմաներում՝ և՛ փոխհարաբերությունների, ընտանիքում, ընկերության մեջ, ամենուր կատարվող փոփոխությունների, քաղաքի և գյուղի տարբերության, պատասխանատու վերաբերմունքի հետևանքների համատեքստում և այլն: • Մասշտաբ, համամասնություն և քանակ Քաղաքի և գյուղի համեմատության համատեքստում կարելի է անդրադառնալ, բնակչության թվի, ծառայությունների, տրանսպորտի և այլ կառույցների առկայության և դրանց մասշտաբների նկարագրությանը: • Համակարգեր և մոդելներ Ընտանիքի մոդելի ընկալում, տարբեր մոդելների կիրառում, փոքր, մեծ ընտանիքների օրինակով Դպրոցի, դասարանի մոդելի ընկալում, նկարագրություն, համայնքում գործող տարբեր համակարգերի (ընտանիք, դպրոց, հիվանդանոց, առևտրի կենտրոններ) ընկալում և համայնքը՝ որպես մեկ համակարգ ընկալումը • Կայունություն և փոփոխություն Հասկանալ, որ ընտանիքները փոփոխվում են ժամանակի ընթացքում, իրենց ընտանիքի պատմության, անցյալի և ներկայի վերաբերյալ տեղեկությունները համադրելու միջոցով, համայնքում կատարվող փոփոխությունները, ժամանակի գծային ընկալումը՝ անցյալից ապագա:
Միջառարկայական կապեր	
<p>Մայրենի</p> <ul style="list-style-type: none"> • Կարողանա մտքերը հստակ ձևակերպել, խոսքը գրագետ կառուցել, լսել իրահանգերը, իրեն ուղղված խոսքը և համապատասխան արձագանք տալ, լսել և հասկանալ տեղեկատվությունը 	

- Ձևակերպել հարցեր լսածի, տեսածի, զգացածի, ընթերցածի, իրեն հետաքրքրող հարցերի մասին և պատասխանել տրված հարցերին
- Ընտանիքի, ընկերների, ընկերության, գյուղի քաղաքի մասին դիտարկումները կառուցի անցած տեքստերի, բանաստեղծությունների և քննարկված նյութերի վրա:

Արվեստ

- Միմիկայի, զգացմունքների, հույզերի մասին որոշ պատկերացումներ ունենալ:
- Կարողանա թեմային համապատասխան նկարներ դիտել, նկարել, երաժշտություն լսել, ծեփել, կտրել:
- Կարողանա թեմային համապատասխան դերախաղ կատարել:

Ֆիզկուլտուրա.

- Ունենա թիմային զգացողություն, համագործակցելու կարողություն, թիմային, խմբային խաղերի, վարժանքների միջոցով: Ընկերության ընկերական փոխհարաբերություններում միմյանց հանդեպ վստահության ձևավորում, կոնֆլիկտային իրավիճակների և վեճերի խաղաղ կարգավորում, հաշտություն:

Մաթեմատիկա

- Կարողանա աղյուսակ կազմել, պարզ գծագրեր անել, ճանապարհ գծել, լրացնել, պարզագույն հաշվումներ կատարել:

Տեխնոլոգիա

- Սովորի կատարել թեթև կենցաղային աշխատանքներ՝ օգնելով ընտանիքի անդամներին:
- Խմբով կամ զույգով աշխատելիս կարողանա համագործակցել, լսել ընկերներին, խուսափել կոնֆլիկտներից:

Օտար լեզու

- Ձևավորի ընտանիքի անդամները անվանող բառապաշար:
- Կարողանա օգտագործել ընտանեկան առօրյան նկարագրող բառեր և արտահայտություններ:
- Վարի երկխոսություններ, սովորի ընտանեկան առօրյային նվիրված փոքրիկ ոտանավորներ, խաղե, երգեր:

Ներառարկայական կապեր

- Ընտանիքի, տոհմի, գերդաստանի վերաբերյալ թեմաները կապվում են ինքնության գիտակցման հետ: Ընտանիքում փոխադարձ վստահության և ծնողներից ոչինչ չթաքցնելու, նրանց կողմից խնամքի և փոխօգնության թեման կապվում է ինքնության և ինքնաճանաչման թեմայի հետ: Ընտանիքում դերերի և պարտականությունների, հոգատարության և խնամքի թեման կապվում է անվտանգությունը տանը և դրսում թեմայի հետ:
- Դպրոց թեման կապվում է անվտանգությունը դպրոցում, հակումների, հետաքրքրությունների բացահայտման, փոխհարաբերությունների խաղաղ կարգավորման և արդյունավետ շփման հետ:
- **ՇՄ-ՓՀ-Վ1, ՇՄ-ՓԿ-Վ1**, (Արդյունավետ շփվել, կարողանալ լսել միմյանց, հարգել միմյանց կարծիքը, հաշտության ճանապարհներ գտնել) վերջնարդյունքը ուղիղ կապվում է և՛ «Համայնք» և՛ «Կոնֆլիկտ» թեմայի վերջնարդյունքների հետ, բայց սերտ առնչություններ ունի դպրոցի, փոխհարաբերությունների, ընտանիքի վերջնարդյունքների հետ: **2ՇԵ-ԻՄ-Վ3** (Հարգել միմյանց տարբերությունները, նշել, որ բոլորը տարբեր կարողություններ ունեն, ինչպես նաև հաշմանդամություն և զարգացման առանձնահատկություններ ունեցող մարդիկ) այս վերջնարդյունքը «Մարմինը» թեմայի վերջնարդյունք է, սակայն դրան պետք է անդրադառնալ «Դպրոց» թեմայում, որտեղ երեխաները արդեն կարող են շփվել իրենցից տարբեր այլ մարդկանց հետ:

Կապը Հանրակրթության պետական չափորոշչի տարրական դպրոցի վերջնարդյունքների հետ

Թեմային ուղղակի առնչվող՝ S19, S23, S25, S30, S34
Թեմային մասամբ առնչվող՝ S1, S2, S7, S8, S12, S15, S24

Ես և մարդիկ	
Փոխհարաբերություններ	
Իրավունքներ (2 ժամ)	Կոնֆլիկտ (2 ժամ)
ԹԵՄԱ ԻՐԱՎՈՒՆՔ ԵՎ ԿՈՆՖԼԻԿՏ (4 ժամ)	
Նպատակ	
<ul style="list-style-type: none"> • Ձևավորել դրական վերաբերմունք կանոնների և դրանց կարևորության հանդեպ, գիտակցել դրանց անհրաժեշտությունը իրենց և ուրշների իրավունքները պաշտպանելու համար, և կապը իրավունքների և պարտականությունների միջև: Ձևավորել բարեկիրթ շփման հմտություններ: • Օգնել հասկանալու արարքների և հետևանքների կապը, օրինակների վրա ցույց տալ, թե արարքներն ինչ հետևանքներ կարող են ունենալ՝ թե՛ դրական, թե՛ բացասական: • Ձևավորել փոխադարձ վստահության մթնոլորտ, որն էական է ընկերական փոխհարաբերություններում և կոնֆլիկտները խաղաղ հարթելու հիմք է հանդիսանում, ստեղծել իրավիճակներ վեճերը խաղաղ լուծելու ձևեր փնտրել գտնելու վերաբերյալ: 	
Առարկայի ընդհանրական չափորոշչային վերջնարդյունքներ	
<p>Իրավունքներ ՇՄ-ՓԻ-Վ1 Նկարագրել իրավունքների և քաղաքացիական պատասխանատվության հիմնական բաղադրիչները, որոնք հնարավորություն են տալիս իրենց հասարակությանը դուրս գալ ավելի զարգացած, ներդաշնակ ուղի: ՇՄ-ՓԻ-Վ2 Կանխատեսել իր և ուրիշների արարքների հնարավոր հետևանքները, գնահատել դրանք, ունենալ անձնական դիրքորոշում</p> <p>Կոնֆլիկտ ՇՄ-ՓԿ-Վ1 Ցուցաբերել արդյունավետ շփման, կոնֆլիկտները խաղաղ կարգավորելուն ուղղված վարքագիծ: ՇՄ-ՓԿ-Վ2 Տարբերակել բռնության տարբեր դրսևորումները հասակակիցների և մեծահասակների կողմից/միջև, հրաժարվել բռնության բոլոր ձևերից, աջակցել բռնության ենթարկվածին: ՇՄ-ՓԿ-Վ3 Տարբերակել փաստը տեսակետից: ՇՄ-ՓԿ-Վ4 Նկարագրել և բերել օրինակներ ազատության, արդարության և հավասարության, պատասխանատվության և հանդուրժողականության վերաբերյալ:</p>	
Թեմայի վերջնարդյունքները	
<p>Իրավունքներ ՉՇՄ-ՓԴ-Վ1 Պահել դասարանական կանոնները ՉՇՄ-ՓԴ-Վ1, ՉՇՄ-ՓԻ-Վ2 Մեկնաբանել, թե արարքներն ինչ հետևանքներ կարող են ունենալ, թե՛ դրական, թե՛ բացասական ՉՇՄ-ՓԻ-Վ1 Գիտակցել յուրաքանչյուրի դերը, իրավունքները, պարտականությունները դպրոցում, դասարանում:</p> <p>Կոնֆլիկտ ՉՇՄ-ՓԴ-Վ1 ՉՇՄ-ՓԿ-Վ1 Խուսափել վեճերից, կռիվներից, փորձել խոսել, հաշտվել միմյանց հետ: ՉՇՄ-ՓԿ-Վ1 Կիրառել քաղաքավարության կանոնները, պատրաստակամ լինել խմբով կամ զույգերով աշխատելիս: ՉՇՄ-ՓԿ-Վ1 Բացատրել՝ ինչ է կոնֆլիկտը և դրանք խաղաղ լուծելու ձևեր փնտրել, գտնել</p>	
Բովանդակություն	

<ul style="list-style-type: none"> • Դասարանական կանոններ • Արարքներն և հետևանքներ (դրական, թե՛ բացասական) • Յուրաքանչյուրի դերը, իրավունքները, պարտականությունները դպրոցում, դասարանում • Կոնֆլիկտը և դրանք խաղաղ լուծելու ձևերը 	
<p align="center">Առաջարկվող գործունեության ձևեր</p>	<p align="center">Խաչվող գաղափարներ</p>
<ul style="list-style-type: none"> • Խմբային, համագործակցային առաջադրանքներ Կարևոր է, որ աշակերտները հնարավորություն ունենան իրենք մշակելու իրենց դասարանական կանոնները: Դրանք պետք է առաջարկեն աշակերտները և միասին ընտրեն և ընդունեն դրանք: Պետք է կարողանան մեկնաբանել, թե արարքներն ինչ հետևանքներ կարող են ունենալ, թե՛ դրական, թե՛ բացասական: <ul style="list-style-type: none"> • Իրավիճակների առաջադրում, քննարկում Տարբեր իրավիճակների, պատմությունների քննարկում, օրինակելի և սխալ վարքի դիտարկում, տարբերակում, մեկնաբանում: • Դերային, նմանակման (սիմուլյացիոն) խաղեր, Տարբեր իրավիճակների խաղարկում, դերերի փոփոխություն, որպեսզի երեխաները հակադիր դերերում հայտնվեն ու կարողանան համադրել հույզերը, ապրումակցել մյուսներին: Տարբեր՝ դրական և բացասական վարքեր խաղարկելով ցուցադրել, թե որքան կարևոր է, որ յուրաքանչյուրն իր դերը, իրավունքները, պարտականությունները գիտակցի դպրոցում, դասարանում: Դրանց խախտման օրինակների վրա ցույց տալ հետևանքները: Կարողանալ լսել միմյանց, հարգել միմյանց կարծիքը, հաշտության ճանապարհներ գտնել: Հասկանալ՝ ինչ է կոնֆլիկտը և դրանք խաղաղ լուծելու ձևեր փնտրել, գտնել: <ul style="list-style-type: none"> • Դասարանական քննարկումներ և դեբատներ Իրավունքների և պարտականությունների շուրջ տարբեր պատմությունների քննարկում, տարբեր կարծիքների արտահայտում և հիմնավորում: • Շնորհանդեսներ՝ գրավոր, բանավոր, տեսողական Կարելի է փոքրիկ պատմություններ հորինել վեճերի և դրանց հաշտությամբ ավարտվելու մասին, կամ այդ վեճերի հետևանքների, կարելի է պատկերել նկարներով, ներկայացնել մյուսներին: • Աշխատանքային թերթիկներ՝ տարբեր տիպի առաջադրանքներով Վերևում ներկայացված բոլոր աշխատանքների համար օգտակար կլինեն տարբեր տիպի թերթիկներով, նկարներով, իրավիճակների նկարագրությամբ թերթիկները: • Ուսուցողական ֆիլմերի դիտումներ, քննարկում 	<ul style="list-style-type: none"> • Անհատ և հարաբերություններ Փորձել հասկանալի դարձնել յուրաքանչյուրի դերը դրական, հարգալից, առողջ և պատասխանատու փոխհարաբերություններ ստեղծելու հարցում: Հասկանալ իրավունքների և պարտականությունների կապը, կանոնները պահպանելու և դրանով իրենց և մյուսների իրավունքները հարգելու և չխախտելու կարևորությունը: <ul style="list-style-type: none"> • Պատճառ և հետևանք Պատճառին և հետևանքին կարելի է անդրադառնալ ողջ թեմայի ընթացքում՝ և՛ կանոնները պահել/չպահելու հետևանքները, ցանկացած արարքի՝ դրական/բացասական հետևանքները, իրավունքները խախտելու/չխախտելու, պատասխանատու վերաբերմունքի հետևանքների համատեքստում և այլն: Ուսումնասիրել կոնֆլիկտների պատճառները, դրանց հետևանքները, խուսափելու եղանակներն ու խաղաղ կարգավորումը:

<p>Իրավունքների, պարտականությունների, դպրոցական կանոնների և վեճերի վերաբերյալ ֆիլմերը կարող են շատ օգտակար լինել:</p>	
---	--

Միջառարկայական կապեր

<p>Մայրենի</p> <ul style="list-style-type: none"> • Մտքերը հստակ ձևակերպի, ձևավորի արտահայտիչ խոսք, • Հասկանա իրավունք և պարտականություն բառերը, նաև կոնֆլիկտ բառը և դրա ուղղագրությունն ու ուղղախոսությունը, բացատրելիս օգտագործի հոմանիշներ և հականիշներ՝ վեճ, կռիվ, բախում, հաշտություն, խաղաղություն, բարեկամություն և այլն, ձևակերպի հարցեր, ճիշտ կառուցի պատասխանները: <p>Արվեստ</p> <ul style="list-style-type: none"> • Դերախաղով ներկայացնի առաջադրված իրավիճակները, ձևավորի (նկարի, ապլիկացիա անի) դասարանական կանոնների պատճառ պատրաստեն: • Կարողանա տարբեր ապրումներ պատկերի, կոնֆլիկտ և հաշտություն ներկայացնող խորհրդանիշներ պատկերի: Կարողանա տարբերել երաժշտության առաջացրած զգացումները, հույզերը: <p>Մաթեմատիկա</p> <ul style="list-style-type: none"> • Կարողանա պատճառահետևանքային կապեր տեսնել, ինչպես նաև հետևանքներից կռահել պատճառները: <p>Ֆիզկուլտուրա</p> <ul style="list-style-type: none"> • Տարբեր շարժական խաղերի միջոցով, մրցակցելով, համագործակցելով ձեռք կբերեն թիմային զգացողություն, համագործակցելու կարողություն: • Ձեռք կբերեն ընկերության, ընկերական փոխհարաբերություններում միմյանց հանդեպ վստահության ձևավորում, կոնֆլիկտային իրավիճակների և վեճերի խաղաղ կարգավորում, հաշտություն: <p>Տեխնոլոգիա</p> <ul style="list-style-type: none"> • Աշխատանքային գործընթացում կարողանա պահել համերաշխության մթնոլորտ, գտնի ծագած անհաշտությունները խաղաղ լուծելու ճանապարհ: <p>Օտար լեզու</p> <ul style="list-style-type: none"> • Սովորի և օգտագործի թեմային համապատասխան բառեր, բառակապակցություններ:

Ներառարկայան կապեր

<ul style="list-style-type: none"> • Իրավունքների և կոնֆլիկտների վերաբերյալ թեման կապվում է և համայնքի, ընտանիքի, ինքնաճանաչման թեմաների հետ, քանի որ սերտ առնչություն ունի անհատի դիքորոշումների, մանդկանց հանդեպ վերաբերմունքի, բարեվարքության և արդյունավետ շփման հետ: • 2ՇՄ-ՓԴ-Վ1 (Պահել դասարանական կանոնները) Այս թեմայում նույնպես տեսնում ենք այլ թեմայի՝ («Դպրոց») վերջնարդյունքի հետ անմիջական կապը:

Կապը Հանրակրթության պետական չափորոշչի տարրական դպրոցի վերջնարդյունքների հետ

Թեմային ուղղակի առնչվող՝ S9, S22, S25
Թեմային մասամբ առնչվող՝ S1, S2, S7, S8, S16, S23, S24

Ես և բնություն	
Բնության բազմազանություն Փոխազդեցություններ	
Օբյեկտներ՝ կենդանի, անկենդան (4 ժամ)	Կենդանի բնության օբյեկտները (4 ժամ)
ԲՆՈՒԹՅՈՒՆՆ ԻՄ ՇՈՒՐՁ (8 ժամ)	
Նպատակ	
<ul style="list-style-type: none"> • Օգնել տարբերակել կենդանի և անկենդան բնության, մարդու և բնության ստեղծած օբյեկտները՝ նկարագրելով դրանց առանձնահատկությունները: • Գաղափար տալ պարզ էկոհամակարգերի մասին, տեսնել և նկարագրել բնության բազմազանությունը: • Օգնել բացահայտել, որ կենդանի բնությունը կարիք ունի ջրի, օդի, լույսի, ջերմության և բնակության վայրի՝ կատարելով դիտարկումներ և փորձեր: • Օգնել աշակերտներին փորձերով և դիտումներով համոզվել բույսերի և կենդանիների միջև առկա փոխկախվածության մեջ՝ օրինակներ բերելով: 	
Առարկայի ընդհանրական չափորոշչային վերջնարդյունքներ	
<p>Օբյեկտներ՝ կենդանի և անկենդան</p> <p>ՇԲ-ԲՕ-Վ1 Տարբերակել և բնութագրել կենդանի և անկենդան բնության օբյեկտները, մեկնաբանել դրանց միջև առկա փոխկախվածությունը և փոխազդեցությունները:</p> <p>ՇԲ-ԲՕ-Վ2 Ներկայացնել տարբեր գործոնների՝ եղանակ, քամի, տաք և սառը ջուր, ջրի քանակ և այլն, ազդեցությունը բույսերի աճի և զարգացման վրա:</p> <p>ՇԲ-ԲՕ-Վ3 Բնութագրել տարբեր տեղանքներին բնորոշ կենդանական, բուսական աշխարհը՝ ներառյալ մարդկանց, բազմազանությունն ու միջավայրին հարմարվողականությունը, այդ բազմազանության պահպանության անհրաժեշտությունը: .</p> <p>Կենդանի բնության օբյեկտները</p> <p>ՇԲ-ԲԿ-Վ1 Նկարագրել, հիմնավորել, որ բնության մեջ գտնվող բուսական և կենդանական տեսակները դասակարգվում են ըստ տարբեր բնութագրերի, բերել տարբեր դասակարգումների օրինակներ:</p> <p>ՇԲ-ԲԿ-Վ2 Դիտարկել և նկարագրել բույսերի հիմնական մասերը, նկարագրել դրանց հիմնական գործառնությունները, հետազոտել, ներկայացնել սերմերի ծլման, աճի գործընթացը և դրա համար անհրաժեշտ պայմանները:</p> <p>ՇԲ-ԲԿ-Վ3 Դիտարկել և բացատրել, որ բոլոր կենդանի օրգանիզմները բազմանում են և առաջացնում են իրենց նման, բայց ոչ կրկնօրինակ սերունդ:</p> <p>ՇԲ-ԲԿ-Վ4 Բացատրել, թե մարդը, կենդանիները և բույսերը որտեղից են ստանում իրենց սնունդը, նշելով, որ բույսերը արեգակնային էներգիայի հաշվին ստեղծում և կուտակում են սննդանյութեր, իսկ մարդը և կենդանիները սնվում են բույսերով կամ այլ կենդանիներով, սնման շղթաների օրինակներ բերել:</p>	
Թեմայի վերջնարդյունքները	
<p>Օբյեկտներ՝ կենդանի և անկենդան</p> <p>2ՇԲ-ԲՕ-Վ1 Նկարագրել անկենդան բնությունը՝ որպես կենդանիների, բույսերի և մարդկանց բնակության միջավայր:</p>	

2ՇԲ-ԲՕ-Վ1 Համեմատել և տարբերակել շրջապատի օբյեկտները՝ մարդու և բնության կողմից ստեղծված:

2ՇԲ-ԲՕ-Վ1 Ներկայացնել, թե մարդը ինչ է ստանում բնությունից (սնունդ, շինանյութ, դեղաբույսեր, գեղագիտական նշանակություն)

2ՇԲ-ԲՕ-Վ1 Ճանաչել բնության անկենդան և կենդանի օբյեկտները, կարողանալ տարբերակել դրանք՝ ելնելով նրանց առանձնահատկություններից:

2ՇԲ-ԲՕ-Վ1 Հետազոտել, ներկայացնել պարզ էկոհամակարգեր

2ՇԲ-ԲՕ-Վ2 Դիտարկել և փորձերի օգնությամբ համոզվել, որ կենդանի բնությունը կարիք ունի ջրի, օդի, լույսի, ջերմության և բնակության վայրի:

2ՇԲ-ԲԿ-Վ4 Դիտարկել, նկարագրել բույսերի և կենդանիների փոխկախվածությունը, սնդային շղթաների օրինակներ բերել

Կենդանի բնության օբյեկտները

2ՇԲ-ԲՕ-Վ1 Նկարագրել, բնութագրել կենդանի բնության տարրերը, ինչով են տարբերվում անկենդան բնությունից:

2ՇԲ-ԲԿ-Վ1 Դիտարկել բույսերի բազմազանությունը. խմբավորել դրանք մշակովի և վայրի, ծաղկող և չծաղկող, ցամաքային և ջրային, ծառեր, թփեր, խոտաբույսեր և այլ դասակարգումներում, բերել օրինակներ:

2ՇԲ-ԲԿ-Վ1 Խմբավորել կենդանիները ըստ վայրի և ընտանի տեսակների

2ՇԲ-ԲԿ-Վ4 Բնութագրել և օրինակներ բերել բույսերի՝ որպես մարդու և կենդանիների հիմնական սնունդ և այլ կենսական նշանակության ունեցող պարագաների աղբյուր:

Բովանդակություն

- Կենդանի և անկենդան բնության օբյեկտների առանձնահատկությունները:
- Պարզ էկոհամակարգեր՝ անտառի, լճի, ջրամբարի, անապատի կենդանաական աշխարհի օրինակով:
- Օդը, ջուրը, լույսը, ջերմությունն ու բնակության վայրը՝ որպես ապրելու անհրաժեշտ պայմաններ:
- Բույսերի և կենդանիների փոխկախվածությունը, սննդային շղթաներ:
- Բույսերի բազմազանությունը՝ մշակովի, վայրի, ծառեր, թփեր, խոտաբույսեր, ցամաքային, ջրային, ծաղկող, չծաղկող և այլն: Բույսերի նշանակությունը մարդու և կենդանիների կյանքում:
- Ընտանի և վայրի կենդանիներ

Առաջարկվող գործունեության ձևեր	Խաչվող գաղափարներ
<ul style="list-style-type: none"> • Դիտումներ <p>Դիտարկել, թե շուրջն եղած օբյեկտներն ինչ ընդհանրություններ ու տարբերություններ ունեն: Դուրս գալ բույսերի գրկում դիտումների և նշումներ կատարել, որոնց կարելի է բնորոշել կենդանի, որոնց՝ ոչ, և ինչու: Նկարագրել և պնդումներ անել՝ մեկնաբանություններով: Տարբերակել և դասակարգել ըստ առանձնահատկությունների, օրինակ՝ անկենդան բնությունը չի ապրում կամ մեռնում, իսկ կենդանի բնությունն ապրում է և մեռնում: Գտնել այլ բնորոշիչներ, որոնցով դրանք առանձնանում են:</p> <p>Խմբավորել, ապա դասակարգել բույսերը ըստ տեսանելի առանձնահատկությունների, ելնելով չափսերից, բարձրությունից, կյանքի տևողությունից և այլն՝ ծառեր, թփեր, խոտաբույսեր: Հարցերով դուրս բերել նաև մշակովի և վայրի բույսեր, ցամաքային և ջրային բույսեր բաժանումը և այլն:</p>	<ul style="list-style-type: none"> • Օրինաչափություններ <p>Տարբերակել կենդանի և անկենդան օբյեկտները ըստ որոշ դիտարկելի որակների և բնութագրիչների, դասակարգել դրանք ըստ այդ բնութագրերի, օրինակ՝ կենդանի օբյեկտները ծնվում են, սնվում են, աճում են, բազմանում են, մահանում են...</p> <p>Նկատել, որ էկոհամակարգերի տարբեր բաղադրիչները միմյանց հետ փոխկապված են և դրանցից մեկի արտամղումը կարող է փոփոխել ողջ համակարգը:</p> <p>Դասակարգել բույսերը ըստ իրենց նկատած բնորոշիչների, օրինակ՝ ծառեր, թփեր և այլն:</p> <ul style="list-style-type: none"> • Պատճառ և հետևանք <p>Կարող են նկատել, որ լույսի պակասը կարող է պատճառ լինել բույսեր նվազ աճի, կամ սննդի</p>

Բնության գրկում **դիտումներ անել**, թե ինչ բույսեր, կենդանիներ, միջատներ ու թռչուններ են ապրում, որտեղ են ապրում, ինչով են սնվում, տեսնել դրանց միջև եղած կապերը և հետևություններ անել: **Կազմել** պարզ սննդային շղթաներ:

- **Փորձեր**

Փորձեր անել համոզվելու համար, որ օդը, ջուրը և լույսը բույսերի աճի համար անհրաժեշտ են: **Պայմանները փոփոխելով** կարող են **տեսնել** տարբեր արդյունքներ, որից պետք է պարզ **եզրահանգումների գալ**: Նշումներ կատարել և ամփոփել: Նման փորձեր կարող են անել, թե դպրոցում, թե տանը:

Բույսերի սերմեր **ծլեցնել**՝ ցորեն, լոբի, ոսպ և դիտարկումներ անել, գրանցումներ կատարել, ծանոթանալ բույսերի մասերին, դրանք նկարագրել և պարզել, թե որն ինչ գործառույթ է կատարում:

- **Հետազոտական առաջադրանքներ**

Կարող են փոքրիկ հետազոտական առաջադրանքներ անել, բույսերի, ծաղիկների հետ՝ թողնելով դրանք առանց ջրի, ջրի մեջ, արևի տակ, ստվերում, ամբողջովին մութ տեղում և այլն, և **արդյունքները գրանցել**:

- **Շնորհանդեսներ՝ գրավոր, բանավոր, տեսողական**

Կատարած դիտումների, փորձերի արդյունքների **ներկայացում**՝ տարբեր միջոցներով:

- **Խմբային և համագործակցային աշխատանքներ**

Խմբային դերային և համագործակցային խաղերով ցույց տալ էկոհամակարգերի ներսում եղած փոխկախվածությունները: Հետևություններ անել:

- **Աշխատանքային թերթիկներ՝ տարբեր տիպի առաջադրանքներով**

Փորձերի և դիտումների համար կարելի է օգտագործել աշխատանքային թերթիկներ, որոնցում ուղղորդումներ կան, թե ինչպես կատարեն դիտումները, ինչերին ուշադրություն դարձնեն, լրացնեն և այլն:

- **Ներկայացումներ և մոդելավորում**

Էկոհամակարգերի պարզ մոդելներ ներկայացնել նկարելով՝ անտառի, լճի և այլ պարզ օրինակներով:

- **Գիտական բառապաշարի և լեզվի գործածում**

Կարևոր է, որ երեխաները **սկսեն օգտագործել** բնագիտական եզրույթներն ըստ անհրաժեշտության, կիրառության և **հասկանալով**, օրինակ բույսերը ծլեցնելիս՝ սերմ, ծիլ, արմատ, ցողուն, տերև և այլն:

- **Նկարների, գծապատկերների և սխեմաների ստեղծում**

Վերը թվարկված բոլոր տիպի աշխատանքներն անելիս կարելի է **նկարել, գծել, սանդղակներ կազմել**, որը կօգնի ավելի լավ պատկերացնել և յուրացնել նյութը:

- **Էքսկուրսիաներ**

պակասը կարող է կենդանիների տեղաշարժի և տարածքը փոխելու պատճառ լինել, այսպիսի պատճառահետևանքային կապերը բազմաթիվ են այս թեմայում և պետք է ցանկացած հարմար օրինակի վրա շեշտադրումներ անել:

- **Համակարգեր և մոդելներ**

Էկոհամակարգի օրինակով, տարրական պատկերացում տալ համակարգի մասին՝ տարբեր բաղադրիչների միջև փոխադարձ կապերը ցույց տալու միջոցով:

- **Էներգիա և նյութ**

Պարզ սննդային շղթաների միջոցով տարրական պատկերացում տալ, որ սնունդը եռանդ է տալիս, եթե չսնվեն կենդանիները չեն կարող վազել, որս անել, ապրել, ինչպես նաև մարդիկ, բույսերը:

- **Կառուցվածք և գործառույթ**

Օրինակ, կարելի է խոսել բույսերի արմատների մասին, որոնք հողից ջուր են ստանում, կամ գազանների բերանի և ատամների մասին, որոնք օգնում են սնունդն ուտել: Դրանք իրար նման կառուցվածք ունեն և նույն նպատակի համար են գործածվում: Կամ աչքերը, ականջները և այլն: Պետք է ցույց տալ տարբեր կենդանիների կամ բույսերի մոտ նույն գործողությունն իրականացնող մասերի նմանությունը:

- **Կայունություն և փոփոխություն**

Դիտարկել, ցույց տալ, տարբեր տեղանքներում, կենդանիների և բույսեր հետ ժամանակի ընթացքում կատարվող փոփոխությունները: Թռչունների չվելը և վերադառնալը, մեղունների գարնանն ակտիվանալը, ծառերի ծաղկելն ու պտղակալելը... և այլն:

<p>Բույսերի և կենդանիների բազմազանության, մեր տարածաշրջանում տարածում ունենցող ֆաունայի և ֆլորայի հետ ծանոթացման լավ հնարավորություն են էքսկուրսիաները՝ բուսաբանական այգիներ, բնության թանգարաններ և այլն: Կարելի է նաև ցանկացած նպատակով էքսկուրսիաների ժամանակ դիտարկել, թե երեխաներն ինչպես են առնչվում, վերաբերվում բնությանը, առհասարակ շրջակա միջավայրին և բնութագրել յուրաքանչյուրին՝ գնահատել:</p> <ul style="list-style-type: none"> • Ուսուցողական ֆիլմերի դիտումներ, քննարկում • Փաստական նյութերի հետաքրքիր և խթանող ներկայացում 	
--	--

Միջառարկայական կապեր

<p>Մայրենի</p> <ul style="list-style-type: none"> • Կարողանա պատմել տեսածի մասին, կատարի հիմնավորումներ՝ օգտագործելով բնության մեջ տեսածը, համեմատելիս, վերլուծելիս ճիշտ և տեղին օգտագործի համապատասխան բնորոշիչները, կարողանա բնության վերաբերյալ կարդացած ստեղծագործություններից ունեցած տեղեկություններն օգտագործել բնության մասին դիտարկումներում, գուշակել հանելուկներ, ինքնուրույն հորինել փոքրիկ ոտանավորներ, աքրոստիկոսներ: <p>Մաթեմատիկա</p> <ul style="list-style-type: none"> • Կարողանա կազմել աղյուսակներ՝ տեսած, ուսումնասիրած տվյալները գրառելով դրանց մեջ, կամ կարդալ աղյուսակներ, դուրս գրել տվյալներ, կազմել խնդիրներ: <p>Արվեստ</p> <ul style="list-style-type: none"> • Բնության մասին գեղարվեստական նյութերի, դերախաղով ընթերցումների, ներկայացումների, թեմային համապատասխան ֆիլմերի, արվեստի այլ աշխատանքների ուսումնասիրությունների (երաժշտության, բանաստեղծությունների ունկնդրումներ, նկարների դիտում) միջոցով ամբողջացնել բնության մասին պատկերացումները՝ որպես արվեստի ստեղծման ներշնչման աղբյուր, ինքնուրույն ստեղծագործել՝ նկարել բնություն, երգեր երգել բնության մասին, կամ ստեղծագործել և այլն: <p>Ֆիզկուլտուրա</p> <ul style="list-style-type: none"> • Շարժական խաղեր բնության գրկում, խորացնել բնության ճանաչողությունը բնության գրկում փոքրիկ արշավներ միջոցով, որոնց ժամանակ կսովորեն և կցուցաբերեն անվտանգ, ապահով և հոգատար վարք բնության և այլ կենդանի էակների հանդեպ: Սովորողները պատկերացում կկազմեն բնության փոխկախվածության, սննդային շղթաների մասին: <p>Տեխնոլոգիա</p> <ul style="list-style-type: none"> • Ծեփել, բնական կամ արհեստական նյութերով պատրաստել կենդանի կամ անկենդան բնությանը վերաբերող առարկաներ: • Տնկել, ծլեցնել, խնամել սենյակային բույսեր՝ անվանելով բույսերի մասերը, ուսումնասիրելով, թե որ բույսը ինչպես կամ ինչ պայմաններում է աճում: <p>Օտար լեզու</p> <ul style="list-style-type: none"> • Բառապաշարը հարստացնել՝ անվանելով բույսերի մասերը, սննդատեսակներ, իմանա կենդանիների անունները: • Սովորել փոքրիկ ոտանավորներ, կարդալ և թարգմանել փոքրիկ տեքստեր:

Ներառարկայական կապեր

<ul style="list-style-type: none"> • «Ես և բնությունը» հիմնական հասկացության տակ եղած բոլոր թեմաները կապված են և՛ «Ես» հասկացության թեմաների հետ՝ անվտանգությունը բնության գրկում, մարմին, սնուցում թեմաների

համատեքստում, և՛ «Ես և մարդիկ» հասկացության՝ տուն, բակ, փողոց, համայնք թեմաների հետ, տնային բույսերի, բույսերից պատրաստված կենցաղային իրերի, շրջապատի, համայնքի զբաղմունքների և բնության օբյեկտների վերբերյալ ուսումնասիրությունների համատեքստում:

- Սերտորեն կապվում է նաև «Տիեզերք» հիմնական հասկացության բոլոր թեմաների հետ:

Կապը Հանրակրթության պետական չափորոշի տարրական դպրոցի վերջնարդյունքների հետ

Թեմային ուղղակի առնչվող՝ S7, S10, S11, S12, S13, S14, S19

Թեմային մասամբ առնչվող՝ S1, S2, S8, S9, S15, S16, S23

Ես և բնությունը	
Բնության բազմազանություն և փոխազդեցություններ	
Անկենդան բնության օբյեկտները (3 ժամ)	Փոփոխությունները բնության մեջ (3 ժամ)
ԲՆՈՒԹՅՈՒՆՆ ԻՄ ՇՈՒՐՁ (6 ժամ)	
Նպատակ	
<ul style="list-style-type: none"> • Օգնել գիտակցել բնության մեջ տեղի ունեցող բնական և մարդու գործունեության հետևանքով տեղի ունեցող փոփոխությունները, ինչպես նաև մարդու ներգործության բացասական հետևանքները: Նպաստել պատասխանատու վարքագծի ձևավորմանը: • Ձևավորել ճանաչողություն երկրի մակերևույթի որոշ ձևերի մասին, բնորոշել, նկարագրել շրջապատի ռելիեֆը: • Օգնել դիտարկել բնության մեջ տեղի ունեցող պարբերական երևույթները, թվարկել տարվա եղանակները՝ ըստ հերթականության և դրանց ամիսները, դիտարկել՝ ինչպես են հերթազապվում գիշեր-ցերեկը: Նկարագրել տարվա տարբեր եղանակներին մարդկանց, բույսերի, կենդանիների կյանքում կատարվող փոփոխությունները: • Իսթանել բնության մեջ դիտումներ կատարելու և դիտարկումների հիման վրա հետևություններ անելու հմտությունները: 	
Առարկայի ընդհանրական չափորոշչային վերջնարդյունքներ	
<p>Անկենդան բնության օբյեկտները</p> <p>ՇԲ-ԲԱ-Վ1 Ճանաչել երկրի մակերևույթի հիմնական ձևերը, բնորոշել, նկարագրել իր շրջապատի ռելիեֆի տարբեր ձևերը՝ տափարակ, բլուր, սար, լեռ, գետ, լիճ, ծով և այլն:</p> <p>ՇԲ-ԲԱ-Վ2 Բնութագրել և նկարագրել անկենդան բնությունը՝ որպես կենդանիների, բույսերի և մարդկանց բնակության միջավայր՝ օդը, ջուրը, հողը:</p> <p>ՇԲ-ԲԱ-Վ3 Ներկայացնել մարդկանց, բույսերի և կենդանիների համար ջրի կենսական նշանակությունը, երկրագնդի վրա քաղցրահամ ջրի պաշարների սահմանափակությունը, աղտոտման խնդիրը, ջրի տնտեսման, պաշարների արդյունավետ օգտագործման անհրաժեշտությունը:</p> <p>ՇԲ-ԲԱ-Վ4 Բացատրել, որ երկրագունդը շրջապատված է մթնոլորտով և ունի կենսական նշանակություն:</p> <p>ՇԲ-ԲԱ-Վ5 Գլոբուսի և քարտեզի վրա ցույց տալ մայրցամաքները և օվկիանոսները, հորիզոնի հիմնական և միջանկյալ կողմերը և կողմնորոշվել դրանցով, կարողանալ օգտվել կողմնացույցից, ճանաչել մասշտաբ և պայմանական նշաններ հասկացությունները:</p> <p>Փոփոխությունները բնության մեջ</p> <p>ՇԲ-ԲՓ-Վ1 Ճանաչել և նկարագրել բնության մեջ տեղի ունեցող պարբերական երևույթները՝ եղանակային փոփոխություններ, գիշեր-ցերեկ և այդ փոփոխություններով պայմանավորված այլ բնական երևույթները ինչ ազդեցություն են ունենում բնության վրա:</p> <p>ՇԲ-ԲՓ-Վ2 Ներկայացնել, թե մարդու գործունեությունն ինչպես է ազդում շրջակա միջավայրի և կենսաբազմազանության վրա, օրինակ, աղբ, գետերի աղտոտվածություն, թափոնների արտանետում, մեկնաբանել բնության աղտոտվածության և առողջության կապը:</p> <p>ՇԲ-ԲՓ-Վ3 Ներկայացնել էկոհամակարգերը դրանց փոխկախվածությունը, փոփոխությունները, վատթարացումը՝ տարբեր՝ կենսածին, մարդածին և ոչ կենսածին գործոնների ազդեցության տակ:</p> <p>ՇԲ-ԲՓ-Վ4 Բացատրել աղբի տեսակավորման, վերամշակման, երկրորդային օգտագործման և թափոնների վերամշակման անհրաժեշտությունը բնապահպանության և խնայողության տեսանկյունից:</p>	
Թեմայի վերջնարդյունքները	

Անկենդան բնության օբյեկտները

ՇՇԲ-ԲԱ-Վ1 Տարբերակել երկրի մակերևույթի որոշ ձևեր՝ տափարակ, բլուր, սար, լեռ, գետ, լիճ, ծով:

ՇՇԲ-ԲԱ-Վ2 Բնութագրել և նկարագրել անկենդան բնությունը՝ որպես կենդանիների, բույսերի և մարդկանց բնակության միջավայր:

ՇՇԲ-ԲԱ-Վ2 Ներկայացնել, թե որքանով է տվյալ միջավայրը համապատասխան կամ անհամապատասխան տարբեր բույսերի, կենդանիների համար:

Փոփոխությունները բնության մեջ

ՇՇԲ-ԲՓ-Վ1 Դիտարկել և նկարագրել բնության եղանակային փոփոխությունները, թվարկել տարվա եղանակները և ամիսները ըստ հերթականության:

ՇՇԲ-ԲՓ-Վ1 Դիտարկել և նկարագրել, թե ինչպես են փոփոխվում մարդկանց, բույսերի ու կենդանիների կյանքը եղանակային փոփոխություններին, բերել տարբեր տեղանքների օրինակներ:

ՇՇԲ-ԲՓ-Վ1 Բնութագրել եղանակը ցանկացած պահի, դրսևորել եղանակին համապատասխան վարքագիծ:

ՇՇԲ-ԲՓ-Վ2,

ՇՇԲ-ԲՓ-Վ3 Ճանաչել փոփոխությունները բնության մեջ, հասկանալ՝ ինչու է կայանում բնության վտանգված լինելը, ճանաչել բույսերի և կենդանիների որոշ վերացած և վտանգված տեսակներ՝ նաև մեր բնաշխարհի (կարմիր գրքի մասին):

ՇՇԲ-ԲՓ-Վ2 Բացատրել, թե ինչ դեր ունի մարդը բնության վատթարացման գործում, մեկնաբանել բնության պահպանության և խնայող վերաբերմունքի անհրաժեշտությունը:

Բովանդակություն

- Անկենդան բնությունը՝ որպես կենդանիների, բույսերի և մարդկանց բնակության միջավայր, այդ միջավայրի և բնության համապատասխանությունը:
- Բնությունը տարվա տարբեր եղանակներին: Մարդու, բույսերի և կենդանիների փոխադարձ կապը:
- Մարդու դերը բնության հետ կատարվող փոփոխություններում, վտանգված բնություն

Առաջարկվող գործունեության ձևեր	Խաչվող գաղափարներ
---------------------------------------	--------------------------

• **Դիտումներ**
Դիտարկել, թե շուրջն եղած անկենդան բնության օբյեկտներն ինչ ընդհանրություններ ունեն և **բնութագրել**: Դուրս գալ բույսերի գրկում դիտումների և **նշումներ կատարել**, թե անկենդան բնության օբյեկտներն ինչպես են կապվում կենդանի բնության հետ՝ որպես նրանց բնակության միջավայր: **Նկարագրել** և պնդումներ անել՝ մեկնաբանություններով: **Տարբերակել և դասակարգել** ըստ առանձնահատկությունների, գտնել այն բնորոշիչները, որոնցով դրանք առանձնանում են, օրինակ՝ անկենդան բնությունը չի ապրում կամ մեռնում, այլ ժամանակի ընթացքում փոփոխվում են չափերը, ձևերը, օրինակ սարերը, ձորերը, հողը, ջուրը, օդը և այլն:
 Բնության գրկում **դիտումներ անել**, և **նկարագրել**, թե որտեղ են դրանք ապրում, կարո՞ղ են արդյոք առանց անկենդան բնության օբյեկտների գոյատևել, օրինակներ բերել:
Դիտարկել շրջակա տարածքի մակերևույթի ձևերը, փորձել նկարել, գծագրել՝ բլուրները, սարերը, ձորերը, գետերն ու ջրամբարները: Կարելի է օգտագործել նաև որևէ տեղանքի մակետ:
Դիտարկել, թե որ տեղանքին ինչպիսի բնություն է բնորոշ, օրինակ՝ անտառում ինչ բույսեր և կենդանիներ են բնակվում,

• **Օրինաչափություններ**
 Նկատել և դիտարկել պարբերաբար փոփոխվող եղանակները, դրանց հերթագայումը, այդ փոփոխություններին բնորոշ պարբերական երևույթները, որոնք օրինաչափ են, օրինակ՝ գարնանը ծաղկում են ծառերը կանաչում են լեռներն ու մարգագետինները, հետ են վերադառնում թռչունները և այլն: Պետք է խթանել, որ երեխաներն իրենք գտնեն նման օրինաչափություններ: Նկատեն տեղանքի փոփոխությունները՝ անտառ, անապատ, դաշտավայր, գետ, լիճ և այլն, նկարագրեն թե ինչպես են փոխվում այդ տեղանքների բույսերն ու կենդանիները: Գտնել պատճառներ դրա համար, փորձել բացատրել: Օրինակ Անտառում ծառերը բարձր են ու խիտ, իսկ անապատում ծառեր չկան, կան նվազ խոտաբույսեր և այլն: Կարևոր է տեսնել, որ բնական միջավայրը պայմանավորում է բուսական և կենդանական աշխարհը:

անապատում՝ ինչ, լեռնային տարածքներում՝ ինչպիսի մեկնաբանել, աղյուսակներ կազմել և լրացնել ըստ համապատասխան տեղանքի

Դիտարկել և նկարագրել տվյալ եղանակին բնության մեջ տեղի ունեցող երևույթները, մարդկանց, բույսերի, կենդանիների ապրելակերպը տվյալ եղանակն: Հիշելով **նկարագրել** մյուս եղանակներին ինչպիսին են լինում նույն դիտարկած օբյեկտները և երևույթները, **համեմատել: Պլանավորել**, թե ինչն են դիտարկելու հաջորդ եղանակներին **և լրացնելու** իրենց աշխատանքում:

• **Փաստական նյութերի հետաքրքիր և խթանող ներկայացում**

Փորձել գտնել նույն տեղանքի հին փաստական տվյալներ, լուսանկրաններ, պատմություններ, հարցումներ, տեսանյութեր և այլն, կարելի է իրենց գյուղի, քաղաքի, աշխարհի որևէ տարածքի վերաբերյալ: Կարելի է նաև **հարցումներ անել** մեծերից, թե ինչպես է փոփոխվել իրենց շրջակա տարածքը տարիների ընթացքում: **Ներկայացնել, համադրել և հետևություններ անել**, թե ինչն է փոփոխվել և ինչու, ում ներգործությամբ է վատթարացել բնությունը: Բերել իրենց բնակավայրում հանդիպող և նախկինում հանդիպած, բայց այլևս չհանդիպող կենդանատեսակների օրինակներ, նաև բուսատեսակների, եթե այդպիսիք կան: Կարելի է **օրինակներ բերել** Հայաստանին բնորոշ փոփոխություններից ու վերացող տեսակների օրինակով:

• **Շնորհանդեսներ՝ գրավոր, բանավոր, տեսողական**

Կատարած դիտումների արդյուքների **ներկայացում**՝ տարբեր միջոցներով:

• **Խմբային և համագործակցային աշխատանքներ**

Խմբային դերային և համագործակցային խաղերով ցույց տալ էկոհամակարգերի ներսում եղած փոխկախվածությունները, եղանակային փոփոխություններին : Հետևություններ անել:

• **Աշխատանքային թերթիկներ՝ տարբեր տիպի առաջադրանքներով**

Դիտումների համար կարելի է օգտագործել աշխատանքային թերթիկներ, որոնցում ուղղորդումներ կան, թե ինչպես կատարեն դիտումները, ինչերին ուշադրություն դարձնեն, լրացնեն և այլն: **Սանդղակներ լրացնել**, տարբեր եղանակներին իրենց դիտարկումների վերաբերյալ: Կարելի է դրանք պահել և լրացնել ողջ տարվա ընթացքում:

• **Ներկայացումներ և մոդելավորում**

Էկոհամակարգերի պարզ մոդելներ **ներկայացնել նկարելով, սխեմայով՝** անտառի, լճի և այլ պարզ օրինակներով:

• **Գիտական բառապաշարի և լեզվի գործածումը**

Կարևոր է, որ երեխաները **սկսեն օգտագործել** բնագիտական եզրույթներն ըստ անհրաժեշտության, կիրառության և **հասկանալով**, օրինակ օդ, ջուր, լեռ, սար, ձոր, բլուր, քարանձավ, անտառ, մարգագետին, անապատ և այլն:

• **Պատճառ և հետևանք**

Եղանակի հերթագայման հետևանքով մարդկանց, բուսերի և կենդանիների կյանքում կատարվող փոփոխությունները, դրանց պատճառները: Դիտարկել մարդու ներգործության պատճառներն ու հետևանքները բնության վրա, վատթարացմանն ու բարելավմանն ուղղված գործունեություն:

• **Մասշտաբ, համամասնություն և քանակ**

Ներկայացնել բնության մեջ վերացող տեսակների օրինակներ՝ բույսերի և կենդանիների, դրանց քանակի փոփոխության՝ պակասելու կամ ընդհանրապես անհետանալու օրինակներ բերել, մեր երկրի և աշխարհի օրինակներ, «Կարմիր գիրք»:

• **Էներգիա և նյութ**

Եղանակի փոփոխության, արևի ջերմության պակասելու օրինակի վրա դիտարկել կենդանիների ծմեռային քունը, մարդկանց և կենդանիների՝ պակաս եռանդուն լինելը: Ջերմության և սննդի պակասը ազդում է նրանց եռանդի և ապրելակերպի վրա:

• **Կառուցվածք և գործառույթ**

Օրինակ՝ կարելի է դիտարկել չորային միջավայրում ապրող բույսերի տերևները կամ հյութեղ են, կամ փշանման, իսկ խոնավ և տաք միջավայրում սաղարթախիտ և լայնատերև:

• **Կայունություն և փոփոխություն**

Թեմայի հիմնական իմաստը կառուցվում է բնության մեջ առկա պարբերաբար կրկնվող փոփոխություններին և հարաբերական կայունությանը: Երեխաները պետք է հասկանան մի վիճակից մյուս վիճակին անցումները:

<ul style="list-style-type: none"> • Նկարների, գծապատկերների և սխեմաների ստեղծումը <p>Վերը թվարկված բոլոր տիպի աշխատանքներն անելիս կարելի է նկարել, գծել, սանդղակներ կազմել, որը կօգնի ավելի լավ պատկերացնել և յուրացնել նյութը:</p> <ul style="list-style-type: none"> • Ուսուցողական ֆիլմերի դիտումներ, քննարկում • Պարզ վարժանքները՝ միտված փաստական նյութերի հետաքրքիր և խթանող ներկայացմամբ 	
--	--

Միջառարկայական կապեր

<p>Մայրենի</p> <ul style="list-style-type: none"> • Կարողանա ընտրել և կարդալ տարվա եղանակների մասին բանաստեղծություններ, պատմվածքներ, հանելուկներ, ասացվածքներ, կատարել եզրահանգումներ, հիմնավորումներ՝ հարստացնելով բառապաշարը թեմայի ընթացքում սովորած համապատասխան բառերով և բառակապակցություններով, կարողանա կառուցել նկարագրական և դատողական բնույթի խոսք, հորինել փոքրիկ ոտանավորներ, հանելուկներ: <p>Մաթեմատիկա</p> <ul style="list-style-type: none"> • Կարողանա կազմել աղյուսակներ՝ բնության մեջ տեսածը, ուսումնասիրած տվյալները գրառելով դրանց մեջ, կամ կարդալ աղյուսակներ, դուրս գրել տվյալներ, կազմել խնդիրներ: <p>Արվեստ</p> <ul style="list-style-type: none"> • Բնության փոփոխությունների, տարվա եղանակների մասին գեղարվեստական նյութերի դերախաղով ընթերցումներ, ներկայացումներ, վտանգված բուսական և կենդանական աշխարհի մասին ֆիլմերի, արվեստի այլ աշխատանքների ուսումնասիրություններ (երաժշտության, բանաստեղծությունների ունկնդրումներ, նկարների դիտում), ինքնուրույն ստեղծագործություններ: <p>Ֆիզկուլտուրա</p> <ul style="list-style-type: none"> • Շարժական խաղեր, որոնց միջոցով սովորողները ցույց կտան ցերեկվա-գիշերվա հերթազայությունները, բնության փոփոխությունները: Տեղեկություններ ձմեռային և ամառային սպորտաձևերի մասին: <p>Օտար լեզու</p> <ul style="list-style-type: none"> • Սովորել փոքրիկ ոտանավորներ, կարդալ և թարգմանի փոքրիկ տեքստեր: • Անվանի տարվա եղանակները, անկենդան բնության օբյեկտների անունները՝ սար, լեռ, լիճ և այլն: • Վարի երկխոսություններ՝ պատմելով բնության փոփոխությունների մասին: <p>Տեխնոլոգիա</p> <ul style="list-style-type: none"> • Պատրաստի տարբեր առարկաներ՝ բնական և արհեստական նյութերով: • Ձևավորի պատասխանատու վերաբերմունք սենյակային բույսերի, շրջապատող իրերի նկատմամբ դրսևորի խնայողական և հոգատար վերաբերմունք:
--

Ներառարկայան կապեր

<ul style="list-style-type: none"> • «Ես և բնությունը» հիմնական հասկացության տակ եղած բոլոր թեմաները կապված են և՛ «Ես» հասկացության թեմաների հետ՝ անվտանգությունը բնության գրկում, մարմին, սնուցում թեմաների համատեքստում, և՛ «Ես և մարդիկ» հասկացության՝ տուն, բակ, փողոց, համայնք թեմաների հետ, տնային բույսերի, բույսերից պատրաստված կենցաղային իրերի, շրջապատի, համայնքի զբաղմունքների և բնության օբյեկտների վերբերյալ ուսումնասիրությունների համատեքստում: • Սերտորեն կապվում է նաև «Տիեզերք» հիմնական հասկացության բոլոր թեմաների հետ:
--

Կապը Հանրակրթության պետական չափորոշչի տարրական դպրոցի վերջնարդյունքների հետ

Թեմային ուղղակի առնչվող՝ S7, S10, S11, S12, S13, S14, S19
Թեմային մասամբ առնչվող՝ S1, S2, S8, S9, S15, S16, S23

Ես և տիեզերքը	
Շարժում և փոխազդեցություն	
Ուժեր (3 ժամ)	Ձայն և լույս (3 ժամ)
ԹԵՄԱ Հրել և ձգել (3 ժամ)	ԹԵՄԱ Ձայն և լույս (3 ժամ)
Նպատակ	
<ul style="list-style-type: none"> • Տարրական գիտելիք հաղորդել շարժման և մարմինները շարժման մեջ դնող տարբեր ուժերի մասին: • Գաղափար տալ ձայնի, ձայնի աղբյուրների, ուժեղ և թույլ ձայների առաջացման մասին: • Օգնել ընդլայնելու պատկերացումները լույսի մասին՝ տարբերակելով լույսի բնական և արհեստական աղբյուրները: 	
Առարկայի ընդհանրական չափորոշչային վերջնարդյունքներ	
<p>Ուժեր</p> <p>ՇՏ-ՇՈՒ-Վ1 Ցուցադրել, որ այն ամենն ինչ շարժվում է՝ շարժվում է որևէ ուժի շնորհիվ, որ կան մարմինը շարժման մեջ դնելու տարբեր եղանակներ (ձգել, հրել տարբեր ուժերով և ուղղություններով)</p> <p>ՇՏ-ՇՈՒ-Վ2 Տարբերել ուղղագիծ, կորագիծ և պտտական շարժումները, բերել օրինակներ:</p> <p>ՇՏ-ՇՈՒ-Վ3 Բացատրել, որ մարմիններն ընկնում են երկրի ձգողականության պատճառով:</p> <p>Ձայն և լույս</p> <p>ՇՏ-ՇՁԼ-Վ1 Ծանոթանալ ձայնի առաջացման և տարածման երևույթի հետ, համոզվել, որ ձայնը տարբեր կերպ է տարածվում փակ և բաց տարածքում, բացահայտել, որ ձայնը կարող է անդրադառնալ՝ դիֆրակցիայով մարմիններին (արծազանք):</p> <p>ՇՏ-ՇՁԼ-Վ2 Ներկայացնել լույսի բնական և արհեստական աղբյուրներ, բացատրել որ լույսը տարածվում է ուղիղ գծով՝ ստվերների առաջացման և լույսի անդրադարձման օրինակով:</p> <p>ՇՏ-ՇՁԼ-Վ3 Ճանաչել նյութերն ըստ իրենց՝ թափանցիկ, կիսաթափանց և անթափանց լինելու հատկության:</p>	
Թեմայի վերջնարդյունքներ	
<p>Ուժեր</p> <p>2ՇՏ-ՇՈՒ-Վ1 Համոզվել, որ այն ամենն ինչ շարժվում է՝ շարժվում է որևէ ուժի շնորհիվ:</p> <p>2ՇՏ-ՇՈՒ-Վ1 Ներկայացնել մարմինը շարժման մեջ դնելու տարբեր եղանակներ (ձգել, հրել տարբեր ուժերով և ուղղություններով):</p> <p>2ՇՏ-ՇՈՒ-Վ1 Նկարագրելիս օգտագործել ճիշտ բառապաշար՝ ուղղություն, արագություն, դանդաղել, արագանալ, բախվել, շեղվել, հարվածել, ընկնել և այլն</p> <p>2ՇՏ-ՇՈՒ-Վ2 Տարբերել ուղղագիծ, կորագիծ և պտտական շարժումները, բերել օրինակներ:</p>	

<p>Ձայն և լույս</p> <p>ՉՇՏ-ՇՁԼ-Վ1 Բերել ձայնի աղբյուրների օրինակներ:</p> <p>ՉՇՏ-ՇՁԼ-Վ1 Նկարագրել՝ ինչպես են մարդիկ և կենդանիները արձակում և լսում ձայնը:</p> <p>ՉՇՏ-ՇՁԼ-Վ1 Ցույց տալ, որ հեռվից ձայնի ուժը թուլանում է:</p> <p>ՉՇՏ-ՇՁԼ-Վ2 Բերել լույսի աղբյուրների օրինակներ՝ բնական և արհեստական:</p>	
<p>Բովանդակություն</p>	
<ul style="list-style-type: none"> • Հրել և ձգել • Ուժեղ և թույլ • Ուղղագիծ և պտտական շարժում • Արագ, դանդաղ • Ձայնի, լույսի աղբյուրներ • Ուժեղ և թույլ ձայներ • Լույսի բնական և արհեստական աղբյուրներ 	
<p>Առաջարկվող գործունեության ձևեր</p>	<p>Խաչվող գաղափարներ</p>
<ul style="list-style-type: none"> • Ուսումնական տարբեր նպատակներով կիրառվող խաղեր Կարևոր է, որ աշակերտները իրենց ունեցած նախնական գիտելիքների վրա հիմնվելով փորձեն իմաստավորել այն ինչ գիտեին: Ցանկացած երեխա խաղալիս բազմաթիվ անգամ հրել է, հրվել է, ձգել է, ճոճել է, ճոճվել է և այլն: Պետք է ցուցադրել այդ գործողությունները հարցեր ձևակերպելով և կանխատեսելով, օրինակ՝ եթե հրենք այս իրը, ինչ կպատահի, եթե թեթև հրենք, եթե ուժեղ հրենք, հետո ցուցադրել: Եթե ձգենք այս իրը՝ ուժեղ կամ թույլ, ինչ կպատահի, ինչու... Այսպիսի գործողություններից հետո պետք է հիմնավորել և օրինակներ բերել: Կարելի է խմբերին հնարավորություն տալ, որ յուրաքանչյուրը իր օրինակները բերի, հարցադրումներ մշակի և ցուցադրի: • Դերային, նմանակման (սիմուլյացիոն) վարժություններ Դերային զվարճալի խաղեր կենդանիների, քամու, դռան, ընկնել առարկայի, իրերի՝ իրենց հայտնի այլ ձայների նմանակման: Ապա թվարկել ձայնի տարբեր աղբյուրներ, ինչով են արձակում ձայն, ինչով են լսում: Ինչ նմանություն են նկատում ձայնը արձակող և լսող տարբեր կենդանիների և մարդու օրգանների միջև: • Փորձեր Փորձեր ձայնի ուժգնության, տարածման վերաբերյալ Ձորձել տարբեր կերպ շարժվող առարկաների հետագծերը գծել նկարել, օրինակ՝ հողի, մեքենայի, օձի, բումերանգի, թրթուրի և այլն: • Դաշտային աշխատանք Դուրս գալ բակ, ազատ տարածք և դիտարկումներ անել, թե ինչ ձայներ են լսվում և որտեղից են դրանք գալիս, նկարագրել, 	<ul style="list-style-type: none"> • Օրինաչափություններ Սեփական փորձով համոզվել, որ որքան ուժեղ ես հարվածում գնդակին այնքան հեռու այն կգլորվի, որքան ուժեղ ես հրում ճոճանակը, այնքան ուժեղ այն կճոճվի, և քանի դեռ չես հրել, այն չի ճոճվի, եթե սեղանին դրված գրքի վրա որևէ մեկը ուժ չկիրառի, այն չի շարժվի այնքան ժամանակ մինչև մեկն այն չվերցնի կամ չհրի և այլն: Այսինքն՝ շուրջը կատարվող շարժումների մասին մտորել, դիտարկումներ անել, գտնել թե ինչն է ուժ գործադրում և շարժում դրանք: Գտնել ձայնի աղբյուրներ և դրանց մեջ նմանություններ նկատել՝ նկարագրել ընդհանրությունները, նկարագրել ինչն է տարբեր: Նույնը՝ լույսի աղբյուրների հետ: • Պատճառ և հետևանք Ցանկացած շարժման պատճառը որևէ ուժն է, իսկ ուժի գործադրման հետևանքը կարող է լինել շարժումը, ընկնելը, խփվելը, կոտրվելը և այլն, կարևոր է, որ երեխաները կարողանան կռահել, թե կոնկրետ գործողությանը ինչ կհետևի՝ կանխատեսել դրանք: • Կառուցվածք և գործառույթ Ձայնի աղբյուրների նմանությունները, նկարագրել, մարդկանց, կենդանիների արձակած ձայնը, ինչպես են արձակում՝ ինչով, և ինչպես են լսում՝ ինչով: Գտնել դրանց մեջ նմանություններ և ընդհանրություն լսելու օրգանների՝ ականջների և բերանի մեջ: • Կայունություն և փոփոխություն

<p>նշումներ անել, թե ինչ ծայնի աղբյուրներ տեսան, որ ծայներն էին որ իրենց ճանաչում էին ու գիտեին, թե ինչի հետևանքով են դրանք առաջանում, և՛ ծայներ, որոնք լսում են, բայց չգիտեն, որտեղից է գալիս:</p> <ul style="list-style-type: none"> • Աշխատանքային թերթիկներ՝ տարբեր տիպի առաջադրանքներով Տարբեր նկարներով թերթիկներ, որոնցից կարելի է ընտրել ծայնի և լույսի աղբյուրներ՝ դասակարգել, ապա դասակարգել բնական և արհեստական լույսի աղբյուրները: Լրացնել տարբեր հարցադրումներով թերթիկներ: • Գիտական բառապաշարի և լեզվի գործածումը Այս թեմայում նույնպես կան բառեր, եզրույթներ, որոնք գիտական նոր իմաստ կաստանան և ճիշտ կկիրառվեն, օրինակ՝ հրել, ձգել, բախվել, ուղղություն, շարժում, ուժեղ, թույլ, արագ, դանդաղ, ծայնի աղբյուր, լույսի աղբյուր, ուղղագիծ, կորագիծ և այլն: • Նկարների, գծապատկերների և սխեմաների ստեղծումը Ստեղծել տարբեր նկարներ՝ ծայնի և լույսի հնարավոր աղբյուրների, աղյուսակներ, որոնցում կգրանցեն իրենց դիտումներ արդյուքները և նշումները: • Հարցադրումների սահմանումը Կարևոր է, որ աշակերտներն իրենք ձևակերպեն հարցադրումներ՝ ինչ կլինի, ինչու, եթե իրենք այս իրը, ինչ կպատահի, եթե թեթև իրենք, եթե ուժեղ իրենք և այլն: • Գաղափարների և հասկացությունների սահմանումն և վերհանումը Վերևում նշված հարցադրումների պատասխանները կլինեն հենց վերհանված հասկացություններն ու սահմանումները, օրինակ՝ որքան ուժեղ իրենք այնքան հեռու կգնա, կամ վայր կընկնի: Որքան ուժեղ ինչի ծայնը այնքան հեռվից կլսվի և այլն: • Ուսուցողական ֆիլմերի դիտումներ, քննարկում • Փաստական նյութերի հետաքրքիր և խթանող ներկայացում 	<p>Շարժման և անշարժ վիճակում եղած մարմինների օրինակով քննարկել կայունությունն ու փոփոխությունը</p>
Միջառարկայական կապեր	
<p>Մայրենի</p> <ul style="list-style-type: none"> • Կարողանա կառուցել գրագետ, ճիշտ և տեղին օգտագործել թեմային համապատասխան բառերը, բերել և հիմնավորել օրինակները; • Կարողալ տեքստեր, ոտանավորներ, գուշակել հանելուկներ, օգտագործել հոմանիշներ, հականիշներ, բացատրել բառիմաստները: • Հորինել պատմություններ, հեքիաթներ, կամ ընթերցած հեքիաթից դուրս գրել թեմային համապատասխան բառերը (լույս ու մութ աշխարհ, հեռու-մոտիկ և այլն), : <p>Մաթեմատիկա</p> <ul style="list-style-type: none"> • Կարողանա ճիշտ օգտագործել արագություն , հեռավորություն, ժամանակ հասկացությունները, կարողանա համեմատել՝ բերելով համապատասխան օրինակներ: 	

Տեխնոլոգիա

- Կարողանա նշել աշխատանքային գործիքների ծայները, թղթի հետ աշխատելիս՝ թղթի ծայնը, բնական նյութերով աշխատելիս՝ տերևների խշխշոցը, տեխնիկայի տարրերի ծայները:

Արվեստ

- Տարբերակի բարձր և ցածր ծայները (ծայնային ռեգիստրներ), ճանաչի և բացատրի դինամիկայի և ալտերացիայի նշանները՝ երգելիս կատարելով դրանք բարձր կամ ցածր ծայնով (երաժշտություն), կարողանա նկարներում ցույց տալ լույսն ու ստվերը(կերպարվեստ), դերախաղով ցույց շարժման օրինակներ(թատրոն) :

Ֆիզկուլտուրա

- Կարողանա վարժությունների, շարժական խաղերի միջոցով ցույց տալ մարմինը, իրերը շարժման մեջ դնելու տարբեր եղանակներ (ձգել, հրել տարբեր ուժերով և ուղղություններով): Հասկանա և տարբեր ուժեր կիրառելու, և ցանկալի արագության կամ ուղղության կառավարում:

Օտար լեզու

- Ձևավորի թեմատիկ բառապաշար:
- Պարզ նախադասություններով կարողանա պատմի, թարգմանի փոքրիկ բնագրեր:

Ներառարկայական կապեր

«Տիեզերք» հիմնական հասկացության բոլոր թեմաները սերտորեն առնչվում են «Բնություն» հիմնական հասկացության թեմաներին:

Կապը Պետական Հանրակրթության չափորոշչի տարրական դպրոցի վերջնարդյունքների հետ

Թեմային ուղղակի առնչվող - S3, S10

Թեմային մասամբ առնչվող – S1, S7, S8, S9, S11, S12, S15, S23, S28, S31

Տիեզերք		
Մարմիններ		
Նյութեր, մասնիկներ (3 ժամ)	Նյութի վիճակ և հատկություն (3 ժամ)	Չափեր չափումներ (3 ժամ)
ԹԵՄԱ Ինչն ինչից է պատրաստված (9 ժամ)		
Նպատակ		
<ul style="list-style-type: none"> • Օգնել տարբերակել և նկարագրել շրջապատում եղած իրերը, մարմինները՝ բնութագրելով դրանց որակական և քանակական հատկանիշները, դասակարգել դրանք ըստ նյութի վիճակի՝ պինդ, հեղուկ և գազային: • Օգնել տարբերակել և ըստ անհրաժեշտության կիրառել չափիչ գործիքները՝ գործածելով ճիշտ չափման միավորներ: 		
Առարկայի ընդհանրական չափորոշչային վերջնարդյունքներ		
<p>Նյութեր, մասնիկներ</p> <p>ՇՏ-ՄՆ-Վ1 Տարբերակել՝ ինչ են մարմինները, նյութերը, բացատրել, որ նյութերը կազմված են չափազանց փոքր մասնիկներից</p> <p>ՇՏ-ՄՆ-Վ2 Ներկայացնել ունեցած նախնական պատկերացումները մասնիկների շարժման և փոխազդեցության մասին:</p> <p>ՇՏ-ՄՆ-Վ3 Նկարագրել դիֆուզիան պարզագույն օրինակների վրա:</p> <p>Նյութի վիճակ և հատկություն</p> <p>ՇՏ-ՄՀ-Վ1 Բնութագրել նյութերն ըստ իրենց որակական հատկանիշների՝ կոշտ, պինդ, հեղուկ, գազային, կարծր, անհարթ, հարթ, ողորկ, տաք, սառը և այլն, դասակարգել բոլոր նյութերը՝ պինդ, հեղուկ, գազային:</p> <p>ՇՏ-ՄՀ-Վ2 Նկարագրել նյութերն ու մարմիններն ըստ իրենց փոփոխվելու հատկությունների՝ ինչի հետևանքով են կոտրվում, ճկվում, ձգվում, ծռվում, հոսում, պատռվում և այլն:</p> <p>ՇՏ-ՄՀ-Վ3 Ներկայացնել, որ ջուրը միակ նյութն է, որ բնության մեջ միաժամանակ հանդիպում է երեք վիճակներում էլ՝ հեղուկ, պինդ, գազային, դրա նշանակությունը, փորձերի միջոցով ներկայացնել մի վիճակից մյուսին անցումը, ջրի օրինակով բնութագրել նյութերի հալում, պնդացում, գոլորշիացում և խտացում երևույթները, ներկայացնել ջրի մեծ շրջապտույտի սխեման:</p> <p>Չափեր չափումներ</p> <p>ՇՏ-ՄԶ-Վ1 Բնութագրել մարմիններն ըստ քանակական հատկանիշների, համապատասխան գործիքների օգնությամբ կատարել երկարության, զանգվածի, ջերմության և ծավալի չափումներ, կատարել անցումներ չափման միավորների չափողականությունների միջև:</p> <p>ՇՏ-ՄԶ-Վ2 Թվարկել չափման միավորները և գտնել դրանց միջև եղած առնչությունները:</p> <p>ՇՏ-ՄԶ-Վ3 Բացահայտել մարմինների կշռի և ձգողականության ուժի կապը:</p>		
Թեմայի վերջնարդյունքները		
<p>Նյութեր, մասնիկներ</p> <p>2ՇՏ-ՄՆ-Վ1 Նկարագրել շուրջն եղած իրերը, անվանել ինչից են պատրաստված՝ փայտից, ապակուց, պլաստիկից, քարից, ավազից, գործվածքից և այլն:</p> <p>2ՇՏ-ՄՆ-Վ1 Տարբերակել դրանք՝ բնական և արհեստական:</p> <p>Նյութի վիճակ և հատկություն</p> <p>2ՇՏ-ՄՀ-Վ1 Բնութագրել նյութերն ըստ նրանց որակական հատկանիշների, փափուկ, կոշտ, պինդ, հեղուկ, գազային, կարծր, անհարթ, հարթ, ողորկ, տաք, սառը և այլն:</p>		

<p>2ՇՏ-ՄՀ-Վ1 Համեմատել նյութի տարբեր վիճակները ըստ նյութի հատկությունների (ձևի, հոսելիության, պնդության, տարածվելու հատկության, սեղմելիության և այլն):</p> <p>2ՇՏ-ՄՀ-Վ2 Նկարագրել նութերն ու մարմիններն ըստ իրենց փոփոխվելու հատկությունների՝ ինչի հետևանքով են կոտրվում, ճկվում, ձգվում, ծռվում, հոսում, պատռվում և այլն:</p> <p>Չափեր չափումներ</p> <p>2ՇՏ-Մ2-Վ1 Բնութագրել մարմիններն ըստ քանակական հատկանիշների՝ մեծ, փոքր, ծանր, թեթև:</p> <p>2ՇՏ-Մ2-Վ1 Համապատասխան գործիքների (քանոն, կշեռք, ջերմաչափ, որևէ ծավալաչափ) օգնությամբ կատարել երկարության, զանգվածի, ջերմության և ծավալի չափումներ:</p> <p>2ՇՏ-Մ2-Վ1 Կատարել անցումներ չափման միավորների չափողականությունների միջև (մ-սմ-մմ, կգ-գ, Լ-մլ):</p>	
<p>Բովանդակություն</p>	
<ul style="list-style-type: none"> • Ինչից են պատրաստված մեզ շրջապատող իրերը: Բնական և արհեստական նյութեր: • Նյութերի ֆիզիկական հատկությունները՝ փափուկ, կոշտ, ողորկ, կարծր, պինդ, հեղուկ, մացուծիկ և այլն • Չափման միավորներ. Չափիչ գործիքներ, օգտագործում: • Ժամ, ժամանակ, հեռավորություն, կշիռ, ծանրություն, ջերմություն, ծավալ 	
<p>Առաջարկվող գործունեության ձևեր</p>	<p>Խաչվող գաղափարներ</p>
<ul style="list-style-type: none"> • Ուսումնական տարբեր նպատակներով կիրառվող խաղեր Կարևոր է, որ աշակերտները իրենց ունեցած նախնական գիտելիքների վրա հիմնվելով փորձեն իմաստավորել այն ինչ գիտեին: Կարող են խաղալ՝ իրեր ցույց տալ, որոնք մյուսները կկռահեն և կանվանեն, թե ինչից են պատրաստված, սխալ կռահված իրերը կարելի է առանձն քննարկել և հատկանիշներն ավելի հանգամանալից քննարկել, նաև ուսուցչի աջակցությամբ: Ապա փորձեն դասակարգել բնական և արհեստական նյութերից պատրաստված իրերը: Կարող են փակ աչքերով պարկից իրեր հանել և նկարագրել՝ փափուկ է, կոշտ է, կլոր է, ճկվող է և այլն: Շատ կարևոր է բնութագրերը տալը զգացողությունների վրա հիմնվելով: • Փորձեր Կարելի է փորձեր անել պինդ (կոտրվող, փշրվող, ճկվող, սեղմվող նյութերի հետ), հեղուկ (հոսող, դատարկ ճեղքեչը լցնող նյութերի հետ) գազային (տարածվող, անտեսանելի, դատարկ տարախություն լցնող և այլն) նյութերի հետ, նրանց որոշ հատկություններում փորձով համոզվելու համար: • Դաշտային աշխատանք Դուրս գալ բակ, ազատ տարածք և տարբերել բնական նյութերը, փորձել բնության մեջ տեսնել և մատնանշել այն նյութերը, որոնցից մարդիկ զանազան իրեր են պատրաստում, ինչպես նաև արհեստական նյութերը՝ պոլիէթիլեն, պլաստիկ շշեր, և այլն: Կարելի է դրսում զանազան չափումներ կատարել, չափման արդյուքները վերածել ավելի փոքր միավորների, կամ ավելի մեծ: Չափել դրսի, ներսի և իրենց մարմնի ջերմաստիճանը, համեմատել: 	<ul style="list-style-type: none"> • Օրինաչափություններ Նկարագրել շուրջն եղած իրերն ու առարկաները, գտնել դրանց որակի մեջ նմանություններ և տարբերություններ, նշել ծանոթ նյութերը՝ թուղթ, բամբակ, ջուր, փայտ, բուրդ, ապակի և այլն: դասակարգել դրանք ըստ հատկանիշների: • Պատճառ և հետևանք Շուրջն եղած իրերը և առարկաները կարելի է փոփոխել, պատռել, կոտրել, ձգել, ճզմել, կտրել և այլն: Ինչ գործողություններն են դառնում նման փոփոխությունների պատճառ, և ինչի հետևանքով են փոփոխվում շրջապատում եղած նյութերը • Մասշտաբ, համամասնություն և քանակ Համեմատել առարկաներն ու նյութերը՝ չափերով, քանակով՝ մեծ, փոքր, շատ, քիչ, ծանր, թեթև, տաք, սառը, հեռու մոտիկ և այլն, պարզ չափման միավորներով չափել դրանք, համեմատել: • Էներգիա և նյութ Օբյեկտները կարող են մասնատվել մանր կտորների և կարող են միանալ ավելի մեծ օբյեկտ ստեղծելով, փոխել ձևը: • Կառուցվածք և գործառույթ Շրջապատում եղած առարկաներն ու օբյեկտները նախատեսված են տարբեր գործողությունների կամ նպատակների համար: Դրանք ձևով և ինքնուրույն հատկություններով համապատասխանում են այն գործառույթին,

<p>Աշխատանքային թերթիկներ՝ տարբեր տիպի առաջադրանքներով</p> <p>Տարբեր նկարներով թերթիկներ, որոնցից կարելի է ընտրել տարբեր նյութերից պատրաստված իրեր, խմբավորել, դասակարգել դրանք, ապա դասակարգել բնական և արհեստական նյութերը: Լրացնել տարբեր հարցադրումներով թերթիկներ:</p> <ul style="list-style-type: none"> • Գիտական բառապաշարի և լեզվի գործածումը <p>Այս թեմայում նույնպես կան բառեր, եզրույթներ, որոնք գիտական նոր իմաստ կաստանան և ճիշտ կկիրառվեն, օրինակ՝ նյութեր, մարմիններ, մասնիկներ, փայտե, մետաղյա, բնական, արհեստական, հեղուկ, գազային, պինդ, կարծր, հոսել, ճկվել և այլն:</p> <ul style="list-style-type: none"> • Նկարների, գծապատկերների և սխեմաների ստեղծումը <p>Ստեղծել տարբեր նկարներ՝ տարբեր նյութերի մարմինների, դրանց ձևի, չափումների, մեծության վերաբերյալ, ստեղծել աղյուսակներ, որոնցում կգրանցեն իրենց փորձերի, դիտումներ արդյուքները և նշումները:</p> <ul style="list-style-type: none"> • Հարցադրումների սահմանումը <p>Կարևոր է, որ աշակերտներն իրենք ձևակերպեն հարցադրումներ՝ ինչ կլինի, ինչու, եթե ճկենք այս իրը, ինչ կպատահի, եթե կտրենք, տաքացնենք, փչենք և այլն:</p> <ul style="list-style-type: none"> • Գաղափարների և հասկացությունների սահմանումն և վերհանումը <p>Վերևում նշված հարցադրումների պատասխանները կլինեն հենց վերհանված հասկացություններն ու սահմանումները, օրինակ՝ եթե նետենք բաժակը այն կկտրվի, եթե շրջենք ջրով լի բաժակը, ջրը կթափվի, եթե փչենք փոչիկը, այն կլցվի մեր արտաշնչած օդով և այլն: Կամ՝ եթե գործվածքը բամբակից է, որեմն բնական է, ինչու՞, որովհետև բամբակը բույս է: Կամ՝ եթե աթոռը փայտից է, այն բնական նյութից է, որովհետև փայտը ստանում ենք ծառից և այլն:</p> <ul style="list-style-type: none"> • Ուսուցողական ֆիլմերի դիտումներ, քննարկու • Պարզ վարժանքները՝ միտված փաստական նյութերի հետաքրքիր և խթանող ներկայացմամբ 	<p>ինչի համար գործածվում են՝ աթոռը նստելու համար է և ձևով համապատասխանեցված է նստելուն, բաժակը խմելու համար է և այլն:</p> <ul style="list-style-type: none"> • Կայունություն և փոփոխություն <p>Վերոնշյալ բոլոր երևույթները քննել փոփոխությունների և կայունության համատեքստում:</p>
---	--

Միջառարկայական կապեր

<p>Մայրենի</p> <ul style="list-style-type: none"> • Կարողանա կառուցել նկարագրական բնույթի խոսք՝ օգտագործելով հատկանիշ ցույց տվող բառեր, • Կատարել մեկնաբանություններ, հիմնավորումներ՝ մտքերը հստակ ձևակերպելով, հիմնավորումներով: • Ճիշտ օգտագործել թեմային համապատասխան եզրույթները: • Տեքստից դուրս գրել մարմինները բնութագրող բառերը, կազմել նոր բառակապակցություններ: <p>Մաթեմատիկա</p> <ul style="list-style-type: none"> • Կարողանա կատարել գործողություններ անվանական թվերի հետ: • Ճանաչի և անվանի մեծություններն ու չափման միավորները: • Կարողանա կատարել անցումներ չափման միավորների չափողականությունների միջև (մ-սմ-մմ, կգ-գ): <p>Տեխնոլոգիա</p>
--

- Կարողանա աշխատելիս ճիշտ ընտրել նյութը՝ բնութագրելով, նշելով տվյալ նյութի որակական հատկանիշները:
 - Կատարել չափումներ՝ օգտագործելով համապատասխան գործիքները:
- Օտար լեզու**
- Սովորել կբանավոր խոսքում օգտագործել թեմային համապատասխան բառեր:

Կապը Հանրակրթության պետական չափորոշի տարրական դպրոցի վերջնարդյունքների հետ

Թեմային ուղղակի առնչվող - S3, S10

Թեմային մասամբ առնչվող – S1, S7, S8, S9, S11, S12, S15, S23, S28, S31

3-րդ ԴԱՍԱՐԱՆ

Ես	
Ինքնություն Ինքնաճանաչում	
Ներաշխարհ	Մարմին
ԹԵՄԱ Ինչպես եմ կազմակերպում իմ կյանքը (4 ժամ)	ԹԵՄԱ Ճանաչենք մեր մարմինը (4 ժամ)
Նպատակ	
<ul style="list-style-type: none"> Զարգացնել ժամանակը արդյունավետ տնօրինելու, նպատակները հստակեցնելու և ջանասիրության շնորհիվ իրականացնելու, ժամանակը սխալ տնօրինելու հետևանքները քննադատաբար վերլուծելու կարողությունները: Նախնական գիտելիք տալ մարդու օրգանների, օրգան համակարգերի և դրանցից յուրաքանչյուրի կարևոր գործառույթների մասին: Ամրապնդել գիտելիքը ջրի կարևորության ու նշանակության վերաբերյալ՝ որպես հիգիենայի և առողջության պահպանման կարևորագույն գործոն: 	
Առարկայի ընդհանրական չափորոշչային վերջնարդյունքներ	
<p>Ներաշխարհ</p> <p>ՇԵ-ԻՆ-Վ1 Ուսումնասիրել ինքնության վերաբերյալ գաղափարներ, ներառյալ՝ իր և ուրիշների, տարբերակել ինքնությունը ըստ սոցիալական և հուզական առանձնահատկությունների:</p> <p>ՇԵ-ԻՆ-Վ2 Գտնել ինքնարտահայտման և ինքնության դրսևորման տարբեր եղանակներ:</p> <p>ՇԵ-ԻՆ-Վ3 Ճանաչել սեփական կարողություններն ու հնարավորությունները, շահեկան ինքնադրսևորվել:</p> <p>ՇԵ-ԻՆ-Վ4 Ճանաչել իր և ուրիշների հույզերը, կառավարել դրանք, ապրումակցել:</p> <p>ՇԵ-ԻՆ-Վ5 Տարբերակել անցյալում, ներկայում և ապագայում կատարվելիք իրադարձությունները՝ իր կյանքի օրինակով, արդյունավետ տնօրինել ժամանակը:</p>	
<p>Մարմին</p> <p>ՇԵ-ԻՄ-Վ1 Ճանաչել զգայարանները, տարբերակել դրանցով ստացված տեղեկությունները՝ որպես աշխարհը ճանաչելու միջոց:</p> <p>ՇԵ-ԻՄ-Վ2 Ճանաչել մարմնի հիմնական մասերի գործառույթներն ու կազմության որոշ բնորոշիչներ:</p> <p>ՇԵ-ԻՄ-Վ3 Հարգել և ընդունել տարբերությունները, այդ թվում՝ հաշմանդամություն ունեցող և զարգացման առանձնահատկություններ ունեցող մարդկանց, ներառելով նրանց հնարավոր բոլոր ուսումնական գործընթացներում:</p> <p>ՇԵ-ԻՄ-Վ4 Տիրապետել անձնական հիգիենայի կանոններին, հիմնավորել հիգիենայի, ֆիզիկական ակտիվության և կոփման անհրաժեշտությունը՝ որպես առողջությունը պայմանավորող կարևոր գործոններ:</p>	
Թեմայի վերջնարդյունքները	
<p>Ներաշխարհ</p> <p>3ՇԵ-ԻՆ-Վ1-2-3 Ժամանակը կանոնակարգել և արդյունքավետ բաշխել ըստ անելիքների և հանգստին անհրաժեշտ ժամանակահատվածների:</p> <p>3ՇԵ-ԻՆ-Վ1-2-3 Քննադատաբար մտածելով նշել իր ժամանակի տնօրինման սխալներն ու դրանց հետևանքները:</p> <p>3ՇԵ-ԻՆ-Վ1-2-3 Մեկնաբանել ջանասիրության և ամեն ինչ ժամանակին հասցնելու շահավետությունը:</p>	

<p>3ՇԵ-ԻՆ-Վ1-2-3 Հստակեցնել նպատակը, ուրվագծել նպատակին տանող ճանապարհն ու քայլաշարը, որոշում կայացնել:</p>	
<p>Մարմին 3ՇԵ-ԻՄ-Վ2 Թվարկել, ցույց տալ մարմնի որոշ օրգան-համակարգերը, նշել դրանց կարևոր գործառույթները: 3ՇԵ-ԻՄ-Վ2, 3ՇԵ-ԱՎ-Վ1 Թվարկել և մեկնաբանել որոշ սովորություններ, որոնք կարող են նպաստել, կամ վնասել օրգան-համակարգերի գործունեությանը: 3ՇԵ-ԱՍ-Վ3 Հիմնավորել ջրի կարևորությունն ու նշանակությունը հիգիենայի և առողջության պահպանման հարցում:</p>	
<p>Բովանդակություն</p>	
<ul style="list-style-type: none"> • Ժամանակի արդյունավետ տնօրինում, աշխատանք, ժամանց, հանգիստ: • Նպատակ, նպատակների իրագործում, քննադատաբար մտածել, որոշում կայացնել: • Ծուլության հետևանքներն ու ջանասիրության օգուտները, ամեն ինչ ժամանակին հասցնելու շահավետությունը: • Մարմնի կազմություն, մարմնի որոշ օրգան-համակարգերը, դրանց կարևոր գործառույթները և առողջության պահպանումը: • Ջրի կարևորությունն ու նշանակությունը հիգիենայի և առողջության պահպանման հարցում 	
<p>Առաջարկվող գործունեության ձևեր</p>	<p>Խաչվող գաղափարներ</p>
<ul style="list-style-type: none"> • Ուսումնական տարբեր նպատակներով կիրառվող խաղեր Զույգերով, կամ անհատական աշխատանքներ, որոնք կխթանեն ինքնաճանաչումը՝ ինչպես է ինքը որոշում կայացնում, կարողանում է արդյոք, ի՞նչն է խանգարում, կամ օգնում, ովքե՞ր են խորհուրդ տալիս, ինչպիսի՞ որոշումներն են իրենք կայացնում առանց ուրիշների միջամտության և այլն: • Խմբային, համագործակցային առաջադրանքներ Տարբեր խաղեր, որոնք կխթանեն աշակերտների՝ խմբով որոշումներ կայացնելը, դրանց թեր և դեմ կողմերը քննելը, քննադատաբար վերլուծելն ու եզրահանգման գալը: Դրանք կարող են լինել դասարանական որևէ կարևոր իրադրության վերաբերյալ որոշումներ: • Իրավիճակների առաջադրում, քննարկում Տարբեր պատմությունների և իրավիճակների օրինակով քննարկել ծուլության և ջանասիրության հետևանքները: Քննել, որն է ավելի հեշտ, ինչպես անել, որ ջանասիրությունը դառնա հաճելի սովորություն և այլն: • Դերային, մարմնավորման (սիմուլյացիոն) խաղեր Իրավիճակների դերերով ներկայացման միջոցով ցույց տալ օրը ճիշտ և արդյունավետ տնօրինելու օգուտն ու անարդյունավետ տնօրինման վնասները: Ապա քննարկել դրանցից յուրաքանչյուրը՝ հիմնավորումներով: 	<p>0. Անհատ և հարաբերություններ ԱՆահատո զարգացման և սոցիալականացման կարևոր նախապայման են քննադատական և ստեղծագործական մտածողությունն ու որոշումներ կայացնելու հմտությունները, որոնք այսօրվա փոփոխվող ու մարտահրավերներով լի աշխարհում անքննելի են:</p> <p>1. Պատճառ և հետևանք Քննել ծուլության և ջանասիրության պատճառներն ու հետևանքները, ժամանակը արդյունավետ տնօրինելու անհրաժեշտությունն ու ժամանակի կորստի հետևանքները:</p> <p>2. Մասշտաբ, համամասնություն և քանակ Մարմանների փոքրիկ կառուցվածքային միավորների մասին խոսելով և մանրադիտակով տեսնելով կարող են պատկերացնել, որ կան կենդանի օրգանիզմներ, որոնք աչքով չենք տեսնում,</p>

<ul style="list-style-type: none"> • Աշխատանքային թերթիկներ՝ տարբեր տիպի առաջադրանքներով Օրգան-համակարգերի և դրանց առողջությունը խթանող, կամ խաթարող սովորությունների ցանկեր, որոնք պետք է գծերով միացնել: Կամ Օրգան-համակարգերի և դրանց տակ սյունակով բաղադրիչները լրացնելու թերթիկներ և այլն: • Նկարների, գծապատկերների և սխեմաների ստեղծումը Գծապատկերների, բավիղների ձևով ներկայացնել օրգան համակարգերի առանձին բաղադրիչներ, որոնք երեխաները կկարողանան խմբավորել, կամ միացնել տրամաբանական շղթայի մեջ • Փաստական նյութերի հետաքրքիր և խթանող ներկայացում Կարելի է փոքրիկ հանձնարարություններ տալ տեղեկություններ որոնելու և հիմնավորումներ գտնելու, ներկայացնելու թեմայի տարբեր նյութեր վերաբերյալ, օրինակ՝ ծխախոտի վնասների, մարզվելու օգուտների, առողջ սնվելու, կաթնամթերք շատ օգտագործելու վերաբերյալ և այլն: • Հարցադրումների սահմանում Խմբային կամ անհատական աշխատանքներ անելիս կարևոր են հարցադրումներ անելը, ինչ հարցի շուրջ պետք է կառուցել աշխատանքը • Խաչբառների, գլուխկոտրուկների, հանելուկների կազմում, լուծում Կարելի է խմբերին հանձնարարել կազմել գլուխկոտրուկներ մյուս խմբերի համար, նման աշխատանքները բազմաթիվ կարողություններ են զարգացնում: • Փորձեր Ստուգել սրտի զարկերը՝ հաշվել, գրանցել, չափել թոքերի ծավալը: Ոսկրերի ամրության վերաբերյալ փորձ կարելի է անել՝ հավի ոսկրերը քացախի մեջ դնելով: Փորձով կհամոզվեն, որ կալցիումը ամրություն է հաղորդում ոսկրերին, և պետք է շատ կաթնամթերք օգտագործել: Զգայարանների հետ կարելի է բազմաթիվ փորձեր անել՝ համի, հոտի զգացողության, արագ արձագանքելու և այլն: • Գաղափարների և հասկացությունների սահմանում և վերհանում • Մրցույթներ, վիկտորինաներ, հանդեսներ • Ուսուցողական ֆիլմերի դիտումներ, քննարկում • Թեմատիկ միավորի վերաբերյալ առաջադրանքներ • Դասարանական քննարկումներ և դեբատներ • Շնորհանդեսներ՝ գրավոր, բանավոր, տեսողական 	<p>բայց դրանք շատ կարևոր են ու ազդեցություն ունեն մեր կյանքի վրա:</p> <p>3. Համակարգեր և մոդելներ Մարմնի օրգան համակարգերի մասին տարրական գիտելիքներ փոխանցել իրենց հայտնի համակարգերի օրինակով՝ հեծանիվ, մեքենա... կարող են տեսնել թե ինչպես համակարգի մի օղակի չգործելը կամ բացակայությունը ազդում է ողջ համակարգի աշխատանքի վրա:</p> <p>4. Էներգիա և նյութ Կարող են տեսնել, որ այդ համակարգերից շատերը չեն աշխատում էներգիայի բացակայության դեպքում, օրինակ եթե էլեկտրական սարքավորումները չսնուցվեն հոսանքից, չեն կարող աշխատել:</p> <p>5. Կառուցվածք և գործառույթ Կարող են պատկերով օրինակներով տեսնել, որ կենդանիների և մարդու օրգան-համակարգերից շատերը շատ նման են իրենց կառուցվածքով և կատարում են նույն գործառույթը:</p>
Միջառարկայական կապեր	
<p>Մայրենի</p> <ul style="list-style-type: none"> • Կարողանա կառուցել դատողական, վերլուծական բնույթի խոսք, բացատրի թեմայի ընթացքում օգտագործվող բառերի իմաստները, գտնի առաջադրված բառերի հոմանիշները, հականիշները, կարողանա ճիշտ օգտագործել թեմայի ընթացքում սովորած բառերը՝ կազմելով բառակապակցություններ, նախադասություններ: 	

Մաթեմատիկա

- Իմանա ժամանակի չափման միավորները:
- Կարողանա գործողություններ կատարել անվանական թվերի հետ:
- Կարողանա կատարել անցումներ ժամանակի չափման միավորների չափողականությունների միջև (դարտարի, օր-ժամ, ժամ-րոպե-վայրկյան):

Ֆիզկուլտուրա

- Կարողանա թիմային խաղերի ժամանակ կարևորել սեփական ջանասիրությունը՝ հաղթանակի հասնելու գործում, կամ վերլուծել, թե ինչն էր պատճառը պարտության:
- Կարևորի մարմինը կոփելու, ուղիղ նստելու, ճիշտ քայլելու անհրաժեշտությունը՝ որպես առողջության պահպանման գրավական:

Տեխնոլոգիա

- Կարևորի ժամանակը ճիշտ բաշխելու գործոնը ցանկացած աշխատանք կատարելիս՝ ամրապնդելով ժամանակի զգացողությունը:
- Տեխնիկայի տարրերը սովորելիս կարողանա համեմատել մարդու օրգան համակարգերը իրենց հայտնի համակարգերի (ավտոմեքենա, սառնարան) հետ և բացատրել, որ համակարգի մի օղակի չգործելը կամ բացակայությունը ազդում է ողջ համակարգի աշխատանքի վրա:

Օտար լեզու

- Կարողանա սովորել և գրել մարմնի մասերի անվանումները և հարստացնել սեփական բառապաշարը:

Ներառարկայական կապեր

Ներառարկայական կապերը բազմաթիվ են, «Մարմինը» թեման սերտորեն առնչվում թ և՛ առողջ սնուցման, և՛ վնասակար սովորությունների, և վարակիչ և ոչ վարակիչ հիվանդությունների թեմաների հետ, նաև՝ ուղղակի վերջնարդյունքներով՝ **3ՇԵ-ԱՎ-Վ1, 3ՇԵ-ԱՍ-Վ3:**

Կապը Հանրակրթության պետական չափորոշի տարրական դպրոցի վերջնարդյունքների հետ

Թեմային ուղղակի առնչվող – S9, S27, S28, S35

Թեմային մասամբ առնչվող – S1, S2, S7, S8, S12, S16, S22, S23, S31

Ես		
Անվտանգություն		
Առողջ սնուցում (4 ժամ)	Արտակարգ իրավիճակներ (2 ժամ)	Վնասակար սովորություններ Վարակիչ և ոչ վարակիչ հիվան դությունների կանխարգելում (2 ժամ)
ԹԵՄԱ ԻՄ ԱՌՈՂՋՈՒԹՅՈՒՆԸ (8 ժամ)		
Նպատակ		
<ul style="list-style-type: none"> Պատկերացում տալ առողջ սննդի հիմնական բաղադրիչների, օրվա ռացիոնի, բուսական և կենդանական սննդի մասին՝ բացատրելով, որ առողջ սնունդն է մարմնի աճի և զարգացման հիմնական գործոն, ինչպես նաև եռանդի, էներգիայի, ֆիզիկական ակտիվության աղբյուր: Օգնել գիտակցել, թե ինչ վտանգներ կարող են հանդիպել տանը, դպրոցում և փողոցում, բնության գրկում, ինչպես կողմնորոշվել արտակարգ իրավիճակներում: Օգնել, որ սովորողները կարողանան կարևորել արդյունավետ գնումներ կատարելու կարևորությունը՝ գնելով առողջ սնունդ, ստուգելով արտադրման ժամկետները՝ խուսափելով տարբեր վարակիչ հիվանդություններից: 		
Առարկայի ընդհանրական չափորոշչային վերջնարդյունքներ		
<p>Առողջ սնուցում</p> <p>ՇԵ-ԱՍ-Վ1 Բացատրել առողջ սնուցման բնութագրիչները՝ բամազանությունը, օրվա ռացիոնը, ընդունման պարբերականությունը և անվտանգությունը: :</p> <p>ՇԵ-ԱՍ-Վ2 Բացատրել, որ սնունդը ապահովում է օրգանիզմի էներգիան, որն էլ ապահովում է ֆիզիկական ակտիվությունը:</p> <p>ՇԵ-ԱՍ-Վ3 Ներկայացնել ջրի նշանակությունը մարդու օրգանիզմի նյութափոխանակության համար:</p>		
<p>Արտակարգ իրավիճակներ</p> <p>ՇԵ-ԱԻ-Վ1 Ցուցադրել տարբեր հնարավոր աղետների և արտակարգ իրավիճակների ժամանակ խուճապի, չմատնվելու կողմնորոշվելու, անվտանգության կանոնների և քայլերի հաջորդականության իմացություն, ցուցադրել առաջին օգնության պարզ եղանակներ:</p>		
<p>Վնասակար սովորություններ</p> <p>Վարակիչ և ոչ վարակիչ հիվանդությունների կանխարգելում</p> <p>ՇԵ-ԱՎ-Վ1 Տարբերակել վնասակար սովորությունները՝ այդ թվում ծխելը, ալկոհոլ և այլ վնասակար նյութեր օգտագործելը և խուսափել դրանցից, թվարկել որոշ վարակիչ հիվանդություններ և կիրառել դրանք կանխարգելելուն ուղղված վարքագիծ:</p> <p>ՇԵ-ԱՎ-Վ2 Դրսևորել ռիսկերից խուսափելուն և առողջությանը միտված վարքագիծ:</p>		
Թեմայի վերջնարդյունքները		
<p>Առողջ սնուցում</p> <p>3ՇԵ-ԱՍ-Վ1 Բացատրել սննդի բազմազանության անհրաժեշտությունը, առողջ ափսեի պարունակությունը:</p> <p>3ՇԵ-ԱՍ-Վ1 Տարբերակել սննդի հիմնական և լրացուցիչ (միջանկյալ) ընդունումը, կարողանալ ընտրել միջանկյալ սնունդի առողջ տարբերակներ</p>		

- 3ՇԵ-ԱՍ-Վ1** Մեկնաբանել, որ որոշ սննդատեսակներ և ըմպելիքներ պետք է սահմանափակել (աղ, անառողջ ճարպերի և շաքար շատ պարունակող սնունդ, գազավորված ըմպելիքներ), կարողանալ տարբերակել դրանք
- 3ՇԵ-ԱՍ-Վ1** Նշել սննդի ընդունման նույն պարբերականության պահպանման կարևորությունը:
- 3ՇԵ-ԱՍ-Վ1** Բացատրել շատ և անբավարար ուտելու հետևանքները առողջության վրա:
- 3ՇԵ-ԱՍ-Վ1** Եզրահանգել, որ առողջ նախաճաշ պետք է անել ամեն օր:

Արտակարգ իրավիճակներ

- 3ՇԵ-ԱԻ-Վ1** Բացատրել, հիմնավորել մաշկի ամբողջականության խախտման պատճառ հանդիսացող իրավիճակներից խուսափելու անհրաժեշտությունը
- 3ՇԵ-ԱԻ-Վ1** Նշել ցուցադրել անհրաժեշտ վարքականոնները, գործնական պարապմունքների ժամանակ, որոշ (տեղանքին բնորոշ) բնական աղետների դեպքում
- 3ՇԵ-ԱԻ-Վ1** Դրսևորել խուճապի չմատնվելու, հրահանգներին հետևելու, ինքնատիրապետման և համապատասխան վարքագիծ դրսևորելու կարողություն:

Վնասակար սովորություններ

Վարակիչ և ոչ վարակիչ հիվանդությունների կանխարգելում

- 3ՇԵ-ԱՎ-Վ1** Բացատրել տարբեր վնասակար սովորությունների հետևանքները տարբեր օրգան-համակարգերի վրա. Օրինակ՝ ծխելը և ծուխը՝ շնչառական համակարգի, սիրտանոթային համակարգի վրա, ալկոհոլը՝ ուղեղի, մարդու վարքագծի և լյարդի վրա և այլ
- 3ՇԵ-ԱՎ-Վ1** Թվարկում է պատվաստումների միջոցով կանխարգելվող տարածված հիվանդությունները՝ խոզուկ, կարմրուկ, կարմրախտ, պոլիոմիելիտ, ջրծաղիկ, դիֆթերիա, կատաղություն

Բովանդակություն

- Սննդի բազմազանության անհրաժեշտությունը, առողջ ափսեի պարունակությունը:
- Սննդի հիմնական և լրացուցիչ (միջանկյալ) ընդունում, միջանկյալ սնունդի առողջ տարբերակներ:
- Որոշ սննդատեսակների և ըմպելիքների սահմանափակման անհրաժեշտություն (աղ, անառողջ ճարպերի և շաքար շատ պարունակող սնունդ, գազավորված ըմպելիքներ),
- Սննդի ընդունման նույն պարբերականության պահպանման կարևորությունը
- Նախաճաշի կարևորությունը, սննդի չարաշահման և անբավարար սնվելու հետևանքները
- Մաշկի ամբողջականության խախտման պատճառ հանդիսացող իրավիճակներից խուսափելու անհրաժեշտությունը:
- Առաջին օգնություն, մարմնի գերսառեցման, արևահարության, այրվածքների և վերքերի դեպքում:
- Վարքականոնները, գործնական պարապմունքների ժամանակ, որոշ (տեղանքին բնորոշ) բնական աղետների դեպքում
- Խուճապի չմատնվելու, հրահանգներին հետևելու, ինքնատիրապետման և համապատասխան վարքագիծ դրսևորելու կարևորությունը:
- Վնասակար սովորությունների ազդեցությունը տարբեր օրգան-համակարգերի վրա:
- Պատվաստումներով կանխարգելվող հիվանդությունները:

Առաջարկվող գործունեության ձևեր	Խաչվող գաղափարներ
---------------------------------------	--------------------------

- | | |
|---|---|
| <ul style="list-style-type: none"> • Ուսումնական տարբեր նպատակներով կիրառվող խաղեր
Տրված քարտերով (սննդամթերքների նկարներով կամ անվանումներով) կազմել առողջ ափսեի պարունակություն: կարող են և նկարել՝ ափսեի պարունակությունը: Համեմատել և համոզվել որ տարբերակները կարող են բազմազան լինել: • Խմբային, համագործակցային առաջադրանքներ
Տարբեր խաղեր, որոնք կխթանեն աշակերտների՝ խմբով որոշումներ կայացնելը, դրանց թեր և դեմ կողմերը քննելը, | <ul style="list-style-type: none"> • Անհատ և հասարակություն
Երեխաները պետք է հնարավորություն ունենան համոզվելու, որ իրենք կարող են ընտրել իրենց սնունդը, և այն պետք է առողջ լինի, որ կարող են ավելի ապահով վարք դրսևորել և խուսափել վտանգներից, որ կարող են իմանալ և խուսափել տարբեր վարակիչ հիվանդություններից: • Օրինաչափություններ |
|---|---|

քննադատաբար վերլուծելն ու եզրահանգման գալը: Դրանք կարող են լինել թեմայի, օրինակ արտակարգ իրավիճակային կամ առաջին օգնության որևէ խնդրի վերաբերյալ որոշումներ:

• **Իրավիճակների առաջադրում, քննարկում**

Տարբեր պատմությունների և իրավիճակների օրինակով **քննարկել** սննդի չարաշահման և անբավարար սնվելու հետևանքները և **հետևություններ անել:**

• **Դերային, մարմնավորման (սիմուլյացիոն) խաղեր**

Առողջ սննդամթերքը **ընտրելու**, վնասակար սննդից **հրաժարվելու** դերային խաղեր, օրինակ՝ խանութ-խանութ խաղի միջոցով (վաճառողը կունենա մթերքներ և դրանց գնապիտակները, իսկ գնորդները՝ դրամի փոխարինիչներ): Իրենց գումարին համապատասխան պետք է առողջ սնունդ **ընտրեն:** Այս խաղը կարելի է խաղալ և խմբերով՝ **միասին որոշումներ կայացնելով:** Ապա **քննարկել** դրանցից յուրաքանչյուրը՝ **հիմնավորումներով:**

• **Աշխատանքային թերթիկներ՝ տարբեր տիպի առաջադրանքներով**

Օրգան-համակարգերի և դրանց առողջությունը խթանող, կամ խաթարող սովորությունների ցանկեր, որոնք պետք է **ընտրել և գծերով միացնել:** Կամ Օրգան-համակարգերի և դրանց տակ բաղադրիչները **լրացնելու թերթիկներ** և այլն:

• **Նկարների, գծապատկերների և սխեմաների ստեղծումը**

Գծապատկերների, բավիղների ձևով ներկայացնել օրգան համակարգերի առանձին բաղադրիչներ, որոնք երեխաները կկարողանան խմբավորել, կամ միացնել տրամաբանական շղթայի մեջ

• **Մեղիագրագիտության հմտությունների կիրառումը՝ տեղեկույթ ու փաստարկներ որոնելու համար**

Կարելի է փոքրիկ հանձնարարություններ տալ տեղեկություններ որոնելու և հիմնավորումներ գտնելու, ներկայացնելու թեմայի տարբեր նյութեր վերաբերյալ, օրինակ՝ ծխախոտի վնասների, մարզվելու օգուտների, առողջ սնվելու, կաթնամթերք շատ օգտագործելու վերաբերյալ և այլն:

• **Հարցադրումների սահմանում**

Խմբային կամ անհատական աշխատանքներ անելիս կարևոր են հարցադրումներ անելը, ինչ հարցի շուրջ պետք է կառուցել աշխատանքը:

• **Խաչբառների, գլուխկոտրուկների, հանելուկների կազմում, լուծում**

Կարելի է խմբերին հանձնարարել **կազմել գլուխկոտրուկներ** մյուս խմբերի համար, նման աշխատանքները բազմաթիվ կարողություններ են զարգացնում:

• **Փորձեր**

Ստուգել սրտի զարկերը՝ հաշվել, գրանցել, չափել թոքերի ծավալը:

Ոսկրերի ամրության վերաբերյալ փորձ կարելի է անել՝ հավի ոսկրերը քացախի մեջ դնելով: Փորձով կհամոզվեն, որ

Գիտակցել, որ մեր ընտրությունները պայմանավորում են մեր առողջությունը, որ ս հաճախ մեր վարքագծով կարող ենք կանխել հիվանդություններ և ճիշտ ապրելակերպով նաև բուժել դրանք: Մարմինը փոխկախված համակարգ է, և մեր բոլոր գործողությունները բերում են կանխատեսելի և օրինաչափ արդյունքեր, ինչպես դրական, այնպես էլ՝ բացասական:

• **Պատճառ և հետևանք**

Քննել վտանգավոր իրավիճակներում հայտնվելու պատճառահետևանքային կապերը: Քննել այն վարքագծերը, որոնք կարող են փոխել նման իրավիճակներն ու հետևանքները: Շատ կարևոր է, որ երեխաները կարողանան կանխատեսել տարբեր իրավիճակների հետևանքները և իմանան նման իրավիճակներում գործելու քայլերը:

• **Էներգիա և նյութ**

Մնունդը դիտարկել որպես մարմնի աճի և զարգացման հիմնական գործոն, ինչպես նաև եռանդի, էներգիայի աղբյուր: Տարբերել, թե որոնք են էներգիա փոխանցող հիմնական սննդատեսակները:

Գիտակցել սննդի չարաշահման, էներգիան ծախսելու և ֆիզիկական ակտիվության վերաբերյալ տեղեկացվածությունը:

• **Կայունություն և փոփոխություն**

Ցանկացած անսպասելի իրավիճակ կամ վտանգ կարող է խախտել կայունությունը և այդ փոփոխությանը պետք է պատրաստ լինել և իմանալ կողմնորոշվելու և ճիշտ գործելու կանոններ:

<p>կալցիումը ամրություն է հաղորդում ոսկրերին, և պետք է շատ կաթնամթերք օգտագործել: Զգայարանների հետ կարելի է բազմաթիվ փորձեր անել՝ համի, հոտի զգացողության, արագ արձագանքելու և այլն:</p> <ul style="list-style-type: none"> • Գաղափարների և հասկացությունների սահմանում և վերհանում • Մրցույթներ, վիկտորինաներ, հանդեսներ • Ուսուցողական ֆիլմերի դիտումներ, քննարկում • Թեմատիկ միավորի վերաբերյալ առաջադրանքներ • Դասարանական քննարկումներ և դեբատներ • Շնորհանդեսներ՝ գրավոր, բանավոր, տեսողական 	
--	--

Միջառարկայական կապեր

<p>Մայրենի</p> <ul style="list-style-type: none"> • Կարողանա կառուցել դատողական, վերլուծական բնույթի խոսք, կատարի հիմնավորումներ: • Կատարի վերլուծություններ՝ օգտագործելով թեմայի ընթացքում սովորած բառերը: • Կարողանա լրացնել տեքստը՝ ընտրելով համապատասխան բառեր, բառակապակցություններ: • կարողանա հորինել ավարտ առաջադրված իրավիճակների համար: <p>Մաթեմատիկա</p> <ul style="list-style-type: none"> • Կարողանա կատարել պարզագույն ֆինանսական գործողություններ՝ վերլուծելով իրավիճակը, կարևորելով արդյունավետ գնումներ կատարելը: <p>Արվեստ</p> <ul style="list-style-type: none"> • Կարողանա դերախաղով ներկայացնել գնումներ կատարելու գործընթացը՝ կիրառելով թեմայի ընթացքում սովորած բառապաշարը: • Կարողանա տարբերակել առողջ և փչացած սնունդը՝ հորինելով և նկարելով համապատասխան նշաններ: <p>Տեխնոլոգիա</p> <ul style="list-style-type: none"> • Սննդի մասին խոսելիս, կամ պարզագույն ուտեստներ պատրաստելիս, կարողանա օգտագործել ստացած գիտելիքը օրվա ռացիոնի, առողջ սննդի մասին: • Կարողանա բացատրել, որ առողջությունը կախված է նաև մաքուր միջավայրից, սանիտարական պատշաճ պայմաններից, որոնք և կպաշտպանեն տարատեսակ վարակներից: <p>Օտար լեզու</p> <ul style="list-style-type: none"> • Սովորի և կարողանա անվանել սննդատեսակները՝ կազմելով պարզ նախադասություններ:
--

Ներառարկայական կապեր

<ul style="list-style-type: none"> • Առողջ սնուցման թեման կապվում է մարմնի կազմության, մարսողության, զգայարանների՝ համի, հոտի զգացողության, ատամների, բերանի խոռոչի, ձեռքերի, սննդի հիգիենայի հետ: • Բնության մեջ անվտանգության թեման կապվում է բնության, բույսերի և կենանիների, տեղանքի ուսումնասիրության, բնության գրկում դիտումների հետ: • Վնասակար սովորություններ և վարակիչ հիվանդությունների կանխարգելումը կապվում է հիգիենայի պահպանման հետ, ինչպես նաև, ինքնագնահատման, ինքնաճանաչման և ինքնարտահայտման թեմաների հետ:
--

Կապը Հանրակրթության պետական չափորոշչի տարրական դպրոցի վերջնարդյունքների հետ

<p>Թեմային ուղղակի առնչվող – S9, S12, S20, S33, S35 Թեմային մասամբ առնչվող – S1, S2, S7, S8, S22, S31</p>
--

Ես և մարդիկ		
Փոխհարաբերություններ		
Դպրոց (4 ժամ)	Իրավունքներ (4 ժամ)	Կոնֆլիկտ (4 ժամ)
ԵՍ ԵՎ ԸՆԿԵՐՆԵՐՍ (12 ժամ)		
Նպատակ		
<ul style="list-style-type: none"> • Օգնել հասկանալ, որ մարդկանց հետ փոխհարաբերությունները կարևոր են, որ այդ փոխհարաբերություններում պետք է հստակ արտահայտել սեփական կամքը, ցանկությունները և երբեք թույլ չտալ որևէ բան առանց իր ցանկության, երբ դա կարող է վնասել իրեն: • Օգնել տարբերակել առողջ, արդյունավետ շփումը անառողջ շփումից, բացատրել հետևանքները, տարբերել և հարգել մարդկանց միջև գոյություն ունեցող տարիքային, սեռային և այլ տարբերությունները: • Բացատրել, թե ինչ են կենսական կարիքները, տարբերակել կարիքները պահանջներից, ցանկություններից օրինակների միջոցով, ցույց տալ կարիքների և իրավունքների կապը: • Բացատրել սոցիալական նորմերի, իրավունքների և պարտականությունների կապը՝ մեկնաբանելով այն հետևանքները, որանք կարող են առաջանալ այս կամ այն իրավունքի խախտումից: • Տարրական գիտելիքներ տալ բռնության վերաբերյալ: 		
Առարկայի ընդհանրական չափորոշչային վերջնարդյունքներ		
<p>Դպրոց</p> <p>ՇՄ-ՓԴ-Վ1 Պահպանել դպրոցական համակեցության կանոնները, բերել մեծահասակների և հասակակիցների վարքագծի դրական և բացասական ազդեցության օրինակներ, հստակ արտահայտել ցանկություններն ու կամքը, թույլ չտալ որևէ բան առանց իր ցանկության, երբ դա կարող է վնասել իրեն:</p> <p>ՇՄ-ՓԴ-Վ2 Կարևորել փոխօգնությունը, միմյանց հանդեպ բարեհաճ և փոխվստահող փոխհարաբերություններ ստեղծելու կամք ցուցաբերել:</p> <p>ՇՄ-ՓԴ-Վ3 Բնութագրել և համապատասխանել բնութագրին, թե ինչպիսին պետք է լինի ընկերը, ո՞ր որակներն են բնորոշ լավ ընկերոջը, կարողանալ ձեռք բերել և պահպանել ընկերությունը:</p> <p>ՇՄ-ՓԴ-Վ4 Բացատրել, օրինակներ բերել, որ բոլոր մարդիկ կարող են ունենալ նախասիրություններ և հետաքրքրություններ, որոնք պայմանավորված են անհատական առանձնահատկություններով և անձնային որակներով:</p>		
<p>Իրավունքներ</p> <p>ՇՄ-ՓԻ-Վ1 Նկարագրել իրավունքների և քաղաքացիական պատասխանատվության հիմնական բաղադրիչները, որոնք հնարավորություն են տալիս իրենց հասարակությանը դուրս գալ ավելի զարգացած, ներդաշնակ ուղի:</p> <p>ՇՄ-ՓԻ-Վ2 Կանխատեսել իր և ուրիշների արարքների հնարավոր հետևանքները, գնահատել դրանք, ունենալ անձնական դիրքորոշում:</p>		
<p>Կոնֆլիկտ</p> <p>ՇՄ-ՓԿ-Վ1 Ցուցաբերել արդյունավետ շփման, կոնֆլիկտները խաղաղ կարգավորելու ուղղված վարքագիծ:</p> <p>ՇՄ-ՓԿ-Վ2 Տարբերակել բռնության տարբեր դրսևորումները հասակակիցների և մեծահասակների կողմից/միջև, հրաժարվել բռնության բոլոր ձևերից, աջակցել բռնության ենթարկվածին:</p> <p>ՇՄ-ՓԿ-Վ3 Տարբերակել փաստը տեսակետից:</p> <p>ՇՄ-ՓԿ-Վ4 Նկարագրել և բերել օրինակներ ազատության, արդարության և հավասարության, պատասխանատվության, հանդուրժողականության վերաբերյալ:</p>		

Թեմայի վերջնարդյունքները

Դպրոց

3ՇՄ-ՓԴ-Վ2 Մեկնաբանել շրջապատի մարդկանց հետ փոխհարաբերությունների կարևորությունը:

3ՇՄ-ՓԴ-Վ2 Թվարկել և ցուցադրել շփման տարբեր ձևեր՝ վերբալ և ոչ վերբալ:

3ՇՄ-ՓԴ-Վ1 Հստակ արտահայտել ցանկություններն ու կամքը, թույլ չտալ որևէ բան առանց իր ցանկության, երբ դա կարող է վնասել իրեն:

3ՇՄ-ՓԴ-Վ3 Տարբերակել մարդկանց միջև գոյություն ունեցող տարիքային, սեռային տարբերությունները:

3ՇՄ-ՓԴ-Վ4 Բացատրել, օրինակներ բերել, որ բոլոր մարդիկ կարող են ունենալ նախասիրություններ և հետաքրքրություններ, որոնք պայմանավորված են անհատական առանձնահատկություններով և անձնային որակներով:

3ՇՄ-ՓԴ-Վ2 Տարբերակել առողջ, արդյունավետ շփումը (վստահության, հարգանքի, ազնվության փոխհամաձայնության վրա հիմնված), անառողջ շփումից (անհարգալից, լարված, կոնֆլիկտային) երեխաների, մեծահասակների, հասակակիցների և այլ մարդկանց միջև:

Իրավունքներ

3ՇՄ-ՓԻ-Վ1 Թվարկել մարդկանց կենսական կարիքները, տարբերակել կարիքները պահանջներից, ցանկություններից, բացատրել կարիքների և իրավունքների կապը:

3ՇՄ-ՓԻ-Վ1 Ճանաչել և պաշտպանել իր և մյուսների իրավունքները:

3ՇՄ-ՓԻ-Վ1 Բացատրել՝ երբ և ինչպիսի իրավիճակներում կարող են դրանք խախտվել

3ՇՄ-ՓԻ-Վ1 Բացատրել սոցիալական նորմերի, իրավունքների և պարտականությունների կապը:

3ՇՄ-ՓԻ-Վ2 Կանխատեսել իր և մյուսների արարքների հնարավոր հետևանքները, քննադատաբար վերլուծել և գնահատել դրանք՝ դրական, բացասական:

Կոնֆլիկտ

3ՇՄ-ՓԿ-Վ2 Տարբերել բռնության տարբեր դրսևորումները հասակակիցների և մեծահասակների կողմց, միջև.(դաժան վերաբերմունք, ֆիզկական և հոգեբանական ճնշում, բռնություն, հալածանք/բուլինգ՝ պարբերաբար կրկնվող բռնություն),

3ՇՄ-ՓԿ-Վ2 Համարել բռնության բոլոր դրսևորումները անթույլատրելի, վնասակար և վտանգավոր բոլորի համար:

3ՇՄ-ՓԿ-Վ2 Բացատրել, որ բոլոր մարդիկ իրավունք ունեն օգնության և պաշտպանված լինելու

3ՇՄ-ՓԿ-Վ2 Մասնակից չլինել և պատրաստակամ լինել օգնելու ընկերոջը, եթե նրան բռնության են ենթարկում:

3ՇՄ-ՓԿ-Վ2 Իմանալ, թե մեծերից ում կարող են վստահել և պատմել իրենց, կամ ընկերոջ հետ պատահածի մասին:

Բովանդակություն

- Փոխհարաբերությունները շրջապատի մարդկանց հետ: Շփման տարբեր ձևեր՝ խոսքային և ոչ խոսքային: Առողջ և արդյունավետ շփում:
- Նախասիրություններ, հետաքրքրություններ, ցանկություններ և կամք:
- Մարդկանց կենսական կարիքների, պահանջների, ցանկությունների տարբերությունները, կարիքների և իրավունքների կապը:
- Իր և մյուսների իրավունքները
- Սոցիալական նորմերի, իրավունքների և պարտականությունների կապը:
- Իր և մյուսների արարքների հնարավոր հետևանքները, քննադատաբար վերլուծել և գնահատել (դրական և բացասական):
- Բռնության տարբեր դրսևորումները հասակակիցների և մեծահասակների կողմից (դաժան վերաբերմունք, ֆիզիկական և հոգեբանական ճնշում, բռնություն, հալածանք/բուլինգ՝ պարբերաբար կրկնվող բռնություն):
- Բոլոր մարդիկ իրավունք ունեն օգնության և պաշտպանված լինելու:
- Պատրաստակամություն՝ բռնության ենթարկված ընկերոջը օգնելու:
- Իրենց, կամ ընկերոջ հետ պատահածի մասին վստահելի մեծահասակի պատմելու կարևորությունը:

Առաջարկվող գործունեության ձևեր	Խաչվող գաղափարներ
<ul style="list-style-type: none"> <p>Ուսումնական տարբեր նպատակներով կիրառվող խաղեր</p> <p>Վստահություն ձևավորող վարժություններ՝ միմյանց հետ սեփական ապրումները կիսելու, ընկերության և դրական փոխհարաբերությունների մասին իրենց պատկերացումները փոխանակելու հնարավորություն ընձեռել: Ինչ են սիրում, և ինչը չեն սիրում, ինչն են գնահատում ընկերության մեջ և ինչն իրենց դուր չի գալիս, ինչ երազանքներ ունեն, ինչից են վախենում և զգուշանում: Նման հարցերի շուրջ միասին կարծիքներ փոխանակելը խթանում է փոխադարձ վստահության մթնոլորտը, ձևավորում ապրումակցում: Նման հարցերի շուրջ քննարկումներ անցկացնել, էսսե գրել և այլն: Խոսքային և ոչ խոսքային հաղորդակցման ձևեր քննարկել, ցուցադրել, դիտարկել, թե դիմախաղը և կեցվածքը ինչպես կարող են ազդել ասելիքի վրա: Նման վարժությունների ընթացքում պետք է հատուկ ուշադրություն դարձնել, որ աղջիկների և տղաների միջև տարբերություններ չդրվեն, հասկանան, որ մարդկային որակներն ու արժանիքները հավասարապես երկուսինն են և տարբեր լինելով՝ նրանք ունեն հավասար իրավունքներ և պետք է օգտվեն հավասար հնարավորություններից:</p> <p>Խմբային, համագործակցային առաջադրանքներ</p> <p>Վերևում նկարագրած աշխատանքները կարելի է նաև համագործակցային խմբերով անել: Խմբերով կարող են կարիքների, ցանկությունների և պահանջների ցանկ կազմել և փորձել կարիքների և իրավունքների միջև կապ տեսնել: Կրկին պետք է շեշտադրվեն աղջիկների և տղաների իրավահավասարության գաղափարները:</p> <p>Իրավիճակների առաջադրում, քննարկում</p> <p>Տարբեր կոնֆլիկտային իրավիճակներ ներկայացնել, որոնք կարող են վերաճել ավելի լուրջ վեճերի, դառնալ բռնության պատճառ: Նման իրավիճակներ քննարկել, որոնց միջոցով կարելի է դուրս բերել բռնության տարբեր դրսևորումներ՝ հոգեբանական, ֆիզիկական, ճնշում, ենթարկեցում, հալածանք և այլն: Տարբերել դրանք և հասկանալ, թե ինչպես կարելի է դրանցից խուսափել, կամ հաղթահարել: Վստահելի մեծահասակին տեղեկացնելու կարևորությունը շեշտադրելով:</p> <p>Դերային, մարմնավորման (սիմուլյացիոն) խաղեր</p> <p>Դերային, նմանակման վարժություններով կարելի է խաղարկել տարբեր կոնֆլիկտային իրավիճակներ, հետո երկու տարբեր լուծումներ խաղարկել՝ դրական և բացասական՝ կանխատեսելով հետևանքները:</p> <p>Դասարանական քննարկումներ և դեբատներ</p> <p>Այս թեմայում եղած բոլոր բաղադրիչները կարելի է վերաճել դեբատների, բանավեճերի թեմա: Խրախուսել, որ հարցադրումները երեխաներն իրենք առաջ քաշեն:</p> <p>Ուսուցողական ֆիլմերի դիտումներ, քննարկում</p> <p>Կարելի է տարբեր փոքրիկ ֆիլմեր դիտել և քննարկել, երեխայի իրավունքների, բռնության հալածանքի մասին:</p> 	<ul style="list-style-type: none"> <p>Անհատ և հասարակություն</p> <p>Անհատական և մշակութային արտահայտում</p> <p>Պետք է կիրառել շփման տարբեր ձևեր և դրանք ավելի առողջ և արդյունավետ դրաձնելու պատճառները հիմնավորել, որ դրանք անհրաժեշտ են բոլոր իրավիճակներում, ստեղծել առողջ փոխհարաբերություններ ընկերների, ընտանիքի, ուսուցիչների և համայնքի և տարբեր սոցիալական խմբերի հետ: Ինքնարտահայտման և ինքնադրսևորման տարբեր միջոցներից կարողանան օգտվել և ստեղծագործել:</p> <p>Արդարություն և զարգացում</p> <p>Պետք է հնարավորություն տալ մատչելի ձևով ընկալելու իրավունքների և պարտականությունների դերը իրենց կյանքում և համընդհանուր արդարության համատեքստում, սոցիալական նորմերի և իրավունքների կապը, կանանց և տղամարդկան իրավահավասարությունը, բռնության ցանկացած ձևից հրաժարումն ու պաշտպանությունը:</p> <p>Պատճառ և հետևանք</p> <p>Հնարավորություն տալ մտորելու հասարակության տարբեր խմբերի միջև եղած կոնֆլիկտների, անհանդուրժողականության, որևէ մեկի գերակայության պատճառների ու դրանց հետևանքների վերաբերյալ:</p>

<ul style="list-style-type: none"> • Փաստական նյութերի հետաքրքիր և խթանող ներկայացում Խթանել, որպեսզի երեխաներն իրենք գտնեն նման նյութեր և փաստական տվյալներ և ընտրել ներկայացնելու իրենց հարմար ձևը: • Տեքստի հետ ուսումնասիրման աշխատանքները Տարբեր տեքստային իրավիճակներ ցուցադրելիս և քննարկելիս, պետք է զարգացնել փաստի և տեսակետի զանազանումը: • Հարցադրումների սահմանում • Գիտական բառապաշարի և լեզվի գործածում • Գաղափարների և հասկացությունների սահմանում և վերհանում • Շնորհանդեսներ՝ գրավոր, բանավոր, տեսողական • Աշխատանքային թերթիկներ՝ տարբեր տիպի առաջադրանքներով • Թեմատիկ միավորի վերաբերյալ առաջադրանքներ 	
---	--

Միջառարկայական կապեր

<p>Մայրենի</p> <ul style="list-style-type: none"> • Կարողանա մտքերը ձևակերպել հստակ, հասկանալի, տրամաբանված, օգտագործի այն բառերն ու բառակապակցությունները, որոնք սովորել է թեմայի ընթացքում: • Կարողանա բնութագրել դասընկերոջը, դպրոցական միջավայրը՝ գրելով փոքրիկ պատմություն կամ բանավոր խոսքի միջոցով՝ ստեղծելով նկարագրական բնույթի խոսք: • Կարողանա ստեղծագործել՝ հորինելով հնգյակներ, աքրոստիկոսներ: • Մասնակցի գրական որևէ ստեղծագործության կամ իրավիճակային քննարկման, մասնակցի երկխոսության՝ ձեռք բերելով բանավիճելու հմտություններ: • Կարողանա բառախմբում կատարել դասակարգում՝ կարիք ցույց տվող բառերը առանձնացնել ցանկություն ցույց տվող բառերից • Տարբերակի կոնֆլիկտային բառերն ու արտահայտությունները հաշտություն արտահայտող բառերից և իմանա երբ գործածի դրանք: <p>Օտար լեզու</p> <ul style="list-style-type: none"> • Ձեռք բերի շփման վերաբերյալ թեմատիկ բառապաշարը: • Զարգացնի պարզ բառերով և կարճ նախադասություններով իրեն, իր կարիքները ներկայացնելու, ծանոթություն հաստատելու հմտություն: <p>Տեխնոլոգիա</p> <ul style="list-style-type: none"> • Կարողանա կարիքը տարբերել ցանկությունից (ձեռնարկատիրություն) • Կարողանա առարկաներ պատկերող նկարներում կատարել դասակարգում՝ կարիք – ցանկություն: <p>Ֆիզկուլտուրա</p> <ul style="list-style-type: none"> • Ձեռք բերի համագործակցելու, թիմում ներկայանալու, խաղի ժամանակ իր և ընկերների իրավունքները պահպանելու, իր պարտականությունները գիտակցելու կարողություններ: <p>Արվեստ</p> <ul style="list-style-type: none"> • Թեման ներկայացնելիս կարողանա և փորձի տիրապետել և վերբալ, և ոչ վերբալ հաղորդակցման ձևերին: • Դիտի և կարողանա մեկնաբանել նկարների բովանդակությունը՝ դատողություններ կատարելով: • Կարողանա արտահայտել զգացումներն ու հույզերը վեճերի, հաշտության, բռնության մասին:

Ներառարկայական կապեր

<ul style="list-style-type: none"> • Դպրոցի, Իրավունքների և Կոնֆլիկտների վերաբերյալ թեման կապվում է և համայնքի, ընտանիքի, ինքնաճանաչման թեմաների հետ, քանի որ սերտ առնչություն ունի անհատի դիքորոշումների, մանդկանց
--

հանդեպ վերաբերմունքի, բարեվարքության և արդյունավետ շփման հետ:

Կապը Հանրակրթության պետական չափորոշչի տարրական դպրոցի վերջնարդյունքների հետ

Թեմային ուղղակի առնչվող՝ S9, S22, S25

Թեմային մասամբ առնչվող՝ S1, S2, S7, S12, S15, S16, S23, S24, S29, S32

Ես և բնությունը	
Բնության բազմազանություն փոխազդեցություններ	
Օբյեկտներ՝ կենդանի, անկենդան (5 ժամ)	Կենդանի բնության օբյեկտները (5 ժամ)
ԹԵՄԱ ՄԵՐ ՄՈԼՈՐԱԿԻ ԲՆԱԿԻՉՆԵՐԸ (10 ժամ)	
Նպատակ	
<ul style="list-style-type: none"> Գաղափար տալ երկրագնդի տարբեր տեղանքներին բնորոշ կենդանական, բուսական աշխարհի և մարդկանց բազմազանության մասին՝ բացատրելով նաև, որ կենդանական և բուսական աշխարհը հարմարվում են իրենց կենսամիջավայրին և այդ միջավայրում ամեն ինչ փոխկապված են: Ծանոթացնել բույսերի կառուցվածքին՝ նկարագրելով դրանց հիմնական գործառույթները՝ հետազոտելով, ներկայացնելով սերմերի ծլման, աճի գործընթացը և դրա համար անհրաժեշտ պայմանները: Օգնել գիտակցել մարդու գործունեության ազդեցությունը բնության վրա, բնության դերը մարդու կյանքում: 	
Առարկայի ընդհանրական չափորոշչային վերջնարդյունքներ	
<p>Օբյեկտներ՝ կենդանի, անկենդան</p> <p>ՇԲ-ԲՕ-Վ1 Տարբերակել և բնութագրել կենդանի և անկենդան բնության օբյեկտները, մեկնաբանել դրանց միջև առկա փոխկախվածությունը և փոխազդեցությունները:</p> <p>ՇԲ-ԲՕ-Վ2 Ներկայացնել տարբեր գործոնների՝ եղանակ, քամի, տաք և սառը ջուր, ջրի քանակ և այլն, ազդեցությունը բույսերի աճի և զարգացման</p> <p>ՇԲ-ԲՕ-Վ3 Բնութագրել տարբեր տեղանքներին բնորոշ կենդանական, բուսական աշխարհը՝ ներառյալ մարդկանց, բազմազանությունն ու միջավայրին հարմարվողականությունը, այդ բազմազանության պահպանության անհրաժեշտությունը:</p> <p>Կենդանի բնության օբյեկտները</p> <p>ՇԲ-ԲԿ-Վ1 Նկարագրել, հիմնավորել, որ բնության մեջ գտնվող բուսական և կենդանական տեսակները դասակարգվում են ըստ տարբեր բնութագրերի, բերել տարբեր դասակարգումների օրինակներ:</p> <p>ՇԲ-ԲԿ-Վ2 Դիտարկել և նկարագրել բույսերի հիմնական մասերը, նկարագրել դրանց հիմնական գործառույթները, հետազոտել, ներկայացնել սերմերի ծլման, աճի գործընթացը և դրա համար անհրաժեշտ պայմանները:</p> <p>ՇԲ-ԲԿ-Վ3 Դիտարկել և բացատրել, որ բոլոր կենդանի օրգանիզմները բազմանում են և առաջացնում են իրենց նման, բայց ոչ կրկնօրինակ սերունդ:</p> <p>ՇԲ-ԲԿ-Վ4 Բացատրել, թե մարդը, կենդանիները և բույսերը որտեղից են ստանում իրենց սնունդը, նշելով, որ բույսերը արեգակնային էներգիայի հաշվին ստեղծում և կուտակում են սննդանյութեր, իսկ մարդը և կենդանիները սնվում են բույսերով կամ այլ կենդանիներով, սնման շղթաների օրինակներ բերել:</p>	
Թեմայի վերջնարդյունքները	
<p>Օբյեկտներ՝ կենդանի, անկենդան</p> <p>ՅՇԲ-ԲՕ-Վ3 Նկարագրել երկրագնդի տարբեր տեղանքներին բնորոշ կենդանական, բուսական աշխարհի և մարդկանց բազմազանությունը:</p> <p>ՅՇԲ-ԲՕ-Վ3 Բացատրել, որ կենդանական և բուսական աշխարհը հարմարվում է այն կենսամիջավայրին, որտեղ նրանք ապրում և բազմանում են:</p>	

ՇԲ-ԲՕ-Վ2 Բացատրել և փորձերով համոզվել, որ կենդանի օրգանիզմները, ինչպես նաև նրանց կենսամիջավայրը (հող, օդ, ջուր) փոխկապված են:

ՅՇԲ-ԲՓ-Վ3 Բացատրել վերացող կենդանատեսակների և բուսատեսակների պահպանման անհրաժեշտությունը և ձևեր առաջարկել:

ՅՇԲ-ԲՓ-Վ3 Բացատրի, թե ինչպես է մարդը վերափոխել աշխարհը, մարդու և շրջակա միջավայրի փոխազդեցությունը և բնության դերը մարդու կյանքում:

Կենդանի բնության օբյեկտները

ՅՇԲ-ԲԿ-Վ1 Ճանաչել և տարբերակել կենդանիների խմբերը, դրանց տարբերակիչ առանձնահատկությունները. միջատներ, ձկներ, երկկենցաղներ, սողուններ, թռչուններ, կաթնասուններ:

ՅՇԲ-ԲԿ-Վ1 Նկարագրել, հիմնավորել, որ բնության մեջ գտնվող բուսական և կենդանական տեսակները դասակարգվում են ըստ տարբեր բնութագրերի:

ՅՇԲ-ԲԿ-Վ2 Դիտարկել և նկարագրել բույսերի հիմնական մասերը՝ արմատ, ցողուն, տերև, ծաղիկ, նկարագրել դրանց հիմնական գործառույթները

ՅՇԲ-ԲԿ-Վ2 Հետազոտել, ներկայացնել սերմերի ծլման, աճի գործընթացը և դրա համար անհրաժեշտ պայմանները:

ՅՇԲ-ԲԿ-Վ3 Դիտարկել և բացատրել, որ բոլոր կենդանի օրգանիզմները բազմանում են և առաջացնում են իրենց նման, բայց ոչ կրկնօրինակ սերունդ:

Բովանդակություն

- Երկրագնդի բնակչության և կենդանական աշխարհի բազմազանությունը՝ կախված տեղանքի բազմազանությունից: Կենսամիջավայրի և կենդանի օրգանիզմների փոխկախվածությունը:
- Մարդու և շրջակա միջավայրի փոխազդեցությունը և բնության դերը մարդու կյանքում: Մարդու ներգործությունը բնության վրա՝ դրական և բացասական:
- Վերացող կենդանատեսակների և բուսատեսակների նշանակությունը, պահպանման անհրաժեշտությունը և միջոցները:
- Կենդանիների բազմազանությունը՝ միջատներ, ձկներ, երկկենցաղներ, սողուններ, թռչուններ, կաթնասուններ
- դրանց տարբերակիչ առանձնահատկությունները:
- Սերմերի ծլեցում, դիտարկումներ, բույսերի հիմնական մասերը և դրանց գործառույթները
- Բույսերի և կենդանիների բազմացում, սերնդին՝ հատկանիշների փոխանցում, ժառանգում

Առաջարկվող գործունեության ձևեր	Ընդհանրական գաղափարներ
---------------------------------------	-------------------------------

<ul style="list-style-type: none"> • Դիտումներ <p>Դիտարկել, թե շուրջն եղած կենդանի և անկենդան բնության օբյեկտներն ինչպես են փոխհարաբերվում և բնութագրել: Դուրս գալ բույսի գրկում դիտումների և նշումներ կատարել, թե անկենդան բնության օբյեկտներն ինչպես են կապվում կենդանի բնության հետ՝ որպես նրանց բնակության միջավայր: Նկարագրել և պնդումներ անել՝ մեկնաբանություններով:</p> <p>Նկարագրել, թե որտեղ են ապրում բույսերն ու կենդանիները, կարո՞ղ են արդյոք առանց անկենդան բնության օբյեկտների զոյատևել, օրինակներ բերել՝ մի մասն ապրում են հողում, մի մասը ջրերում, մի մասը՝ բույսերի պատրաստված բներում, բույսերն էլ ապրում են հողին ամրացած, կամ ջրերում և այլն: Նկարագրել տարբեր բույսերի և կենդանիների սերունդը, ծագերին, մեկնաբանել՝ ինչով են նման իրենց ծնողներին և ինչով են տարբեր: Դիտարկել, թե որ տեղանքին ինչպիսի բնություն է բնորոշ, օրինակ՝ անտառում ինչ բույսեր և կենդանիներ են բնակվում, անապատում՝</p>	<ul style="list-style-type: none"> • Օրինաչափություններ <p>Գտնել նմանություններ, կրկնություններ և օրինաչափություններ երկրագնդի տարբեր տեղանքներում, բայց նույն կենսապայմաններում բնակվող կենդանական և բուսական աշխարհի միջև: Դիտարկումներ անել և կենսամիջավայրի և կենդանի օրգանիզմների փոխկախվածություններ նկատել և դուրս բերել: Դասակարգել կենդանիներն ըստ իրենց առավել հայտնի բնորոշիչների և կրկնվող հատկությունների հիման վրա:</p> <ul style="list-style-type: none"> • Մասշտաբ, համամասնություն և քանակ <p>Երկրագնդի բնակչության, կենդանական և բուսական աշխարհի և տեղանքների</p>
--	--

ինչ, լեռնային տարածքներում՝ ինչպիս. մեկնաբանել, աղյուսակներ կազմել և լրացնել ըստ համապատասխան տեղանքի: Կարելի է օգտագործել նաև տարբեր տեղանքների մակետ կամ նկարագրություն, ապա փորձել պատկերացնել և նկարագրել այդ տեղանքին բնորոշ կենդանիներին և բույսերը: **Դիտարկել, համեմատել և մեկնաբանել** տարբեր տեղանքներում ապրող բույսերի և կենդանիների տարբերության պատճառները:

Պարզ վարժանքները՝ միտված փաստական նյութերի հետաքրքիր և խթանող ներկայացմամբ

Փորձել գտնել նույն տեղանքի հին փաստական տվյալներ, լուսանկրաններ, պատմություններ, հարցումներ, տեսանյութեր և այլն, կարելի է իրենց գյուղի, քաղաքի, աշխարհի որևէ տարածքի վերաբերյալ: Կարելի է նաև **հարցումներ անել** մեծերից, թե ինչպես է փոփոխվել իրենց շրջակա տարածքը տարիների ընթացքում: Ներկայացնել, համադրել և հետևություններ անել, թե ինչն է փոփոխվել և ինչու, ում ներգործությամբ է վատթարացել բնությունը: Բերել իրենց բնակավայրում նախկինում հանդիպած, բայց այլևս չհանդիպող կենդանատեսակների օրինակներ, նաև բուսատեսակների, եթե այդպիսիք կան: Կարելի է օրինակներ բերել Հայաստանին բնորոշ փոփոխություններից ու վերացող տեսակների օրինակով: Օրինակ՝ Սևանի իշխանի օրինակը, կամ ֆլամինգոյի՝ նախկինում բնադարձ՝ Սևանի ավազանում: Աշխարհի կարմիր գրքից օրինակներ՝ վերացած և վերացող տեսակների մասին, օրինակ՝ կիվի, դոդո թռչունների և այլն:

- **Փորձեր, հետազոտություններ**

Փորձեր անել համոզվելու համար, որ հողը, օդը, ջուրը և լույսը բույսերի աճի համար անհրաժեշտ են: **Պայմանները փոփոխելով** կարող են **տեսնել** տարբեր արդյունքներ, որից պետք է պարզ **եզրահանգումների գալ**: Նշումներ կատարել և ամփոփել: Նման փորձեր կարող են անել, թե դպրոցում, թե տանը:

Բույսերի սերմեր **ծլեցնել**՝ բողկ, ցորեն, լոբի, ոսպ և դիտարկումներ անել, գրանցումներ կատարել, ծանոթանալ բույսերի մասերին, դրանք նկարագրել և պարզել, թե որն ինչ գործառույթ է կատարում: Կարելի է վերցնել մի քանի տարա՝ մեկանգամյա բաժակներ, ափսեներ և դրանցում ծլեցնել՝ նույն սերմերի համար տարբեր պայմաններ ապահովելով: Երեխաները պետք է կարողանան պլանավորել իրենց փորձը, ընթացքը և արդյունքների գրանցումը:

- **Շնորհանդեսներ՝ գրավոր, բանավոր, տեսողական**

Կատարած դիտումների արդյունքների **ներկայացում**՝ տարբեր միջոցներով:

- **Խմբային և համագործակցային աշխատանքներ**

Խմբային դերային և համագործակցային խաղերով ցույց տալ էկոհամակարգերի ներսում եղած փոխկախվածությունները, եղանակային փոփոխություններին: Հետևություններ անել:

- **Դերային խաղեր**

Բնության տարբեր օբյեկտների, օղակների դերերի բաշխման և նրանց վերագրվող բնորոշիչներով քարտեր, որոնցով տարբեր նպատակներով դերախաղերի անցկացում՝ ավելի պատկերավոր

բազմազանության դիտարկմամբ փորձել պատկերացնել երկրագնդի մասշտաբն ու դրանց համամասնությունները:

- **Համակարգեր և մոդելներ**

Կենսամիջավայրի և դրանում գործող բաղադրիչների միասնությունը համակարգ է, և դրանցից ցանկացածի փոփոխությունը բերում է համակարգի փոփոխության:

- **Էներգիա և նյութ**

Սերմեր ծլեցնելիս դիտարկել, թե երբ են դրանք ավելի արագ և փարթամ աճում, արևի, ջրի, հողի բերրիության առկայության, թե դրանցից մեկի կամ մի քանիսի բացակայության դեպքում:

- **Կառուցվածք և գործառույթ**

Բույսերի հիմնական մասերի և դրանց գործառույթների հետ ծանոթանալ սերմեր ծլեցնելու, դրանց աճը դիտարկելու, գրանցումներ և եզրահանգումներ անելու հիման վրա:

- **Կայունություն և փոփոխություն**

Հասկանալ, թե ինչպես են երկրագնդի բնակչությունը, կենդանական և բուսական աշխարհը փոփոխվել ժամանակի ընթացքում, որոշ պարզ օրինակների վրա

- **Պատճառ և հետևանք**

Բոլոր գաղափարներում կան պատճառահետևանքային կապեր, որոնք էլ պետք է լինեն ուշադրության կենտրոնում:

<p>դարձնելու համար բնության մեջ եղած փոխակախվածությունները (Ոստայնի խաղը):</p> <ul style="list-style-type: none"> • Աշխատանքային թերթիկներ՝ տարբեր տիպի առաջադրանքներով Դիտումների համար կարելի է օգտագործել աշխատանքային թերթիկներ, որոնցում ուղղորդումներ կան, թե ինչպես կատարեն դիտումները, ինչերին ուշադրություն դարձնեն, լրացնեն և այլն: • Ներկայացումներ և մոդելավորում Էկոհամակարգերի պարզ մոդելներ ներկայացնել նկարելով՝ անտառի, լճի և այլ պարզ օրինակներով: Բորոշել էկոհամակարգերի փոխակախվածությունը դերային խաղերի միջոցով, ակնառու ներկայացնելով էկոհամակարգի պարզ մոդելը: • Գիտական բառապաշարի և լեզվի գործածումը Կարևոր է, որ երեխաները սկսեն օգտագործել բնագիտական եզրույթներն ըստ անհրաժեշտության, կիրառության և հասկանալով, օրինակ օդ, ջուր, լեռ, սար, ձոր, բլուր, քարանձավ, անտառ, մարգագետին, անապատ, տափաստան, կենսապայման, բնադրել, սերմ, ծիլ, ցողուն, արմատ, տերև, ծաղիկ միջատներ, ձկներ, կաթնասուններ, սողուններ, երկկենցաղներ, թռչուններ և այլն: • Նկարների, գծապատկերների և սխեմաների ստեղծումը Վերը թվարկված բոլոր տիպի աշխատանքներն անելիս կարելի է նկարել, գծել, սանդղակներ կազմել, որը կօգնի ավելի լավ պատկերացնել և յուրացնել նյութը: Նկարելու, դատարկ վանդակները լրացնելու, անհրաժեշտ բառերը տեղադրելու կիրառմամբ աշխատանքներ կատարել: • Ուսուցողական ֆիլմերի դիտումներ, քննարկում Այս թեմայի վերաբերյալ կարելի է բազմաթիվ ուսուցողական ֆիլմեր և տեսանյութեր գտնել՝ սերմերի ծլման, տարբեր խմբեր կենդանիների և բույսերի, դրանց փոխադարձ կապերի, սնման շղթաների և այլն: Կարելի է խրախուսել, որ երեխաներն իրենք գտնեն և ցուցադրեն: • Փաստական նյութերի հետաքրքիր և խթանող ներկայացում 	
Միջառարկայական կապեր	
<p>Մայրենի</p> <ul style="list-style-type: none"> • Կարողանա կազմել նկարագրական բնույթի խոսք, մտքերը ձևակերպել տրամաբանական հաջորդականությամբ շաղկապված նախադասություններով: • Տեքստից դուրս գրել բարդ բառերը՝ առանձնացնելով արմատները, դրանցից յուրաքանչյուրով նոր բառեր կազմել: • Ընթերցել փոքրիկ պատմություններ, հանելուկներ կենդանիների կամ բույսերի մասին: • Գտնել բնագրում ընդգծված բառերի հոմանիշները կամ հականիշները: <p>Մաթեմատիկա</p> <ul style="list-style-type: none"> • Կարողանա աղյուսակի կամ սյունակային դիագրամի օգնությամբ ցույց տալ բույսերի աճման գործընթացը: 	

Տեխնոլոգիա

- Կարողանա տնկել, աճեցնել սենյակային բույսեր՝ հետևելով , որ ապահովված լինի կենսամիջավայրին հատուկ բոլոր պայմանները:

Արվեստ

- Կարողանա դիտել նկարներ, լսել կամ կատարել երգեր կենդանիների կամ բույսերի մասին: Ընկալի և կարողանա ներկայացնել շուրջն եղած և մոլորակի բնակիչների բազմազանությունը: Կարողանա պատկերել անապատ, անտառ, լեռներ և այդ տեղանքին բնորոշ բույսեր ու կենդանիներ:

Օտար լեզու

- Մտապահել և խոսքում օգտագործել որոշ կենդանիների կամ բույսերի անվանումներ՝ ստեղծելով թեմատիկ բառախումբ, հարստացնել բառապաշարը:

- Կազմել պարզ նախադասություններ՝ օգտագործելով թեմային համապատասխան բառեր:

Ֆիզկուլտուրա

- Շարժական խաղերի միջոցով ցույց տալ Երկիր մոլորակի տարբեր բնակիչների, կենդանիների նմանակման վարժանքներ:

Կապը Հանրակրթության պետական չափորոշի տարրական դպրոցի վերջնարդյունքների հետ

Թեմային ուղիղ առնչվող՝ S10, S11, S13, S14, S19

Թեմային մասամբ առնչվող՝ S1, S2, S7. S8, S9, S12, S27

Ես և բնությունը	
Բնության բազմազանություն Փոխազդեցություններ	
Անկենդան բնության օբյեկտները (8 ժամ)	Փոփոխությունները բնության մեջ (8 ժամ)
ԹԵՄԱ ՀԵՏԱԶՈՏԵԼՔ ՄԵՐ ՄՈԼՈՐԱԿԸ (16 ժամ)	
Նպատակ	
<ul style="list-style-type: none"> • Օգնել հասկանալ ջրի կենսական նշանակությունը մարդու, կենդանիների, բույսերի կյանքում՝ խոսելով Երկիր մոլորակի քաղցրահամ ջրի պաշարների սահմանափակության և այլ բնական պաշարների խնայողաբար օգտագործելու մասին: • Գաղափար տալ մթնոլորտի, դրա կենսական նշանակության մասին: • Ծանոթացնել Երկրի գնդաձև մոդելին, գլոբուսին և քարտեզին, դրանց վրա ցույց տալով մայրցամաքներն ու օվկիանոսները, ներկայացնել պայմանական նշանների և մասշտաբի գաղափարը: • Բացատրել հողի կազմությունը, Երկրի մակերևույթի հիմնական ձևերը, բնորոշել, նկարագրել իր շրջապատի ռելիեֆի տարբեր ձևերը: • Բացատրել գիշեր-ցերեկ երևույթը, նկարագրել բնության որոշ երևույթներ: • Գաղափար տալ հորիզոնի, հիմնակն և միջանկյալ կողմերի մասին: 	
Առարկայի ընդհանրական չափորոշչային վերջնարդյունքներ	
<p>Անկենդան բնության օբյեկտները</p> <p>ՇԲ-ԲԱ-Վ1 Ճանաչել Երկրի մակերևույթի հիմնական ձևերը, բնորոշել, նկարագրել իր շրջապատի ռելիեֆի տարբեր ձևերը՝ տափարակ, բլուր, սար, լեռ, գետ, լիճ, ծով և այլն:</p> <p>ՇԲ-ԲԱ-Վ2 Բնութագրել և նկարագրել անկենդան բնությունը՝ որպես կենդանիների, բույսերի և մարդկանց բնակության միջավայր՝ օդը, ջուրը, հողը:</p> <p>ՇԲ-ԲԱ-Վ3 Ներկայացնել մարդկանց, բույսերի և կենդանիների համար ջրի կենսական նշանակությունը, երկրագնդի վրա քաղցրահամ ջրի պաշարների սահմանափակությունը, աղտոտման խնդիրը, ջրի տնտեսման, պաշարների արդյունավետ օգտագործման անհրաժեշտությունը:</p> <p>ՇԲ-ԲԱ-Վ4 Բացատրել, որ երկրագունդը շրջապատված է մթնոլորտով և ունի կենսական նշանակություն:</p> <p>ՇԲ-ԲԱ-Վ5 Գլոբուսի և քարտեզի վրա ցույց տալ մայրցամաքները և օվկիանոսները, հորիզոնի հիմնական և միջանկյալ կողմերը և կողմնորոշվել դրանցով, կարողանալ օգտվել կողմնացույցից, ճանաչել մասշտաբ և պայմանական նշաններ հասկացությունները:</p> <p>Փոփոխությունները բնության մեջ</p> <p>ՇԲ-ԲՓ-Վ1 Ճանաչել և նկարագրել բնության մեջ տեղի ունեցող պարբերական երևույթները՝ եղանակային փոփոխություններ, գիշեր-ցերեկ և այդ փոփոխություններով պայմանավորված այլ բնական երևույթները ինչ ազդեցություն են ունենում բնության վրա:</p> <p>ՇԲ-ԲՓ-Վ2 Ներկայացնել, թե մարդու գործունեությունն ինչպես է ազդում շրջակա միջավայրի և կենսաբազմազանության վրա, օրինակ, աղբ, գետերի աղտոտվածություն, թափոնների արտանետում, մեկնաբանել բնության աղտոտվածության և առողջության կապը:</p> <p>ՇԲ-ԲՓ-Վ3 Ներկայացնել էկոհամակարգերը դրանց փոխկախվածությունը, փոփոխությունները, վատթարացումը՝ տարբեր՝ կենսածին, մարդածին և ոչ կենսածին գործոնների ազդեցության տակ:</p>	

<p>ՇՔ-ԲՓ-Վ4 Բացատրել աղբի տեսակավորման, վերամշակման, երկրորդային օգտագործման և թափոնների վերամշակման անհրաժեշտությունը բնապահպանության և խնայողության տեսանկյունից:</p>	
<p>Թեմայի վերջնարդյունքները</p>	
<p>Անկենդան բնության օբյեկտները</p> <p>ՅՇԲ-ԲԱ-Վ3 Ներկայացնել մարդկանց, բույսերի և կենդանիների համար ջրի կենսական նշանակությունը, երկրագնդի վրա քաղցրահամ ջրի պաշարների սահմանափակությունը, ջրի տնտեսման, պաշարների արդյունավետ օգտագործման անհրաժեշտությունը:</p> <p>ՅՇԲ-ԲԱ-Վ4 Բացատրել, որ երկրագունդը շրջապատված է մթնոլորտով և ունի կենսական նշանակություն:</p> <p>ՅՇԲ-ԲԱ-Վ2 Ներկայացնել հողի նշանակությունը, կազմությունը, պահպանությունը</p> <p>ՅՇԲ-ԲԱ-Վ5 Գլոբուսի և քարտեզի վրա ցույց տալ մայրցամաքները և օվկիանոսները</p> <p>ՅՇԲ-ԲԱ-Վ5 Ցույց տալ հորիզոնի հիմնական և միջանկյալ կողմերը և կողմնորոշվել դրանցով, կարողանալ օգտվել կողմնացույցից:</p> <p>ՅՇԲ-ԲԱ-Վ5 Ճանաչել մասշտաբ և պայմանական նշաններ հասկացությունները</p> <p>ՅՇԲ-ԲԱ-Վ1 Ճանաչել երկրի մակերևույթի հիմնական ձևերը, բնորոշել, նկարագրել իր շրջապատի ռելիեֆի տարբեր ձևերը:</p> <p>Փոփոխությունները բնության մեջ</p> <p>ՅՇԲ-ԲՓ-Վ1 Բացատրել գիշեր-ցերեկ երևույթը և դրա հետևանքները մարդու կենսագործունեության և բուսականության աշխարհի վրա</p> <p>ՅՇԲ-ԲՓ-Վ1 Նկարագրել բնության երևույթները, թվարկել, բնութագրել դրանք, բացատրել, թե երբ են դրանք դառնում վտանգավոր:</p> <p>ՅՇԲ-ԲՓ-Վ1 Ճանաչել և նկարագրել մթնոլորտային տեղումները և կատարել դիտարկումներ (տեղումներ՝ անձրև, ձյուն, կարկուտ, քամի, ամպրոպ, կայծակ)</p> <p>ՅՇԲ-ԲԱ-Վ3 Բացատրել, թե ինչպես է մարդն օգտագործում գետերի, լճերի և օվկիանոսների հարստությունները:</p> <p>ՅՇԲ-ԲՓ-Վ3 Բացատրել էկոհամակարգերի փոխկախվածությունների ու կայունության վրա ազդող կենսածին և ոչ կենսածին գործոնները:</p>	
<p>Բովանդակություն</p>	
<ul style="list-style-type: none"> • <i>Երկիր մոլորակի բազմազանությունը: Երկրի մակերևույթի հիմնական ձևերը: Մայրցամաքներ, օվկիանոսներ:</i> • Օդ, հող, ջուր, դրանց կենսական նշանակությունն ու պահպանությունը: • Փոխկապվածությունը բնության մեջ: • Գիշեր-ցերեկ հերթազայման նշանակությունը բնության մեջ: • Բնության երևույթներ, մթնոլորտային տեղումներ: • Բնօգտագործում: • Էկոհամակարգերի վրա ազդող կենսածին և ոչ կենսածին գործոններ: 	
<p>Առաջարկվող գործունեության ձևեր</p>	<p>Խաչվող գաղափարներ</p>
<ul style="list-style-type: none"> • Ուսումնական տարբեր նպատակներով կիրառվող խաղեր • «Այս երկիրը խնձորն է» վարժության միջոցով պատկերավոր ներկայացնել երկրագնդի վրա բերրի հողի սահմանափակության և դրա պահպանության խնդիրը: Ապա ներկայացնել մեր մոլորակի ջրային ռեսուրսների մեծ բաժինը, սակայն քաղցրահամ ջրերի սահմանափակությունը: 	<ul style="list-style-type: none"> • Օրինաչափություններ Պարբերական երևույթները ենթարկվում են որոշակի օրինաչափությունների, օրինակ գիշեր-ցերեկ, ամառ-ձմեռ և այլն: Պարզաբանել, որ նման կրկնվող երևույթները, որոնք գրեթե միշտ անփոփոխ են, ենթարկվում են տիեզերքում գործող օրենքների: Դրանք

<ul style="list-style-type: none"> • Փորձեր Կարելի է հետաքրքիր փորձեր անել հասկանալու համար ջրի ազդեցության հետևանքով տեղանքի փոփոխությունների մեխանիզմը, ջրի՝ հոսելով ճանապարհի բացելու, ապարներ ճեղքելու, լվանալով ապարները քշելու, ինչպես նաև՝ ճեղքերը լցվելու և սառչելով լեռներում, հողում, պինդ ապարների մեջ ճեղքերը մեծացնելու վերաբերյալ: Հողի բաղադրությունը ստուգող փորձեր կատարել և պարզել, որ հողում օդ, ջուր, ավազ, կավ, հանքային աղեր և բույսերի և կենդանիների մնացորդներ կան: Դրանցից յուրաքանչյուրի առկայությունը պարզելու համար փորձեր կատարել: Հողի պահպանության անհրաժեշտությունը և անտառների դերի մասին փորձ կարելի է կատարել, հողի լվացման օրինակով: • Հետազոտական առաջադրանքներ Պարզելու համար թե հողի շերտերը ինչպես են դասավորվում կարելի է հետազոտական առաջադրանք անել՝ հողը լցնելով ջրով լցված ապակե տարայի մեջ և պարբերաբար թափ տալով: Որոշ ժամանակ անց տեսանելի կլինեն առանձնացած շերտերը: Կարելի է նաև պարզել, թե ինչեր են բնակվում հողում՝ բազմաթիվ միջատներ և ուտիճներ: • Խմբային, համագործակցային առաջադրանքներ Խմբերով աշխատել՝ տարբեր մայրցամաքների, դրանց առանձնահատկությունների, կենդանիների, բույսերի և մարդկանց մասին տեղեկություններ հավաքել, այդ մայրցամաքներում հայտնի երկրների, նրանց մշակույթների մասին: Ներկայացնել տարբեր միջոցներով: • Դիտումներ Կատարել մթնոլորտային տեղումների դիտումներ, դիտարկել, թե երբ դրանք կարող են վտանգավոր լինել, ինչ վտանգներ կարող են լինել հորդառատ անձրևի, կարկուտի, ուժգին քամու, ամպրոպի ժամանակ, և քննարկել, թե ինչ կանոնների պետք է հետևել նման վտանգներից խուսափելու համար: • Դաշտային աշխատանք Կարելի է դրսում փրձարկել կողմնացույցը և դրանով առաջնորդվելով՝ ցույց տալ հորիզոնի հիմնական միջանկյալ կողմերը: Փնտրել և գտնել բնության մեջ հորիզոնի կողմերը գտնելու այլ նշաններ, որոնք կարող են օգնել մոլորված ժամանակ, օրինակ՝ ծառերի թեքությունը, դրանց վրա մամուռի առկայությունը և այլն: Տեղանքի հետազոտում, մասշտաբի վերաբերյալ առաջադրանքներ և քարտեզով աշխատանք, փորձել տեղանքի փոքրիկ քարտեզ գծել, սենյակի հատակագիծ, կամ դասարանի հատակագիծը: Չափսերը փորձել համապատասխանեցնել: • Պրոյեկտներ Կարելի է փոքրիկ պրոյեկտներ հանձնարարել, թեմայի ընթացքում խմբերով պատրաստվեն և ներկայացնեն թեմայի վերջում, օրինակ մթնոլորտային տեղումների մասին, կամ մայրցամաքների և դրանց առանձնահատկությունների մասին, կամ 	<p>կիեշտացնեն ապագայում ավելի բարդ օրինաչափություններն ընկալելը:</p> <ul style="list-style-type: none"> • Պատճառ և հետևանք Մեկնաբանել երկրագնդի վրա քաղցրահամ ջրի պաշարների սահմանափակության և այն խնայելու անհրաժեշտության պատճառները, դրա անհրաժեշտությունը մոլորակ վրա ապրող կենդանական և բուսական աշխարհի գոյատևման համար և ջրի սակավության հետևանքները: Բնության մեջ առկա փոխկախվածություններն ու պատճառահետևանքային կապերը՝ մթնոլորտի, օվկիանոսների, գետերի լճերի, հողերի միջև առկա փոխադարձ կապերը և կախվածությունները և դրանց ազդեցությունը կենսաբազմազանության վրա: Ինչպես է մարդն օգտագործում բնական պաշարները, աղտոտում բնությունը և դրա ազդեցությունը կենսաբազմազանության վրա: • Համակարգեր և մոդելներ Էկոհամակարգերի և դրանց բաղադրիչների մասին պատկերացումները կօգնեն, որ հասկանան փոխադարձ կապերը • Էներգիա և նյութ Էկոհամակարգերում սնման շղթաների հետազոտումը կօգնի ընկալել էներգիայի և նյութերի փոխանցման և փոխակերպման ընթացքն ու որոշ մեխանիզմներ: • Կայունություն և փոփոխություն Էկոհամակարգերի կայունության վրա ազդող գործոնները քննելով կկարողանան հասկանալ կենսածին և ոչ կենսածին գործոնները, կկարողանան տարբերել դրանք:
--	--

<p>էկոհամակարգերի և դրանց կայունության վրա կնեսածին և ոչ կնեսածին ներգործության մասին և այլն:</p> <ul style="list-style-type: none"> • Շնորհանդեսներ՝ գրավոր, բանավոր, տեսողական Կատարած դիտումների, պրոյեկտների, փորձեր արդյուքների ներկայացում՝ տարբեր միջոցներով: • Խմբային և համագործակցային աշխատանքներ Խմբային դերային և համագործակցային խաղերով ցույց տալ էկոհամակարգերի ներսում եղած փոխկախվածությունները, եղանակային փոփոխություններին: Հետևություններ անել: • Աշխատանքային թերթիկներ՝ տարբեր տիպի առաջադրանքներով Դիտումների համար կարելի է օգտագործել աշխատանքային թերթիկներ, որոնցում ուղղորդումներ կան, թե ինչպես կատարեն դիտումները, ինչերին ուշադրություն դարձնեն, լրացնեն և այլն: Սանդղակներ լրացնել, տարբեր եղանակներին իրենց դիտարկումների վերաբերյալ: Կարելի է դրանք պահել և լրացնել ողջ տարվա ընթացքում: • Ներկայացումներ և մոդելավորում Երկրագնդի մոդելի օրինակով փորձել հասկանալ, թե ինչ է մոդելը: • Գիտական բառապաշարի և լեզվի գործածում Կարևոր է, որ երեխաները սկսեն օգտագործել բնագիտական եզրույթներն ըստ անհրաժեշտության, կիրառության և հասկանալով, օրինակ հյուսիս, հարավ, արևելք, արևմուտք, հյուսիս-արևելք, հարավ-արևմուտք և այլն: • Նկարների, գծապատկերների և սխեմաների ստեղծումը Վերը թվարկված բոլոր տիպի աշխատանքներն անելիս կարելի է նկարել, գծել, սանդղակներ կազմել, որը կօգնի ավելի լավ պատկերացնել և յուրացնել նյութը: • Ուսուցողական ֆիլմերի դիտումներ, քննարկում • Դերային, մարմնավորման (սիմուլյացիոն) խաղեր • Մրցույթներ, վիկտորինաներ, հանդեսներ • Փաստական նյութերի հետաքրքիր և խթանող ներկայացում 	
Միջառարկայական կապեր	
<p>Մայրենի</p> <ul style="list-style-type: none"> • Կարողանա հարստացնել բառապաշարը՝ օգտագործելով թեմայի ընթացքում սովորած բառերը, բացատրել դրանց ուղղագրությունը: • Գտնել հոմանիշ-հականիշ բառազույգեր: • Լրացնել տեքստը՝ բաց թողնված բառերը գտնելով թեմայի ընթացքում սովորած բառերից: • Վերարտադրել տեքստի բովանդակությունը հիմնավորումներ, եզրահանգումներ կատարելով՝ կառուցելով պատմողական, նկարագրական բնույթի տեքստ: <p>Մաթեմատիկա</p> <ul style="list-style-type: none"> • Կարողանա պարզագույն մաթեմատիկական գործողություններ կատարել՝ սովորելով մասշտաբի մասին, գտնելով բազմանիշ անվանական թվերի միջև առնչությունները: • Ամրապնդել օրինաչափությունների մասին գիտելիքը: 	

Տեխնոլոգիա

- Պարզագույն գործնական աշխատանքներ կատարելիս բացատրել տվյալ առարկայի իրական չափերի և մասշտաբի կամ անհրաժեշտ պայմանական նշանների մասին:

Ֆիզկուլտուրա

- Վարժությունների, շարժական խաղերի միջոցով ցույց տալ բնույան փոխկապվածության գաղափարը:

Օտար լեզու

- Բառապաշարի հարստացում թեմային համապատասխան բառերի օգտագործումով:
- Լսած կամ դիտած որևէ թեմային համապատասխան փոքրիկ նյութի կառուցում կամ թարգմանություն:

Արվեստ

- Համապատասխան տեսանյութերի դիտում, վերլուծություն, սեծփական մտահաղացմամբ ներկայացումներ:

Ներառարկայան կապեր

- «Ես և բնությունը» հիմնական հասկացության տակ եղած բոլոր թեմաները կապված են և՛ «Ես» հասկացության թեմաների հետ՝ անվտանգությունը բնության գրկում, մարմին, սնուցում թեմաների համատեքստում, և՛ «Ես և մարդիկ» հասկացության՝ տուն, բակ, փողոց, համայնք թեմաների հետ, տնային բույսերի, բույսերից պատրաստված կենցաղային իրերի, շրջապատի, համայնքի զբաղմունքների և բնության օբյեկտների վերբերյալ ուսումնասիրությունների համատեքստում:
- Սերտորեն կապվում է նաև «Տիեզերք» հիմնական հասկացության բոլոր թեմաների հետ:

Կապը Հանրակրթության պետական չափորոշչի տարրական դպրոցի վերջնարդյունքների հետ

Թեմային ուղիղ առնչվող՝ S10, S11, S13, S14, S19

Թեմային մասամբ առնչվող՝ S1, S2, S7. S8, S9, S12, S27

Ես և տիեզերքը	
Երկնային մարմիններ	Շարժում և փոխազդեցություն
Պարբերական երևույթները բնության մեջ (5 ժամ)	Ուժեր (3 ժամ)
ՄԵՐ ԿԱՆԱԱԶ-ԿԱՊՈՒՅՑ ՄՈԼՈՐԱԿԸ (8 ժամ)	
Նպատակ	
<ol style="list-style-type: none"> Նախնական գիտելիք տալ աստղային երկնակամարի, Արեգակնային համակարգի, մոլորակների, Երկրի պտույտի և դրանով պայմանավորված պարբերական փոփոխությունների մասին: Բացատրել, որ Արեգակի շուրջ պտտվող ութ մոլորակներից մեկը՝ Երկիր մոլորակն է, ամբողջացնել պատկերացումը գլոբուսի մասին՝ որպես Երկրի գնդաձև մոդել և դրա վրա ցուցադրել թե ինչպես է Երկրի պտույտն իր առանցքի շուրջը պայմանավորում գիշերվա և ցերեկվա հերթագայությունը Երկրի վրա: Ամրապնդել և խորացնել գիտելիքը ձգողականության ուժի մասին՝ Երկիրը դիտարկել որպես մի մեծ մագնիս՝ գաղափար տալով մագնիսական դաշտի, մագնիսակն փոխազդեցության մասին: Բացատրել, որ Արեգակի ջերմությունն է Երկրի վրա կյանքը պահպանող կարևորագույն գործոն: 	
Առարկայի ընդհանրական չափորոշչային վերջնարդյունքներ	
<p>Պարբերական երևույթները բնության մեջ</p> <p>ՇՏ-ԵՊ-Վ1 Նկարագրել Արեգակնային համակարգը՝ մոլորակները, Երկիրը, Լուսինը, դիտարկել Արեգակի լույսը, ջերմությունը՝ որպես երկրի վրա կյանքի պահպանման կարևոր գործոն:</p> <p>ՇՏ-ԵՊ-Վ2 Դիտարկել գլոբուսը որպես երկրի մոդել և ցուցադրել, թե ինչպես է Երկրի պտույտն Արեգակի և իր առանցքի շուրջը պայմանավորում գիշերվա և ցերեկվա, եղանակների հերթագայությունը:</p> <p>ՇՏ-ԵՊ-Վ3 Փորձերի միջոցով ցուցադրել արևի և լուսնի խավարումները:</p> <p>Ուժեր</p> <p>ՇՏ-ՇՈՒ-Վ1 Ցուցադրել, որ այն ամենն ինչ շարժվում է՝ շարժվում է որևէ ուժի շնորհիվ, որ կան մարմինը շարժման մեջ դնելու տարբեր եղանակներ (ձգել, հրել տարբեր ուժերով և ուղղություններով)</p> <p>ՇՏ-ՇՈՒ-Վ2 Տարբերել ուղղագիծ, կորագիծ և պտտական շարժումները, բերել օրինակներ:</p> <p>ՇՏ-ՇՈՒ-Վ3 Բացատրել, որ մարմիններն ընկնում են Երկրի ձգողականության պատճառով:</p>	
Թեմայի վերջնարդյունքները	
<p>Պարբերական երևույթները բնության մեջ</p> <p>ՅՇՏ-ԵՊ-Վ1 Նկարագրել Երկիրը, Լուսինը, Արեգակը և մոլորակները որպես գնդաձև մարմիններ և դրանց պտույտները</p> <p>ՅՇՏ-ԵՊ-Վ1 Դիտարկել Արեգակի ջերմությունը՝ որպես երկրի վրա կյանքի պահպանման կարևոր գործոն</p> <p>ՅՇՏ-ԵՊ-Վ1 Ճանաչել և իմանալ, որ Արեգակի շուրջ պտտվող ութ մոլորակներից մեկը՝ Երկիր մոլորակն է:</p> <p>ՅՇՏ-ԵՊ-Վ2 Դիտարկել գլոբուսը որպես երկրի մոդել:</p> <p>ՅՇՏ-ԵՊ-Վ2 Երկրի մոդելի վրա ցուցադրել, թե ինչպես է Երկրի պտույտն իր առանցքի շուրջը պայմանավորում գիշերվա և ցերեկվա հերթագայությունը Երկրի վրա:</p> <p>ՅՇՏ-ԵՊ-Վ2 Բացատրել տարվա եղանակների հերթագայման պատճառը:</p> <p>Ուժեր</p> <p>ՅՇՏ-ՇՈՒ-Վ3 Փորձերով հիմնավորել, որ մարմինների անկման պատճառը Երկրի ձգողությունն է:</p> <p>ՅՇՏ-ՄԶ-Վ3 Բացահայտել մարմինների կշռի և ձգողականության ուժի կապը:</p>	
Բովանդակություն	

<ul style="list-style-type: none"> • Արեգակ, Երկիր մոլորակ, Լուսին, աստղեր • Գիշեր և ցերեկ, տարվա եղանակներ • Երկրի ձգողականություն, մարմինների անկում 	
<p align="center">Առաջարկվող գործունեության ձևեր</p>	<p align="center">Խաչվող գաղափարներ</p>
<ul style="list-style-type: none"> • Հարցադրումների սահմանումը Հարցադրումները խթանել հետաքրքրասիրությունը՝ ինչ է երկինքը, ինչ են տեսնում ցերեկը, ինչ են տեսնում գիշերը: Արևը տաքացնում է, իսկ Լուսինը՞, իսկ աստղերը՞: Նման հարցրեի շուրջ հնարավորություն տալ, որպեսզի առաջ քաշեն խնդիրը՝ թե որ հարցի շուրջ են ուզում մտորել, տեղեկություններ հավաքել, փորձել գտնել պատասխանները: <ul style="list-style-type: none"> • Դիտումներ Դիտումների հիման վրա նկարագրել Արեգակը, Լուսինը, ի՞նչ գիտեն Երկիր մոլորակի մասին: Դիտումների միջոցով փորձել պատասխանել վերևում տրված որոշ հարցերի, օրինակ կարելի է պատասխանել, որ արևը տաքացնում է, իսկ լուսինը և աստղերը՝ ոչ, որ ասջքով տեսանելի է լուսնի և արևի սկավառակները: Կարող են տեսնել Լուսնի տարբեր փուլերը: Բայց արդյո՞ք դիտումներով կարելի է ամեն ինչ տեսնել: Կարելի է պատկերացումներն Արեգակի և Երկիր մոլորակի մասին ավելի ամբողջական դարձնել մոդելի ուսումնասիրությամբ: Անդրադառնալ անցյալի դիտումներին՝ ինչ և ինչպես պարզեց Պյութագորաս հույն մաթեմատիկոսը Երկրի ձևի մասին: • Ներկայացումներ և մոդելավորում Կարող են երկու տարբեր չափսերի գնդակներով, կամ գնդակով, գլոբուսով և լապտերով ցուցադրել արևի և լուսնի խավարումները: Ցույց տալ թե ինչպես են պտտվում իրենց առանցքի շուրջ և լուսինը՝ Երկրի շուրջը, իսկ երկիրը՝ Արեգակի շուրջը: Ներկայացնել գիշեր-ցերեկ հերթազապությունը և եղանակի փոփոխականությունը, կախված՝ արևի հանդեպ Երկրի դիրքից և այլն: • Խաչբառների, գլուխկոտրուկների, հանելուկների կազմում, լուծում Կարելի է խաչբառների, գլուխկոտրուկների մեջոցով առավել հետաքրքիր դարձնել թեմայի ուսումնասիրությունը: • Փորձեր Փորձել ձեռքին եղած որևէ իր ձեռքից բաց թողնել, ցանկալի է չկոտչվող: Ակնհայտ է, որ բոլորի ձեռքից բաց թողած իրերը կընկնեն ցած: Կարելի է հարց ձևակերպել՝ ինչու ցած զցած ցանկացած իր ընկնում է գետին, ոչ թե բարձրանում է վեր: Գտնել այս հարցի պատասխանը, հիշատակելով Նյուտոնի խնձորի պատմությունը: Մտորել նաև այն հարցերի շուրջ, թե ինչու են գետերը հոսում դեպի վար, ինչու՞ է իջնելն ավելի հեշտ, 	<ul style="list-style-type: none"> • Օրինաչափություններ Պարբերական երևույթների օրինակով ընկալելի դարձնել օրինաչափությունները, դրանք այն երևույթներն են, որոնք կրկնվում են և ենթարկվում են որոշակի օրենքների և կանոնների և պատճառահետևանքային կապերի, մարդու գիտակցությունից անկախ: <ul style="list-style-type: none"> • Պատճառ և հետևանք Նշված բոլոր թեմաներում կարևոր են «ինչու՞, ինչպե՞ս, ի՞նչ կնախորդի, ի՞նչ կհաջորդի» հարցերի պատասխանների որոնումը, դրանք կնպաստեն բոլոր երևույթները խորությամբ ընկալելուն: • Մասշտաբ, համամասնություն և քանակ Տիեզերքի անծայրածիր լինելու մասին պատկերացումները՝ Երկրից Արեգակ հեռավորությունը, բյուրավոր աստղերի հեռավորությունն ու քանակը գուցե առաջին առնչությունն են իրական տիեզերական մասշտաբները պատկերացնելու և այդ ուղղությամբ երևակայությունը զարգացնելու: • Համակարգեր և մոդելներ Արեգակնային համակարգի, Երկրի՝ Արեգակի շուրջ պտտվելը, Լուսնի՝ Երկրի շուրջ պտտվելն ու դրանց՝ իրենց առանցքի շուրջ պտտվելը կարելի է ներկայացնել համապատասխան մոդելների միջոցով՝ տեսանելի և պատկերավոր դարձնելով: Երկրի մոդելի՝ գլոբուսի դիտարկման միջոցով հասկանալ գիշերվա/ցերեկվա հերթազապումը: • Էներգիա և նյութ Արևը երկրագնդի ամենահզոր էներգիայի աղբյուրն է և հարկ է տարբեր փորձառություններով համոզվել դրանում՝ կենդանական աշխարհի, ջրի շրջապտույտի, կլիմայի փոփոխության և երկրագնդի վրա տեղի ունեցող այլ պրոցեսներ համատեքստում: • Կայունություն և փոփոխություն Երկրի վրա դիտարկվող տիեզերական պարբերական երևույթները՝ գիշեր/ցերեկ, տարվա եղանակներ և այլն, կարելի է դիտարկել, որպես կայուն վիճակ, քան որ այն արդեն միլիոնավոր տարիներ չի փոխվել (չնայած դա էլ է

<p>քան բարձրանալը: Ինչու մենք չենք կարող թռչել, որքան էլ ցատկոտենք՝ իջնում ենք գետնին:</p> <ul style="list-style-type: none"> • Գաղափարների և հասկացությունների սահմանումն և վերհանումը Երեխաներին կարելի է նոր մարտահրավեր նետել ասելով փորձեն ձեռքից զցել թուղթ, բամբակի խծուծ, փետուր, քարի կտոր, կավիճ և տեսնել դրանց ընկնելու տարբերությունը: Մտածել դրա շուրջ: Այս աշխատանքը կարելի է հանձնարարել ըստ ցանկության առավել հետաքրքրված երեխաներին: Երեխաները կապ կտեսնեն, իրերի անկման և նրանք կշռի միջև՝ այն, որ թեթև իրերը դանդաղ են ընկնում: • Ուսուցողական ֆիլմերի դիտումներ, քննարկում Այս թեմայի նյութի վերաբերյալ բազմաթիվ ֆիլմեր կան, և կարելի է տիեզերքի, Արեգակնային համալսարանն ու նրա մոդելի պատկերմ • Աշխատանքային թերթիկներ՝ տարբեր տիպի առաջադրանքներով <ul style="list-style-type: none"> • Թեմատիկ միավորի վերաբերյալ առաջադրանքներ, • Տեսանյութերի ստեղծում • Պարզ հատակագծերի քարտեզների գծում, • Վերծանում, կողմնորոշում <ul style="list-style-type: none"> • Խնդրի առաջադրում, լուծումների որոնում, դիտարկման կամ փորձի միջոցով արդյունքների գնահատում և վերլուծություն, եզրահանգումների վերհանում ու քննարկում: 	<p>փոփոխական), բայց կլիման ավելի կարճ տևողության մեջ կարող է կայուն լինել, այն ավելի հաճախ է փոփոխվում, օրինակ վերջին տարիներին նկատվում է կլիմայի փոփոխություններ, որոնք մենք անգամ կարող ենք նկատել մեր կյանքի ընթացքում: այսպիսով կարևոր է կայունության և փոփոխության հարաբերականության գիտակցումը:</p>
--	--

Միջառարկայական կապեր

<p>Մայրենի</p> <ul style="list-style-type: none"> • Կարողանա մտքերն արտահայտել հստակ, տրամաբանական շարունակությամբ վերարտադրել, նախադասություններում օգտագործել թեմային համապատասխան եզրույթներ: • Կարողանա մտապահել հատուկ անունների ուղղագրությունը: • Պարբերականությունների, օրինաչափությունների մասին գիտելիքը ամրապնդել՝ բառերի շարքը լրացնելով առաջադրված հերթականությամբ: • Ընթերցել ավանդապատումներ Լուսնի, Արեգակի, մոլորակների մասին: • Կարողանա ինքնուրույն կազմել հարցեր՝ տեղին օգտագործելով «ինչու՞, ինչպե՞ս, ի՞նչ կնախորդի, ի՞նչ կհաջորդի» հարցերը, որոնք հարցական նախադասությունների մասին գիտելիքի յուրացմանը: <p>Մաթեմատիկա</p> <ul style="list-style-type: none"> • Կարողանա լուծել առաջադրված վարժությունները՝ կռահելով օրինաչափությունները: • Լուծել խնդիրներ հեռավորությունների, արագությունների վերաբերյալ: • Կատարել պարզագույն հաշվարկներ՝ հաշվելով, համեմատելով հեռավորությունները: <p>Օտար լեզու</p> <ul style="list-style-type: none"> • Ձևավորի բառապաշար թեմային համապատասխան, կարողանա այդ բառերով կազմել պարզ նախադասություններ, սովորել այդ բառերի ուղղագրություններն ու հնչյունային ճիշտ արտասանությունները: <p>Արվեստ</p> <ul style="list-style-type: none"> • Դերախաղավ ներկայացնել ընթերցած ավանդապատումները, արտահայտիչ ասմունքել : • Ունկնդրել կամ կատարել երգեր նվիրված տիեզերական մարմիններին,:
--

- Կատարել ստեղծագործական աշխատանքներ՝ նկարելով տիեզերք, աստղեր, լուսին, արեգակ և այլն, պատմել նկարների բովանդակությունները:

Տեխնոլոգիա

- Փայլաթիթեղից ստեղծել հետաքրքիր պատկերներ՝ կատարելով ապլիկացկաներ, ստեղծելով «մոլորակների շքերթ» պահպանելով անվտանգության կանոնները:

Ներառարկայական կապեր

- «Ես և տիեզերքը» հիմնական հասկացության բոլոր թեմաները սերտորեն առնչվում են «Ես և բնությունը» հիմնական հասկացության թեմաներին:

Կապը հանրակրթության պետական չափորոշչի տարրական դպրոցի վերջնարդյունքների հետ

Թեմային ուղիղ առնչվող՝ S10, S11, S12
 Թեմային մասամբ առնչվող՝ S1, S2, S7, S9, S15, S16, S24

4-րդ ԴԱՍԱՐԱՆ

Ես		
Անվտանգություն		
Առողջ սնուցում (2 ժամ)	Արտակարգ իրավիճակներ (3 ժամ)	Վնասակար սովորություններ Վարակիչ և ոչ վարակիչ հիվանդությունների կանխարգելում (3 ժամ)
ԹԵՄԱ ԵՍ ԱՊԱՀՈՎ ԵՄ (8 ժամ)		
Նպատակ		
<ul style="list-style-type: none"> • Օգնել գիտակցել առողջ սնուցման կարևորությունը մտավոր և ֆիզիկական առողջության համար: • Ամրապնդել ջրի նշանակությունը մարդու օրգանիզմի նյութափոխանակության համար, բացատրել, որ որոշ վարակիչ հիվանդություններ կարող են տարածվել ջրի միջոցով, ցույց տալ կանխարգելման ուղիները: • Պարզաբանել առաջին օգնության իմացության կարևորությունը և դրա կիրառումը տարբեր իրավիճակներում: • Օգնել գիտակցել, որ մարդու առողջությունը մեծապես կախված է հենց իր վարքագծից և որոշումներից, որոնք էլ դառնում են սովորություններ: 		
Առարկայի ընդհանրական չափորոշչային վերջնարդյունքներ		
<p>Առողջ սնուցում</p> <p>ՇԵ-ԱՍ-Վ1 Բացատրել առողջ սնուցման բնութագրիչները՝ բամազանությունը, օրվա ռացիոնը, ընդունման պարբերականությունը և անվտանգությունը</p> <p>ՇԵ-ԱՍ-Վ2 Բացատրել, որ սնունդը ապահովում է օրգանիզմի էներգիան, որն էլ ապահովում է ֆիզիկական ակտիվությունը:</p> <p>ՇԵ-ԱՍ-Վ3 Ներկայացնել ջրի նշանակությունը մարդու օրգանիզմի նյութափոխանակության համար:</p>		
<p>Արտակարգ իրավիճակներ</p> <p>ՇԵ-ԱԻ-Վ1 Ցուցադրել տարբեր հնարավոր աղետների և արտակարգ իրավիճակների ժամանակ խուճապի, չմատնվելու կողմնորոշվելու, անվտանգության կանոնների և քայլերի հաջորդականության իմացություն, ցուցադրել առաջին օգնության պարզ եղանակներ:</p>		
<p>Վնասակար սովորություններ</p> <p>Վարակիչ և ոչ վարակիչ հիվանդությունների կանխարգելում</p> <p>ՇԵ-ԱՎ-Վ1 Տարբերակել վնասակար սովորությունները՝ այդ թվում ծխելը, ալկոհոլ և այլ վնասակար նյութեր օգտագործելը և խուսափել դրանցից, թվարկել որոշ վարակիչ հիվանդություններ և կիրառել դրանք կանխարգելելու ուղղված վարքագիծ:</p> <p>ՇԵ-ԱՎ-Վ2 Դրսևորել ռիսկերից խուսափելու և առողջությանը միտված վարքագիծ:</p>		
Թեմայի վերջնարդյունքները		
<p>Առողջ սնուցում</p> <p>4ՇԵ-ԱՍ-Վ2 Կարևորել սնունդը մտավոր և ֆիզիկական առողջության համար</p>		

4ՇԵ-ԱՍ-Վ2 Բացատրել, որ սնունդն է ապահովում օրգանիզմն էներգիայով, ինչն էլ ապահովում է իրենց ֆիզիկական ակտիվությունը:

4ՇԵ-ԱՍ-Վ3 Կարևորել խմելու ջրի դերը օրգանիզմում՝ նյութափոխանակությունը կարգավորելու համար:

4ՇԵ-ԱՍ-Վ2 Մեկնաբանել, որ և՛ սննդային սովորությունները և՛ ֆիզիկական ակտիվության մակարդակը կարող են ազդել քաշի վրա

4ՇԵ-ԱՍ-Վ1 Նկարագրել, թե ինչպես անվտանգ սնվել և ինչ նշանակություն ունի ռեժիմը առողջության համար:

Արտակարգ իրավիճակներ

4ՇԵ-ԱԻ-Վ1 Բացատրել անվտանգության պահպանության կարևորությունը և դրան չհետևելու դեպքում հնարավոր վնասվածքներն ու դժբախտ պատահարները:

4ՇԵ-ԱԻ-Վ1 Ցուցադրել առաջին օգնության իմացությունը և դրա կիրառումը տարբեր իրավիճակներում:

4ՇԵ-ԱԻ-Վ1 Նկարագրել շրջապատում, բնության գրկում հնարավոր արտակարգ իրավիճակները՝ (մոլորվել անտառում, սառած ջրմբարների սառույցի ճեղքում, գիշատիչ կենդանիների հետ հանդիպում, կայծակի, կարկուտի, տեղատարափ անձրև և այլ՝ բնության վտանգ ներկայացնող երևույթների դեպքում) դրանցից խուսափելու և նման իրավիճակներում ճիշտ կողմնորոշվելու քայլերը:

4ՇԵ-ԱԻ-Վ1 Դրսևորել խուճապի չմատնվելու, կողմնորոշվելու և հնարավոր վտանգավոր իրավիճակներում քայլերի ճիշտ հաջորդականության իմացություն:

Վնասակար սովորություններ

Վարակիչ և ոչ վարակիչ հիվանդությունների կանխարգելում

4ՇԵ-ԱՎ-Վ1 Բացատրել և մեկնաբանել, որ հաճախ մարդու առողջությունը կախված է հենց իր վարքագծից և սխալ որոշումներից, որոնք էլ դառնում են սովորություններ:

4ՇԵ-ԱՎ-Վ1 Նկարագրել ալկոհոլի օգտագործման կարճաժամկետ և երկարաժամկետ հնարավոր հետևանքները:

4ՇԵ-ԱՎ-Վ1 Բացատրել, որ ալկոհոլի տևական օգտագործումը կարող է մի շարք առողջական խնդիրներ առաջացնել՝ ֆիզիկական և հոգեկան

4ՇԵ-ԱՎ-Վ2 Ցուցադրում է ծխախոտի, ալկոհոլի և այլ վնասակար նյութերի օգտագործումից հրաժարվելու հմտություններ:

4ՇԵ-ԱՎ-Վ1 Նշել, որ որոշ վարակիչ հիվանդություններ կարող են տարածվել ջրի միջոցով, նկարագրել դրանց նշանները, կանխարգելման ուղիները:

Բովանդակություն

- Սնունդը որպես էներգիայի աղբյուր, սննդի կարևորությունը մտավոր և ֆիզիկական առողջության համար: Սննդային սովորությունները և ֆիզիկական ակտիվության մակարդակի ազդեցությունը քաշի վրա: Անվտանգ սննդի և ռեժիմի ազդեցությունը առողջության վրա: Խմելու ջրի դերը օրգանիզմում՝ նյութափոխանակությունը կարգավորելու համար:
- Անվտանգության պահպանության կարևորությունը և դրան չհետևելու դեպքում հնարավոր վնասվածքներն ու դժբախտ պատահարները: Առաջին օգնության իմացությունը և դրա կիրառումը տարբեր իրավիճակներում: Շրջապատում, բնության գրկում հնարավոր արտակարգ իրավիճակները՝ (մոլորվել անտառում, սառած ջրմբարների սառույցի ճեղքում, գիշատիչ կենդանիների հետ հանդիպում, կայծակի, կարկուտի, տեղատարափ անձրև և այլ՝ բնության վտանգ ներկայացնող երևույթների դեպքում) դրանցից խուսափելու և նման իրավիճակներում ճիշտ կողմնորոշվելու քայլերը:
- Առողջության, սեփական վարքագծի և սխալ որոշումների կապը: Ալկոհոլի օգտագործման հետևանքները: Ծխախոտի, ալկոհոլի և այլ վնասակար նյութերի օգտագործումից հրաժարվելու հմտություններ:
- Զուրը՝ որոշ վարակիչ հիվանդությունների տարածման միջոց, դրանց նշանները, կանխարգելման ուղիները:

Առաջարկվող գործունեության ձևեր	Խաչվող գաղափարներ
<ul style="list-style-type: none"> Խմբային, համագործակցային առաջադրանքներ Թվարկել և դասակարգել փողոցում և բնության գրկում հնարավոր բոլոր վտանգները: Տարբերակել և դասակարգել վտանգի աղբյուրները և խմբերով քննարկելով փորձել դուրս բերել անվտանգության կանոններ, դրանցից յուրաքանչյուրի համար: Նման առաջադրանքները համագորխակցելով կատարելը կարող է երաշխիք դառնալ, որ երեխաները կընդունեն և կհիշեն դրանք: Նույնատիպ առաջադրանքներ կարելի է անել առողջ սնուցման, սննդամթերքների ընտրության և սննդի անվտանգության վերաբերյալ: Դերային, մարմնավորման (սիմուլյացիոն) խաղեր Դերային խաղերով կարելի է բեմականացնել տարբեր վտանգավոր իրավիճակներ և խաղարկելով փորձել ձեռք բերել ճիշտ վարքագծեր և անհարժեշտ կանխարգելիչ քայլեր իմանալ: Կարևոր է վստահելի մեծահասակի մասին գաղափարը, որը կարող է լինել ծնողը, մեծ քույրը, եղբայրը, հարևանը, որին իր ծնողները վստահում են, ուսուցիչը և այլն, ում պետք է անպայման դիմեն, երբ իրենց հետ որևէ վախեցնող կամ անհասկանալի բան է պատահել: Իրավիճակների առաջադրում, քննարկում Վտանգների մասին ցանկացած ուսումնական նյութ հեշտ և արդյունավետ է յուրացվում, եթե քննարկվում են տարբեր իրավիճակներ, որոնցում անհարժեշտ է կողմնորոշվել և լուծումներ առաջարկել: Վնասակար սովորությունների համատեքստում քննարկել տարբեր իրավիճակներ, պատմություններ օրինակելի և սխալ վարքի օրինակների դիտարկում, տարբերակում, մեկնաբանում: Ինչպես զերծ մնալ վնասակար նյութերի ներգործությունից, խուսափել ծխող մարդկանց կողքը գտնվելուց, հրաժարվել նման առաջարկներից, բացատրելով, որ դա առողջարար չէ: Տարբերակել ընդունելի և անընդունելի վարքի օրինակները՝ ինչպես հասակակիցների, այնպես էլ մեծահասակների և հրաժարվել մասնակից լինելուց (եթե ծխել, խմել կամ այլ անթույլատրելի բան են առաջարկում): Դասարանական քննարկումներ և դեբատներ Յուրաքանչյուր իրավիճակային առաջադրանքից հետո կարելի է քննարկում կամ բանավեճ անցկացնել, եթե համաձայնության չեն եկել և դեռ մնացել են վիճելի հարցեր: Շնորհանդեսներ՝ գրավոր, բանավոր, տեսողական Աշխատանքային թերթիկներ՝ տարբեր տիպի առաջադրանքներով Թեմատիկ միավորի վերաբերյալ առաջադրանքներ Ուսուցողական ֆիլմերի դիտումներ, քննարկում Խաչբառների, գլուխկոտրուկների, հանելուկների կազմում, լուծում 	<ul style="list-style-type: none"> Օրինաչափություններ Պետք է տեսանելի դարձնել առողջության, առողջ սովորությունների, սեփական վարքագծի և սխալ որոշումների միջև, հասկանալ, որ դրանք օրինաչափ են և կանխատեսելի: Տեսնել կապ սննդային սովորությունների, ֆիզիկական ակտիվության և քաշի միջև: Պատճառ և հետևանք Կարևոր է ծխախոտի, ալկոհոլի և այլ վնասակար նյութերի օգտագործման հետևանքներն ու դրանց վնասակարությունը ցույց տալն ու ապացուցելը: Նման պատճառահետևանքային կապերը ցուցադրելն օգնում են խնդիրը խորությամբ ընկալելուն և վարքագծային փոփոխությունների առաջացմանը, հմտություններ ձևավորելուն: Վտանգ պարունակող վարքագծի և դրանից բխող հնարավոր վնասվածքների և դրանց կանխարգելման ցուցադրման և փորձարկման միջոցով ձևավորել անվտանգ վարքագիծ: Էներգիա և նյութ Կարևոր է սնունդը որպես էներգիայի աղբյուր դիտարկելն ու տարբեր նյութերում տարբեր էներգետիկ ներուժ ունենալու մասին իմանալը, չափավորելն ու չհարաշահելը: Կառուցվածք և գործառույթ Փորձել հասկանալ, թե կախված մարդու կառուցվածքից, որ իրավիճակներում ինչպիսի վնասվածքներն են ավելի հավանական և ինչ օգնություն կարո է պետք գալ նման դեպքերում: Կայունություն և փոփոխություն Վերը նկարագրված բոլոր գաղափարները կարելի է դիտարկել կայունության և փոփոխության տեսանկյունից, օրինակ առողջ վիճակը համարել կայուն, հիվանդությունը՝ անկայուն և քննել դրանց անցման հնարավորություններն ու պատճառները, անվտանգ և վտանգավոր իրավիճակները, վնասվածք չունենալն ու ստանալը, ալկոհոլ չօգտագործելն ու օգտագործած վիճակը և այլն:

<ul style="list-style-type: none"> • Նկարների դիագրամների, սահիկաշարերի, ֆիլմերի ցուցադրումը, 	
Միջառարկայական կապեր	
<p>Մայրենի</p> <ul style="list-style-type: none"> • Լսի և հասկանա տարբեր տեսակետներ, արտահայտի կարծիքը կամ վերաբերմունքը դրանց վերաբերյալ: • Ձևակերպի հարցեր քննարկվող թեմայի, ընթերցած կամ ունկնդրած տեքստի վերաբերյալ՝ լրացուցիչ տեղեկություններ • ստանալու կամ ճշգրտումներ անելու նպատակով, պատասխանի իրեն ուղղված հարցերին: • Ընթերցել բանաստեղծություններ, հանելուկներ թեմային համապատասխան, վերլուծել, պատասխանել հարցերին, մասնակցել բանավեճի՝ պահպանելով կանոնները: <p>Օտար լեզու</p> <ul style="list-style-type: none"> • Կարողանա ձևավորել համապատասխան բառապաշար: • Զարգացնել շատ պարզ լեզվական միջոցներով նախընտրած մարզաձևը և իր սննդակարգը ներկայացնելու հմտություններ, պարզ նախադասություններով պատմել առողջ ապրելակերպի, ճիշտ սնվելու, սննդակարգին հետևելու, մարզվելու մասին: <p>Ֆիզկուլտուրա</p> <ul style="list-style-type: none"> • Վարժությունների և շարժական խաղերի ընթացքում կարողանա հետևել անվտանգության կանոններին, իսկ հարկ եղած դեպքում ցույց տա առաջին օգնություն: • Իմանա, թե մարզվելիս երբ է կարելի ջուր խմել, ինչպես պահպանել անվտանգության կանոնները:: <p>Տեխնոլոգիա</p> <ul style="list-style-type: none"> • Մենդի մասին խոսելիս, կամ պարզագույն ուսեստներ պատրաստելիս, կարողանա օգտագործել ստացած գիտելիքը օրվա ռացիոնի, առողջ սննդի մասին: • Կարողանա բացատրել, որ առողջությունը կախված է նաև մաքուր միջավայրից, սանիտարական պատշաճ պայմաններից, որոնք և կապաշտպանեն տարատեսակ վարակներից: <p>Մաթեմատիկա</p> <ul style="list-style-type: none"> • Ամրապնդի զանգվածի մասին գիտելիքը՝ թվելով զանգվածի չափման միավորները, գտնելով կգ-գ, տ-կգ առնչությունները: • Կարողանա կշռվել, արդյունքները գրառել աղյուսակում, այդ տվյալներով կազմել խնդիր և լուծել: 	
Ներառարկայական կապեր	
<ul style="list-style-type: none"> • Առողջ սնուցման թեման կապվում է մարմնի կազմության, մարսողության, զգայարանների՝ համի, հոտի զգացողության, ատամների, բերանի խոռոչի, ձեռքերի, սննդի հիգիենայի հետ: • Բնության մեջ անվտանգության թեման կապվում է բնության, բույսերի և կենանիների, տեղանքի ուսումնասիրության, բնության գրկում դիտումների հետ: • Վնասակար սովորություններ և վարակիչ հիվանդությունների կանխարգելումը կապվում է հիգիենայի պահպանման հետ, ինչպես նաև, ինքնազնահատման, ինքնաճանաչման և ինքնարտահայտման թեմաների հետ: 	
Կապը Հանրակրթության պետական չափորոշի տարրական դպրոցի վերջնարդյունքների հետ	
<p>Թեմային ուղղակի առնչվող – S9, S12, S20, S33, S35 Թեմային մասամբ առնչվող – S1, S2, S7, S8, S22, S31</p>	

Ես և մարդիկ	
Փոխհարաբերություններ	Հասարակական փոփոխություններ
Համայնք	Քաղաքակրթություն Տնտեսություն
ԹԵՄԱ ԻՄ ՀԱՅՐԵՆԻՔԸ (10)	ԹԵՄԱ ԱՇԽԱՐՀԸ ՓՈՓՈԽՎՈՒՄ Է (9)
Նպատակ	
<ul style="list-style-type: none"> • Օգնել ընդլայնել գիտելիքները Հայաստանի խարհրդանիշների, բնաշխարհի, քաղաքների և գյուղերի, բնակիչների, պատմության, հայտնի մարդկանց և հերոսների մասին, ձևավորել սեր և պատասխանատվություն սեփական հայրենիքի հանդեպ, նպաստել հայ ինքնության ձևավորմանը: • Պատկերացում ձևավորել հնում եղած որոշ քաղաքակրթությունների մասին, որոնք հետք են թողել համաշխարհային պատմության մեջ՝ բացատրել, թե ինչպես են մեզ հասել տեղեկություններ այդ մշակույթների մասին: • Ձևավորել տարրական պատկերացումներ տնտեսության և դրա ճյուղերի մասին: • Օգնել կազմել անձնական բյուջե, գաղափար ունենալ ապրանքափոխանակության, փողի առաջացման և նշանակության մասին, բացատրել բարիք-փող-բարիք շղթան: 	
Առարկայի ընդհանրական չափորոշչային վերջնարդյունքներ	
<p>Համայնք</p> <p>ՇՄ-ՓՀ-Վ1 Դրսևորել հարգալից, հոգատար, պատասխանատու և անխտրական վերաբերմունք հասարակության տարբեր խմբերի ներկայացուցիչների հանդեպ:</p> <p>ՇՄ-ՓՀ-Վ2 Նկարագրել ազգային ինքնությունը սահմանող խորհրդանիշներն ու իրադարձությունները՝ անցյալի և ներկայի. տարբերակել իրենց ազգայինը այլ երկրների հետ համեմատության համատեքստում և զարգացնել դրանցից իրենց հուզական կախվածությունը:</p> <p>ՇՄ-ՓՀ-Վ3 Կողմնորոշվել տարածքում, բնութագրել տարբեր կառույցների, հաստատությունների նշանակությունը, դրանցից օգտվելու ձևերը:</p> <p>ՇՄ-ՓՀ-Վ4 Ճանաչել իր բնակավայրի, հայրենիքի բնության և պատմամշակութային արժեքները, գնահատի և խնայող և պատասխանատու վերաբերմունք ցուցաբերի դրանց հանդեպ:</p> <p>Քաղաքակրթական Տնտեսական</p> <p>ՇՄ-ՀՔՏ-Վ1 Հիշատակել հնում եղած որոշ նշանակալի քաղաքակրթությունների մասին տեղեկություններ, բացատրել, թե ինչպես, ինչ միջոցներով են մեզ հասել այդ մշակույթների մասին վկայությունները:</p> <p>ՇՄ-ՀՔՏ-Վ2 Թվել տնտեսության ճյուղերը, բնորոշել դրանք, համեմատել նախկինում և ներկայում դրանց զարգացման առանձնահատկությունները և ապագայում՝ կայուն զարգացման համատեքստում, օրինակներ բերել:</p> <p>ՇՄ-ՀՔՏ-Վ3 Ներկայացնել ապրանքափոխանակության, փողի առաջացման և նշանակության մասին, բացատրել բարիք- փող-բարիք շղթան, կազմել անձնական բյուջե:</p>	
Թեմայի վերջնարդյունքները	
<p>Համայնք</p> <p>4ՇՄ-ՓՀ-Վ2 Ճանաչել և նկարագրել ՀՀ պետական խորհրդանիշները</p> <p>4ՇՄ-ՓՀ-Վ2,3,4 Քարտեզի վրա ցույց տալ ՀՀ-ն և ԱՀ-ն, նրանց հարևան պետությունները, ՀՀ վարչական մարզերը և մարզկենտրոնները:</p>	

4ՇՄ-ՓՀ-Վ2,4 Թվարկել, Հայաստանի մեծ քաղաքները, գետերը լճերն ու լեռները, նկարագրել Հայաստանի բնաշխարհը ընդհանուր գծերով, թվարկել բնության արգելոցները:

4ՇՄ-ՓՀ-Վ2,3,4 Ճանաչել և բացատրել ժամանակի գծային բնույթը, անցյալի, ներկայի և ապագայի կապը, նկարագրել դրանց հաջորդայնությունը Հայաստանի՝ պատմական նշանակալի որոշ իրադարձությունների, նախնիների և ներկայիս Հայաստանի օրինակով:

4ՇՄ-ՓՀ-Վ4 Ճանաչել հայ ժողովրդի ամենահայտնի գործիչներին՝ գրողներ, գիտնականներ, նկարիչներ, ճարտարապետներ, երաժիշտներ, դերասաններ, ազգային հերոսներ և այլ:

4ՇՄ-ՓՀ-Վ4 Մեկնաբանել, թե ինչ պարտավորություններ ունեն երկրի բոլոր քաղաքացիները իրենց հայրենիքի հանդեպ:

4ՇՄ-ՓՀ-Վ4 Բնութագրել հայրենիքը սիրող, խնայող և պատասխանատու վարքագիծ ունեցող քաղաքացուն, թվարկել որակները և թե ինչպես կարող են իրենք էլ նման քաղաքացի լինել:

Քաղաքակրթական

Տնտեսական

4ՇՄ-ՀՔՏ-Վ1 Թվարկել հնում եղած որոշ քաղաքակրթություններ, որոնք հետք են թողել համաշխարհային պատմության մեջ

4ՇՄ-ՀՔՏ-Վ1 Բացատրել, թե ինչպես են մեզ հասել տեղեկություններ այդ մշակույթների մասին

4ՇՄ-ՀՔՏ-Վ2 Թվել տնտեսության ճյուղերը և բնորոշել դրանք:

4ՇՄ-ՀՔՏ-Վ2 Ճանաչել բնական հիմնական ռեսուրսները և օգտակար հանածոները, ներկայացնել դրանց սահմանափակ լինելը, տարբերակել և կիրառել դրանք խնայելու, մարդու կողմից շրջակա միջավայրը պահպանելու և բարելավելու պարզ ձևեր:

4ՇՄ-ՀՔՏ-Վ3 Բացատրել աշխատանք, արհեստ, ապրանքափոխանակություն հասկացությունները, դրանց առաջացումը

4ՇՄ-ՀՔՏ-Վ3 Մեկնաբանել հնում գործածվող արհեստների անհետացման և նորերի առաջացման պատճառները:

4ՇՄ-ՀՔՏ-Վ3 Նշել ապրանքափոխանակության, փողի առաջացման և նշանակության մասին, բացատրել բարիք-փող-բարիք շղթան:.

4ՇՄ-ՀՔՏ-Վ3 Կարողանալ կազմել անձնական բյուջե:

Բովանդակություն

- Հայաստանի տեղը աշխարհում, քարտեզի վրա, ՀՀ պետական խորհրդանիշները, ՀՀ մարզերը և մարզկենտրոնները, հարևան պետությունները, Հայաստանի մեծ քաղաքները, գետերը լճերն ու լեռները, Հայաստանի բնաշխարհը (ընդհանուր գծերով), բնության արգելոցները:
- Ժամանակի գծային բնույթը, անցյալի, ներկայի և ապագայի կապը, դրանց հաջորդայնությունը Պատմական նշանակալի որոշ իրադարձությունների, նախնիների և ներկայիս Հայաստանի օրինակներով:
- Հայ ժողովրդի ամենահայտնի գործիչները՝ գրողներ, գիտնականներ, նկարիչներ, ճարտարապետներ, երաժիշտներ, դերասաններ, ազգային հերոսներ և այլ:
- Հայրենասեր մարդու և քաղաքացու որակները
- Հնում եղած որոշ քաղաքակրթություններ, որոնք հետք են թողել համաշխարհային պատմության մեջ:
- Տնտեսության ճյուղերը և դրանց բնորոշումը:
- Բնական ռեսուրսները և օգտակար հանածոները, դրանց սահմանափակ լինելը, դրանք խնայելու, մարդու կողմից շրջակա միջավայրը պահպանելու, բարելավելու պարզ ձևեր:
- Աշխատանք, արհեստ, ապրանքափոխանակություն, դրանց առաջացումը:

Առաջարկվող գործունեության ձևեր

Խաչվող գաղափարներ

<ul style="list-style-type: none"> • Խմբային, համագործակցային առաջադրանքներ Կարելի է խմբերով իրականացնել հետազոտական առաջադրանքներ Հայաստանի վերաբերյալ՝ տարբեր ոլորտների շուրջ ուսումնասիրություններ, բնաշխարհի առանջնահատկությունների, ՀՀ խորհրդանիշների, վարչական միավորների՝ մարզերի, մարզկենտրոնների, հայտնի մարդկանց, պատմական հայտնի իրադարձությունների և այլնի վերաբերյալ: Այս աշխատանքները կատարելիս կարող են օգտվել ստորև ներկայացված մի շարք գործունեության ձևերի համադրմամբ: • Նկարների, գծապատկերների և սխեմաների ստեղծումը • Պատմական տարբեր ժամանակաշրջանների կարևոր իրադարձությունների մասին փոքրիկ տեղեկություններով կոլաժներ պատրաստել և կազմել ժամանակի գիծը՝ անցյալից ներկա՝ թվագրված համապատասխան տարեթվերով, ԲԱ-ԲԾ-ԲՀ շարունակական գծի վրա: • Դաշտային աշխատանք Իրենց գյուղի, մարզի, քաղաքի ուսումնասիրություն, հետաքրքիր փաստերի և նշանակալի դեպքերի, վայրերի, իրադարձությունների և մարդկանց մասին ընդլայնված հավաքագրում: • Նկարների դիագրամների, սահիկաշարերի, ֆիլմերի ցուցադրումը Հավաքագրած նյութերը ներկայացնել: • Տեքստի հետ ուսումնասիրման աշխատանքները Փոքրիկ տեղեկատվական տեքստերի և լրացուցիչ հայթայթած տեղեկությունների հիման վրա ամբողջացնել պատկերացումները տնտեսության, դրա ճյուղերի մասին: Կարելի է կրկին աշխատել խմբերով, յուրաքանչյուրը մի ճյուղի վերաբերյալ տեղեկություններ ուսումնասիրելով և ներկայացնելով բոլորին: Հնում եղած քաղաքակրթությունների մասին տեքստային ուսումնասիրման աշխատանքներ: • Դերային, մարմնավորման (սիմուլյացիոն) խաղեր Ապրանքափոխանակության, փոխի առաջացման և նշանակության մասին քարտերով խաղեր: Անձնական բյուջեի կազմում: • Պարզ հատակագծերի քարտեզների գծում, վերծանում, կողմնորոշում Մեր տարածաշրջանի քարտեզի ուսումնասիրման միջոցով ծանոթանալ Հայաստանի և Արցախի 	<ul style="list-style-type: none"> • Անհատ և հարաբերություններ Կարևոր է հասկանալ յուրաքանչյուրի դերը համայնքի, հայրենիքի զարգացման, անվտանգության, մշակույթի պահպանման հարցում: Հասկանալ, թե մենք ինչով ենք տարբերվում մյուսներից, ինչպես ենք շփվում միմյանց հետ, ինչ սովորություններ ունենք: Ինչպիսին պետք է լինի հայրենիքը սիրող անձը, որոնք են հայրենասեր մարդու, քաղաքացու բնորոշիչները: Պատմական ինչ իրադարձություններ են մեզ համար որոշիչ եղել, և ովքեր և այլն: • Անհատական և մշակութային արտահայտում Հայրենիքի թեմայում կարևոր է հիշել նախնիներին, հերոսներին, հայտնի մարդկանց՝ անցյալի և ներկայում, քննարկել, թե ովքեր են ներկայացնում մեր երկիրը, ինչով ենք ներկայանում, ինչով ենք հայտնի, ինչով ենք նման և տարբեր: Մշակութային ընդհանրությունների և տարբերությունների, ավանդույթների, տոների մասին տեղեկությունների հիման վրա: Մշակութային ինչ ազդեցություններ ենք կրում: Ինչով ենք առանձնանում: Առասպելներ, ավանդապատումներ, ճարտարապետություն, գիտություն և այլն: • Ժամանակ և տարածություն Շատ կարևոր է այդ տարիքում պատմական տարբեր իրադարձությունների համատեքստում պատկերացումներ փոխանցել և օգնել ըմբռնել ժամանակի, անցյալում կոնկրետ տարածքում կատարված իրադարձությունների, նույն ժամանակում տարբեր տարածքներում կատարվող զուգահեռ իրադարձությունների, նույն տարածքի՝ անցյալում և ներկայում կատարվող իրադարձությունների հարաբերակցությունը: Իրենց կյանքի, իրենց ընտանիքի պատմության օրինակը կարող է օգնել հասկանալու անցյալը, ներկան և ապագան: Պետք է հասկանան ժամանակը գծայի բնույթը անցյալի ներկայի ու ապագայի կապն ու հաջորդայնությունը: • Տեխնոլոգիաներ (գիտատեխնիկական նորարարություն) Տնտեսության թեման կօգնի հասկանալու թե ինչպես է պատմականորեն զարգացել տնտեսությունը տարբեր ժամանակաշրջաններում, տարբեր քաղաքակրթությունների համեմատության համատեքստում: Ինչպիսի տեխնոլոգիական նորարարական հայտնագործություններ են փոխել աշխարհը, այն դարձրել այնպիսին, ինչպիսին հիմա է, և թե ինչպիսի զարգացումներ են սպասվում: • Համաշխարհայինացում Կարելի է խոսել այն հասարակական, քաղաքական և գիտատեխնիկական ընդհանուր մոտեցումներից, որոնք ազդում են ողջ մոլորակի բնակչության վրա: Դրանք մարդու իրավունքներն են, միջազգային կազմակերպությունները,
---	---

քանրտեզներին, միմյանց հանդեպ դիրքին, մարզերին, քաղաքներին, գետերին, լճերին, հարևան պետություններին: Հասկանալ՝ էլ ինչ տեղեկություններ են մեզ տալիս քարտեզները:

• **Փաստական նյութերի հետաքրքիր և խթանող ներկայացում**

Հավաքած տեղեկությունները ներկայացնել այնպես, որ լրացուցիչ տեղեկություններ պարզելու ցանկություն առաջանա:

• **Տեսանյութերի ստեղծում**

Կարող են փոքրիկ տեսանյութեր ստեղծել հայրենասիրական թեմաներով: Իրենց երկիրն ավելի լավը, խնամված ու գեղեցիկ դարձնելու մասին՝ Իրենց դերը դրանում գիտակցելու մասին:

• **Էքսկուրսիաներ**

Ազգային պատկերասրահ, Հայաստանի բնության թանգարան, Բուսաբանական այգի, Մատենադարան, Պատմության թանգարան և այլն:

• **Թեմատիկ միավորի վերաբերյալ առաջադրանքներ**

Առաջադրանքներ՝ բարիք-փող-բարիք շղթայի ընկալման և մեկնաբանությունների վերաբերյալ:

դատարանները, տարբեր հիմնախնդիրների լուծմանն ուղղված համաձայնեցված գործողությունները, օրինակ՝ էկոլոգիական խնդիրները, պատերազմները, համավարակները, աղետները, կլիմայական փոփոխություններ և այլն:

• **Արդարություն և զարգացում**

Միջազգային կոնվենցիաների, հռչակագրերի, ընդունված, վավերացված կանոնակարգերը ուղղված են աշխարհում արդարության հաստատմանը և զարգացմանը:

Երեխայի իրավունքների հռչակագրի, հաշմանդամություն ունենցող մարդկանց իրավունքների ամրագրման և վավերացման օրինակով:

• **Պատճառ և հետևանք**

Տնտեսության զարգացման, հասարակական տարբեր գործընթացների, պատմական իարդարությունների քննարկաման համատեքստում շատ կարևոր է քննել պատճառահետևանքային կապերը, ինչու պատահեց, ինչու այդ ժամանակ, ինչ կարող էր լինել, եթե այսպես չլիներ, կամ այս անձը կամ դիպվածը չլիներ և այլն: Նման հարցերի շուրջ մտածելը զարգացնում է քննադատական մտածողությունը և հնարավորություն է տալիս վերլուծելու անցած կամ ներկա իրադարձությունները:

• **Մասշտաբ, համամասնություն և քանակ**

Տարբեր պատմական, տնտեսական և հասարակական իրադարձություններ կարելի է քննել դրա ազդեցության մասշտաբի, դրանում ներգրավված մարդկանց քանակի և այլնի վերաբերյալ:

• **Էներգիա և նյութ**

Բնական ռեսուրսները՝ որպես տնտեսության ճյուղերից մեկը, դիտարկել որպես էներգիայի և նյութական տնտեսագիտական կարևորագույն բազա, որի վրա զարգանում են բոլոր պետությունների տնտեսությունները և տնտեսական փոխհարաբերությունները: Պետք է ծանոթանան փողին, ապրանքափոխանակությանը, առևտրի ծագմանը, դրա նշանակությանն ու այսօրվա աշխարհում դրա կիրառմանն և անվտանգ օգտագործմանը, ունենան տեղեկություններ ֆինանսական պարզ գործարքներ մասին, որոնց կարող են իրենք մասնակից լինել: Հասկանալ բարիք-փող-բարիք շղթան:

• **Կառուցվածք և գործառույթ**

Հայաստանի օրինակով, կարելի է տարրական պատկերացում կազմել որ կան նաև հասարակական կառուցվածքներ, օրինակ պետությունը, դրա վարչական կառուցվածքը՝ Հանրապետություն, մարզեր, մարզկենտրոններ և այլն:

• **Կայունություն և փոփոխություն**

Այս թեմաներն ուսուցանելիս կարևոր է քննել թե ինչ ցուցիչներ կան պատմական կայունության:

	<p>Պատմական կայություն ցուցիչներ են մշակույթի զարգանալն ու մշակութային արժեքներ ստեղծելը, ստեղծարարությունը բոլոր ոլորտներում: Անկայությունը հաճախ հետընթացի և կործանումների պատճառ կարող է լինել: Տնտեսական կայությունը նույնպես զարգացման և առաջխաղացման հիմք կարող է հանդիսանալ:</p>
--	---

Միջառարկայական կապեր

<p>Մայրենի</p> <ul style="list-style-type: none"> • Կարողանա ընթերցել գրական գեղարվեստական ստեղծագործություններ, վերլուծել, կազմել նկարագրական բնույթի խոսք: • Արտահայտիլ իր վերաբերմունքը՝ օգտագործելով ածականներ, կարգա առասպելներ, ծանոթանա առասպելական հերոսների մասին պատմություններին, բնութագրի, նկարագրի նրանց: • Ամրապնդի հատուկ անունների ուղղագրությունները, պատմի, թե իր ընտանիքը ինչպես է տոնում ազգային, ծիսական տոները, իմանա խաղիկ-տաղիկներ, օրհնանքներ, մաղթանքի խոսքեր: <p>Արվեստ</p> <ul style="list-style-type: none"> • Իմանա և արտահայտիչ արտասանի Հայաստանի մասին բանաստեղծություններ, • Ունկնդրի և երգի ազգային երգեր, իմանա ազգագրական պարերի անուններ, պարային շարժումներ, պարեր: Իմանա և երգի հայրենասիրական, Հայաստանի մասին երգեր: • Կարողանա ինքնուրույն նկարի, ստեղծի կոլաժներ հայկական թեմաներով, ծանոթ լինի անվանի հայ ստեղծագործողների աշխատանքներին; <p>Տեխնոլոգիա</p> <ul style="list-style-type: none"> • Ճանաչի ազգային տարազները, կարողանա թելերով հյուսել տիկնիկներ, նկարել , ծեփել Հայաստան խորհրդանշող առարկաներ(նուռ, խաղող, խաչքար, ծիրան և այլն) <p>Մաթեմատիկա</p> <ul style="list-style-type: none"> • Կարողանա կարդալ բազմանիշ թվեր/տարբեթվեր: • Ճանաչի ՀՀ, ինչպես նաև այլ երկրներ դրամները: • Կարողանա կատարել պարզ հաշվարկներ՝ հաշվելով դրամ-դոլար, դոլար-դրամ, ռուսական ռուբլի-դրամ և այլն: <p>Օտար լեզու</p> <ul style="list-style-type: none"> • Կարողանա գրել և կարդալ Հայաստանի, տեղավայրերի անունները: • Պարզ նախադասությունների միջոցով կարողանա ներկայացնել, պատմել Հայաստանի մասին: • Կարողանա օտար լեզվով կարդալ աշխարհահռչակ մարդկանց թևավոր խոսքերը Հայաստանի, հայերենի մասին: <p>Ֆիզկուլտուրա</p> <ul style="list-style-type: none"> • Ծանոթ լինի ազգային խաղերի տեսակներին, կարողանա նկարագրի դրանք:

Ներառարկայական կապեր

<ul style="list-style-type: none"> • «Իմ հայրենիքը» և «Աշխարհը փոփոխվում է» թեմաները սերտորեն կապվում է «Ինքնաճանաչում», «Մարդիկ», «Բնություն» հիմնական գաղափարների հետ, այստեղ արծարծվում են և՛ ինքնության, և՛ շրջապատի մարդկանց հետ արդյունավետ շփվելու, և համայնքի, և՛ բնության հետ բոլոր տեսակի առնչությունների վերաբերյալ հարցեր և ամբողջանում են մյուս դասարաններում սկսած թեմաների հանգուցալուծումները:

Կապը հանրակրթության պետական չափորոշի տարրական դպրոցի վերջնարդյունքների հետ

Թեմային ուղղակի առնչվող –S17, S18, S19, S30, S31
Թեմային մասամբ առնչվող – S1, S2, S7, S8, S9, S16, S24

Մարդիկ	
Փոխհարաբերություններ	
Իրավունքներ (3)	Կոնֆլիկտ (3)
ԹԵՄԱ Հարգենք միմյանց (6 ժամ)	
Նպատակ	
<ul style="list-style-type: none"> Գաղափար տալ ընկալումների բազմազանության մասին՝ մշակութային, սեռային, տարրային և այլ տարբերություններով պայմանավորված: Օգնել գիտակցել իրավունքների և պարտականությունների փոխկախվածությունը՝ բացատրելով, որ իրավունքները պաշտպանելու և իրացնելու ձևերից մեկը՝ ուրիշների իրավունքները չխախտելն է և պարտավորությունները կատարելը: Բացատրել, որ մարդկանց փոխհարաբերություններում կարևոր են հավասարությունը, արդարությունը, ազնվություն, բարեկամության և խաղաղության ձգտումը: Բացատրել հաղորժողականության կարևորագույն, համամարդկային արժեք լինելը, օգնել գիտակցել, որ աշխարհը հարուստ է բազմազանությամբ, և որ տարբեր լինելը չի կարող խտրականության պատճառ դառնալ, ներկայացնել կարծրատիպերի և նախապաշարումների բացասական բնույթը՝ օրինակների միջոցով հիմնավորելով: 	
Առարկայի ընդհանրական չափորոշչային վերջնարդյունքներ	
<p>Իրավունքներ</p> <p>ՇՄ-ՓԻ-Վ1 Նկարագրել իրավունքների և քաղաքացիական պատասխանատվության հիմնական բաղադրիչները, որոնք հնարավորություն են տալիս իրենց հասարակությանը դուրս գալ ավելի զարգացած, ներդաշնակ ուղի:</p> <p>ՇՄ-ՓԻ-Վ2 Կանխատեսել իր և ուրիշների արարքների հնարավոր հետևանքները, գնահատել դրանք, ունենալ անձնական դիրքորոշում:</p>	
<p>Կոնֆլիկտ</p> <p>ՇՄ-ՓԿ-Վ1 Ցուցաբերել արդյունավետ շփման, կոնֆլիկտները խաղաղ կարգավորելուն ուղղված վարքագիծ:</p> <p>ՇՄ-ՓԿ-Վ2 Տարբերակել բռնության տարբեր դրսևորումները հասակակիցների և մեծահասակների կողմից/միջև հրաժարվել բռնության բոլոր ձևերից, աջակցել բռնության ենթարկվածին:</p> <p>ՇՄ-ՓԿ-Վ3 Տարբերակել փաստը տեսակետից:</p> <p>ՇՄ-ՓԿ-Վ4 Նկարագրել և բերել օրինակներ ազատության, արդարության հավասարության, պատասխանատվության և հանդուրժողականության վերաբերյալ:</p>	
Թեմայի վերջնարդյունքները	
<p>Իրավունքներ</p> <p>4ՇՄ-ՓԻ-Վ1 Հիմնավորել, որ մյուսների իրավունքները հարգելը և չխախտելը պարտականություն է: Հիմնավորել ընկալումների բազմազանությունը հարգելու անհրաժեշտությունը:</p> <p>4ՇՄ-ՓԻ-Վ1 Հարգել բոլորի տարբեր լինելու իրավունքը:</p> <p>4ՇՄ-ՓԻ-Վ1-2 Նշել և մեկնաբանել, որ իրավունքները պաշտպանելու և իրացնելու ձևերից մեկը՝ ուրիշների իրավունքները չխախտելն է և պարտավորությունները կատարելը:</p>	

- 4ՇՄ-ՓԻ-Վ1** Մեկնաբանել մարդկանց փոխհարաբերություններում հավասարության, արդարության, ազնվության, բարեկամության և խաղաղության կարևորությունը:
- 4ՇՄ-ՓԿ-Վ4** Կարևորել արդարությունը որպես արժեք:
- Կոնֆլիկտ**
- 4ՇՄ-ՓԿ-Վ1-4** Դրսևորել հանդուրժողական վերաբերմունք իրենից տարբեր մարդկանց, կարծիքների և կարողությունների հանդեպ:
- 4ՇՄ-ՓԿ-Վ4** Հասկանալ և բացատրել հաղորժողականության կարևորագույն, համամարդկային արժեք լինելը
- ՇՄ-ՓԿ-Վ4-2** Նկարագրել, մեկնաբանել կարծրատիպերի և նախապաշարումների բացասական բնույթը, հիմնավորել պիտակավորման բացասական ազդեցությունը:
- 4ՇՄ-ՓԿ-Վ3** Տարբերակել փաստը տեսակետից:
- ՇՄ-ՓԿ-Վ2** Բացատրել, թե ինչ է խտրականությունը, և երբ կարող է այն կիրառվել, նշել դրա վնասները:
- 4ՇՄ-ՓԿ-Վ1** Նկարագրել խտրության ենթարկված մարդկանց հոգեվիճակը և ապրումակցել:
- 4ՇՄ-ՓԿ-Վ4-2** Նշել, թվարկել մարդկանց այն խմբերը, որոնց հանդեպ հնարավոր է առավել հաճախ կիրառվեն խտրականություն:

Բովանդակություն

- Մյուսների իրավունքները հարգելը և չխախտելը՝ պարտականություն:
- Ընկալումների բազմազանությունը հարգելու անհրաժեշտությունը:
- Բոլորի տարբեր լինելու իրավունքը:
- Իրավունքները պաշտպանելու և իրացնելու ձևերից մեկը՝ ուրիշների իրավունքները չխախտելն է և պարտավորությունները կատարելը:
- Մարդկանց փոխհարաբերություններում հավասարության, արդարության, ազնվության, բարեկամության և խաղաղության կարևորությունը:
- Հանդուրժողական վերաբերմունք իրենից տարբեր մարդկանց, կարծիքների և կարողությունների հանդեպ:
- Կարծրատիպերի և նախապաշարումների բացասական բնույթը, պիտակավորման բացասական ազդեցությունը: Խտրականություն
- Փաստի և տեսակետի տարբերությունները:
- Մարդկանց խմբեր, որոնց հանդեպ հնարավոր է առավել հաճախ կիրառվեն խտրականություն:

Առաջարկվող գործունեության ձևեր	Խաչվող գաղափարներ
<ul style="list-style-type: none"> • Ուսումնական տարբեր նպատակներով կիրառվող խաղեր Կարևոր են այնպիսի վարժություններն ու խաղերը, որոնց ժամանակ կբացահայտվեն իրենց առանձնահատկություններն ու տարբերությունները, որոնց մասին իրենք ուզում են խոսել: Դրանք այն հիմքերն են, որոնք համոզում են երեխաներին ընկալելու մյուսների՝ տարբեր լինելու իրավունքը, ինչպես իրենցը: Վարժություններ որոնք նախապաշարումների և կարծրատիպերի ցայտուն օրինակների միջոցով տեսանելի կդարձնեն դրանց անթույլատրելիությունը և բացասական ազդեցությունը մարդկանց բարեկեցության ու ապահովության վրա: Կարևոր է նաև ցուցադրել այդ կարծրատիպերի ազդեցությունը հենց իրենց վրա, սա կարևոր բացահայտում է 	<ul style="list-style-type: none"> • Անհատ և հարաբերություններ Թեմայում ամենակարևորը՝ մարդու, անհատի տարբեր լինելու, ինքնատիպ և առանձնահատուկ լինելու իրավունքի ընդունումն ու հարգումն է: Այս սկզբունքն ընկած է մարդու իրավունքների հիմքում և այս մտայնության խթանումը պետք է լինի առանցքային հասարակության տարբեր խմբեր միջև փոխհարաբերությունների կառուցման համատեքստում: Այդպիսի խմբեր են տարբեր՝ էթնիկ, ազգային, տարքային սեռային, հաշմանդամություն ունեցող, մարդկանց խմբերը, որոնց հանդեպ հասարակություն մեջ կարող են գործել նախապաշարումներ, կարծրատիպեր և խտրական վերաբերմունք: Պետք է կարևորվեն մարդկանց փոխհարաբերություններում հավասարության, արդարության, ազնվության, բարեկամության և խաղաղության գերակայությունը:

դառնում, որպեսզի երեխաները **քննադատաբար վերլուծեն** ամեն մի կարծիք տեղեկություն՝ **հարցեր ուղղելով իրենց**։ Ինչու եմ այդպես կարծում, ու՞մից եմ իմացել, ինքս իմ աչքով տեսե՞լ եմ, ո՞վ ունի շահ այդպես ներկայացնելու և այլն:

• **Իրավիճակների առաջադրում, քննարկում**

Առաջադրել այնպիսի իրավիճակներ, որոնցում կդիտարկվեն տարբեր մարդկանց խմբերի հանդեպ կարծրատիպային ընկալումները՝ կախված տարիքից, հաշմանդամությունից և այլ գործոններից, որոնցում ակնհայտ կլինի, որ խտրության պատճառը հենց այդ տարբերություններն են:

• **Համագործակցային առաջադրանքներ**

Համագործակցային առաջադրանքների ժամանակ երեխաները ելնելով կանոններից հարկադրված են լսել և հաշվի առնել իրենցից տարբեր կարծիքներ և ընդհանուր եզրահանգման գալ, ինչը նպաստում է, որպեսզի ձևավորվեն հանդուրժողական մոտեցումներ բազմակարծության հանդեպ: Բացի այդ՝ կարևոր է որ հասկանան, որ բազում կարծիքներ լսելը նպաստում է որ միասին ստեղծեն նոր, ավելի հիմնավորված տեսակետ:

• **Դերային, մարմնավորման (սիմուլյացիոն) խաղեր**

Դերային, մարմնավորման խաղերը հնարավորություն են ստեղծում որևէ կերպարի ապրումների ու իրավիճակի մեջ մտնել, զգալ, ապրումակցել նրան: Այս թեմայում կարևոր է տարբեր խոցելի խմբերի կերպարների և նրանց ապրումների վերաբերյալ դերային վարժություններ ընտրել:

• **Դասարանական քննարկումներ և բանավեճեր**

Բազմակարծության, հանդուրժողականության, մարդու իրավունքների, հանդուրժողականության, խտրականության, կարծրատիպերի և նախապաշարումների վերաբերյալ կարելի է քննարկումներ, **բանավեճեր անցկացնել**, նախապես՝ բանավեճի կանոններին ծանոթացնելով:

• **Փաստական նյութերի հետաքրքիր և խթանող ներկայացում**

Փաստական նյութեր հավաքելիս **ուշադրություն դարձնել** և տարբերակել փաստը կարծիքից, տեսակետից: Մեղիագրագետ լինելու կարևոր կարողություններից մեկը հանց **փաստը տեսակետից տարբերելն է**:

• **Շնորհանդեսներ՝ գրավոր, բանավոր, տեսողական**

• **Անհատական և մշակութային արտահայտում**

Հաճախ նախապաշարումներն ու կարծրատիպերը պայմանավորված են լինում մշակութային հաղորդակցության պակասի, միմյանց մասին չիմացության և պատմական իրադարձությունների տարբեր մեկնաբանությունների հետևանքով: Կարևոր է օրինակների և այդ կարծրատիպերը կոտորող, մեկնաբանող, նախապաշարումները չեզոքացնող վարժանքներ և պնդումներ անել, որոնք էլ կօգնեն տարբերել փաստը տեսակետից:

• **Համաշխարհայնացում**

Միջազգային փաստաթղթերով հաստատված, վավերացված կարգավորումները օգնում են, որպեսզի աշխարհն ավելի հարմարավետ դառնա մարդկության համար, որոնք արդեն շատ ավելի շատ են ճամփորդում, տարբեր երկրներում աշխատում և բնակվում՝ լինելով տարբեր մշակույթների կրող, բայց նույն համակեցության կանոններն ընդունող: Հետևաբար նման կարգավորումներն առավել անվտանգ են դարձնում տարբեր երկրների քաղաքացիներին ապահով զգալու այլ երկրներում՝ անկախ նրանից, թե ինչպիսի մշակութային սովորույթներ, համոզմունքներ ու դավանանք ունեն:

• **Օրինաչափություններ**

• Ցանկացած հասարակարգում և բոլոր ժամանակներում անկախ այդ հասկացությունների գերակայության փաստի, միևնույն է բոլորն զգում են այդ կենսական պահանջմունքը մարդկային փոխհարաբերություններում՝ հավասարության, արդարության, ազնվության, բարեկամության և խաղաղության անհրաժեշտությունը:

Դրանք օրինաչափ են, քանի որ բխում են մարդու ի ծնե պահանջմունքներից:

• **Պատճառ և հետևանք**

Թեմայի բոլոր ենթակետերում պետք է անդրադարձ անել և իրավիճակները քննել պատճառահետևանքային կապերը բացահայտելու և վերլուծելու միտումով:

• **Կայունություն և փոփոխություն**

Խտրականության ենթարկված և հալածված մարդիկ երբեք չեն կարող զգալ թե ինչ է կայությունը, կամ այդ հալածանքն ու իրենց հանդեպ խտրությունն է կայուն: Նման խմբերի, մարդկանց ապրումներ խիստ բացասական են և անարդար: Պետք է իրավիճակների նմանակման միջոցով հասնել նրան, որ բոլորն զգան և ապրումակցեն նման վերաբերմունքի արժանացած մարդկանց: Օրինակներ բերել և հիմնավորել այդ մարդկանց հանդեպ վերաբերմունքի փոփոխության անհրաժեշտությունը:

<ul style="list-style-type: none"> • Աշխատանքային թերթիկներ՝ տարբեր տիպի առաջադրանքներով • Ուսուցողական ֆիլմերի դիտումներ, քննարկում 	
--	--

Միջառարկայական կապեր

<p>Մայրենի</p> <ul style="list-style-type: none"> • Կարողանա գրական գեղարվեստական ստեղծագործությունների միջոցով քննարկել պիտակավորման , խտրականության, անարդարության, կանխակալության դեպքեր, վերլուծել, արտահայտել սեփական կարծիքը՝ խոսքը կառուցելով հստակ, պարզաբանված, հիմնավորումներով: • Դերախաղերի միջոցով ապրումակցել խտրականության ենթարկված մարդկանց, հիմնավորել նրանց հանդեպ վերաբերմունքի փոփոխության անհրաժեշտությունը: • Սովորել թեմային համապատասխան բառերի ուղղագրությունը՝ արդարություն, խտրականություն և այլն: • Գտնել առաջադրված բառերի հոմանիշ-հականիշները, կազմել բառակապակցություններ, նախադասություններ: <p>Մաթեմատիկա</p> <ul style="list-style-type: none"> • Կարողանա գտնել առաջադրված օրինակներում հակադրություններ, կատարի համեմատություններ, հիմնավորի և պարզաբանի այդ երևույթների փոխկապվածությունը: <p>Օտար լեզու</p> <ul style="list-style-type: none"> • Հարստացնի բառապաշարը թեմային համապատասխան բառերով: • Կարողանա պարզ նախադասություններով արտահայտել մտքեր, սովորել բառերի գրությունն ու հնչյունային արտասանությունը: <p>Տեխնոլոգիա</p> <ul style="list-style-type: none"> • Կարողանա գործնական աշխատանքների ընթացքում կարևորի հանդուրժողականությունն ու համագործակցությունը, միմյանց օգնելու անհրաժեշտությունը, ընկերոջ կարողությունները գնահատելը: <p>Արվեստ</p> <ul style="list-style-type: none"> • Կարողանա ստեղծել նկարներ, կոլաժներ, մեկանաբանել, հիմնավորել:(կերպարվեստ) • Հանրահայտ արվեստագետների օրինակով ցույց տալ , որ նրանք իրենց տաղանդավոր ստեղծագործություններով թույլ չեն տվել իրենց նկատմամբ խտրականություն կիրառել:(Հայտնի կոմպոզիտորների օրինակները՝ երաժշտություն) <p>Ֆիզկուլտուրա</p> <ul style="list-style-type: none"> • Իսաղերի և վարժությունների ժամանակ գնահատի իր և ընկերների կարողությունները, երբեք չճաղի կամ պիտակավորի սահմանափակ կարողություններ ունեցող ընկերներին:
--

Ներառարկայան կապեր

<ul style="list-style-type: none"> • «Իրավունքներ» և «Կոնֆլիկտ» թեմաները սերտորեն կապվում են «Ես» և «Ես և մարդիկ» հիմնական հասկացությունների բոլոր թեմաների հետ:

Կապը Հանրակրթության պետական չափորոշի տարրական դպրոցի վերջնարդյունքների հետ

<p>Թեմային ուղղակի առնչվող՝ S7, S22, S25, S35 Թեմային մասամբ առնչվող՝ S1, S2, S8, S9, S12, S15, S23, S24, S29</p>
--

Ես և բնություն		
Բնության բազմազանություն փոխազդեցություններ		
Կենդանի բնության օբյեկտները	Անկենդան բնության օբյեկտներ	Փոփոխությունները բնության մեջ
ԹԵՄԱ Փոխազդեցությունները կենդանի օրգանիզմների միջև (3 ժամ)	ԹԵՄԱ Ջրի աղտոտվածությունը (2 ժամ)	ԹԵՄԱ Պահպանենք բնությունը (3 ժամ)
Նպատակ		
<ul style="list-style-type: none"> Ընդգծելով սննդի կարևորությունը՝ բացատրել, որ կենդանիները և բույսերը ինչպես են ստանում իրենց սնունդը: Գաղափար տալ սնկերի մասին՝ որպես կենդանի բնության յուրահատուկ խումբ՝ նշելով, որ նրանք որոշ հատկություններով նման են կենդանիներին, որոշ հատկություններով՝ բույսերին, տարբերակել որոշ տեսակներ: Ամրապնդել ջրի կարևորության գաղափարը՝ տարբերելով մաքուր և աղտոտված ջուրը՝ նշելով թե ինչու է աղտոտված ջուրը վնասակար բույսերի, մարդու և կենդանիների համար: Օրինակների միջոցով բացատրել, թե մարդու գործունեությունն ինչպես է ազդում շրջակա միջավայրի և կենսաբազմազանության վրա: 		
Առարկայի ընդհանրական չափորոշչային վերջնարդյունքներ		
<p>Կենդանի բնության օբյեկտները</p> <p>ՇԲ-ԲԿ-Վ1 Նկարագրել, հիմնավորել, որ բնության մեջ գտնվող բուսական և կենդանական տեսակները դասակարգվում են ըստ տարբեր բնութագրերի, բերել տարբեր դասակարգումների օրինակներ:</p> <p>ՇԲ-ԲԿ-Վ2 Դիտարկել և նկարագրել բույսերի հիմնական մասերը, նկարագրել դրանց հիմնական գործառույթները, հետազոտել, ներկայացնել սերմերի ծլման, աճի գործընթացը և դրա համար անհրժեշտ պայմանները:</p> <p>ՇԲ-ԲԿ-Վ3 Դիտարկել և բացատրել, որ բոլոր կենդանի օրգանիզմները բազմանում են և առաջացնում են իրենց նման, բայց ոչ կրկնօրինակ սերունդ:</p> <p>ՇԲ-ԲԿ-Վ4 Բացատրել, թե մարդը, կենդանիները և բույսերը որտեղից են ստանում իրենց սնունդը, նշելով, որ բույսերը արեգակնային էներգիայի հաշվին ստեղծում և կուտակում են սննդանյութեր, իսկ մարդը և կենդանիները սնվում են բույսերով կամ այլ կենդանիներով, սնման շղթաների օրինակներ բերել:</p> <p>Անկենդան բնության օբյեկտները</p> <p>ՇԲ-ԲԱ-Վ1 Ճանաչել երկրի մակերևույթի հիմնական ձևերը, բնորոշել, նկարագրել իր շրջապատի ռելիեֆի տարբեր ձևերը՝ տափարակ, բլուր, սար, լեռ, գետ, լիճ, ծով և այլն:</p> <p>ՇԲ-ԲԱ-Վ2 Բնութագրել և նկարագրել անկենդան բնությունը՝ որպես կենդանիների, բույսերի և մարդկանց բնակության միջավայր՝ օդը, ջուրը, հողը:</p> <p>ՇԲ-ԲԱ-Վ3 Ներկայացնել մարդկանց, բույսերի և կենդանիների համար ջրի կենսական նշանակությունը, երկրագնդի վրա քաղցրահամ ջրի պաշարների սահմանափակությունը, աղտոտման խնդիրը, ջրի տնտեսման, պաշարների արդյունավետ օգտագործման անհրաժեշտությունը:</p> <p>ՇԲ-ԲԱ-Վ4 Բացատրել, որ երկրագունդը շրջապատված է մթնոլորտով և ունի կենսական նշանակություն:</p> <p>ՇԲ-ԲԱ-Վ5 Գլոբուսի և քարտեզի վրա ցույց տալ մայրցամաքները և օվկիանոսները, հորիզոնի հիմնական և միջանկյալ կողմերը և կողմնորոշվել դրանցով, կարողանալ օգտվել կողմնացույցից, ճանաչել մասշտաբ և պայմանական նշաններ հասկացությունները:</p> <p>Փոփոխությունները բնության մեջ</p>		

ՇՐ-ՐՓ-Վ1 Ճանաչել և նկարագրել բնության մեջ տեղի ունեցող պարբերական երևույթները՝ եղանակային փոփոխություններ, գիշեր-ցերեկ և այդ փոփոխություններով պայմանավորված այլ բնական երևույթները ինչ ազդեցություն են ունենում բնության վրա:

ՇՐ-ՐՓ-Վ2 Ներկայացնել, թե մարդու գործունեությունն ինչպես է ազդում շրջակա միջավայրի և կենսաբազմազանության վրա, օրինակ, աղբ, գետերի աղտոտվածություն, թափոնների արտանետում, մեկնաբանել բնության աղտոտվածության և առողջության կապը:

ՇՐ-ՐՓ-Վ3 Ներկայացնել էկոհամակարգերը դրանց փոխկախվածությունը, փոփոխությունները, վատթարացումը՝ տարբեր՝ կենսածին, մարդածին և ոչ կենսածին գործոնների ազդեցության տակ:

ՇՐ-ՐՓ-Վ4 Բացատրել աղբի տեսակավորման, վերամշակման, երկրորդային օգտագործման և թափոնների վերամշակման անհրաժեշտությունը բնապահպանության և խնայողության տեսանկյունից:

Թեմայի վերջնարդյունքները

Կենդանի բնության օբյեկտները

4ՇՐ-ՐԿ-Վ4 Բացատրել, թե կենդանիները և բույսերը որտեղից են ստանում իրենց սնունդը, նշելով, որ բույսերը արեգակնային էներգիայի հաշվին ստեղծում և կուտակում են սննդանյութեր, իսկ կենդանիները սնվում են բույսերով կամ այլ կենդանիներով:

4ՇՐ-ՐԿ-Վ4 Նկարագրել տարբեր կենդանի օրգանիզմների միջև առկա դրական և բացասական փոխհարաբերությունները

4ՇՐ-ՐԿ-Վ1 Ճանաչել սնկերը, որպես կենդանի բնության յուրահատուկ խումբ, ներկայացնել դրանց որոշ տեսակներ՝ ուտելի, թունավոր, բորբոսասունկ, հիվանդածին և այլ:

Անկենդան բնության օբյեկտները⁴

4ՇՐ-ՐԱ-Վ3 Բացատրել և հիմնավորել ջրի կարևորությունը օրգանիզմների համար

4ՇՐ-ՐԱ-Վ3 Ներկայացնել, թե ինչպես կարելի է տարբերել մաքուր և աղտոտված ջուրը

4ՇՐ-ՐԱ-Վ3 Նկարագրել, թե ինչպես կարելի է մաքրել ջուրը

4ՇՐ-ՐԱ-Վ3 Բացատրել թե, ինչու է աղտոտված ջուրը վնասակար բույսերի, մարդու և կենդանիների համար:

Փոփոխությունները բնության մեջ

4ՇՐ-ՐՓ-Վ2 Մեկնաբանել, թե մարդու գործունեությունն ինչպես է ազդում շրջակա միջավայրի և կենսաբազմազանության վրա, օրինակ աղբ, գետերի աղտոտվածություն, թափոնների արտանետում

4ՇՐ-ՐՓ-Վ4 Բացատրել աղբի տեսակավորման, վերամշակման, երկրորդային օգտագործման և թափոնների վերամշակման անհրաժեշտությունը բնապահպանության և խնայողության տեսանկյունից:

4ՇՐ-ՐՓ-Վ2 Մեկնաբանել բնության աղտոտվածության և առողջության կապը, Հայաստանի ներկայիս որոշ բնապահպանակն խնդիրների օրինակներ բերել:

4ՇՐ-ՐՓ-Վ2 Ներկայացնել Սևանա լճում ապրող ձկների վրա գերորսի և լճի աղտոտման հետևանքները և առաջարկել, թե ինչպես կարելի է դա կանխել:

Բովանդակություն

- Մասնավորեցնել, թե մարդու գործունեությունն ինչպես է ազդում շրջակա միջավայրի և կենսաբազմազանության վրա, օրինակ, աղբ, գետերի աղտոտվածություն, թափոնների արտանետում:
- Բացատրել աղբի տեսակավորման, վերամշակման, երկրորդային օգտագործման և թափոնների վերամշակման անհրաժեշտությունը բնապահպանության և խնայողության տեսանկյունից:
- Մեկնաբանել բնության աղտոտվածության և առողջության կապը, Հայաստանի ներկայիս որոշ բնապահպանակն խնդիրների օրինակներ բերել:
- Ներկայացնել Սևանա լճում ապրող ձկների վրա գերորսի և լճի աղտոտման հետևանքները և առաջարկել, թե ինչպես կարելի է դա կանխել:
- Մարդու գործունեության ազդեցությունը շրջակա միջավայրի և կենսաբազմազանության վրա, օրինակ, աղբ, գետերի աղտոտվածություն, թափոնների արտանետում
- Հայաստանին բնորոշ բնապահպանական խնդիրներ և միջոցառումներ

⁴ Այս թեման անցնելու համար հարկավոր է նախ ուսուցանել «Ես և տիեզերքը» հիմնական հասկացության «Նյութերի վիճակ և հատկություն» թեման, որպեսզի երեխաները կարողանան ջրի հատկությունների մասին գիտելիքները կիրառել:

<ul style="list-style-type: none"> • Բնության աղտոտվածության և առողջության կապը 	
<p align="center">Առաջարկվող գործունեության ձևեր</p>	<p align="center">Խաչվող գաղափարներ</p>
<ul style="list-style-type: none"> • Աշխատանքային թերթիկներ՝ տարբեր տիպի առաջադրանքներով Քարտերով կամ նկարներով աշխատանք, որոնցում գրված կամ պատկերված են՝ արև, հող, ջուր բույսերի տարբեր տեսակներ, կենդանիներ, մարդ և այլն: Կարող են այս քարտերի օգնությամբ բազմաթիվ պարզ և բարդ սննդային շղթաներ կազմել և մեկնաբանել: Այս համեմատության մեջ կարելի է առանձնացնել սնկերը՝ ըստ սնման մեխանիզմի տարբերության: • Ուսումնական տարբեր նպատակներով կիրառվող խաղեր Խմբային խաղեր որոնք կխորհրդանշեն էկոհամակարգերում սննդային փոխկախվածությունները, օրգանիզմների միջև առկա դրական կամ բացասական փոխհարաբերությունները: • Դիտումներ Դիտումներ իրականացնել, թե շրջակա միջավայրում ջրային ինչ ունեւորսներ կան, հայտնել դրանց մաքուր կամ աղտոտված լինելու մասին իրենց տեսակետները, լուսանկարել, ներկայացնել: Աղբի և շրջակա միջավայրի աղտոտվածության վերաբերյալ դիտումներ անել, տվյալներ հավաքագրել և նշումներ անել: Դիտումներ իրականացնել՝ տեսնել կենդանի օրգանիզմների մոտ նկատվող դրական և բացասական փոխհարաբերությունների (օրինակ՝ մի բույսի՝ մյուս բույսի սննդարար նյութերի հաշվին ապրելը, կամ կենդանիների՝ մակաբույծ տեսակների որևէ օրինակի վրա): • Խմբային, համագործակցային առաջադրանքներ Խմբերին կարելի է առաջարկել իրենց ունեցած գիտելիքների հիման վրա, մտածել թե ինչպես կարող են մաքրել փորձերում նկարագրված կեղտոտված ջրի տարբերակները: Փորձերի պլանավորումն ու անցկացումն իրականացնում են խմբերը, կամ նկարագրում են և հավանության դեպքում՝ իրականացնում: Աղբի վերամշակման և երկրորդային օգտագործման վերաբերյալ առաջարկների քննարկում: • Փորձեր Կատարել փորձեր. ջրի մաքրման մի քանի տարբերակ՝ 1. Ջրի հետ խառնված է ավազ (կարելի է ֆիլտրելով մաքրել) 2. Ջրի հետ խառնված է հող (կարելի է թողնել նստվածքը նստի, վրայից վերցված ջուրը ֆիլտրել, եթե լրիվ չմաքրվի, պղտորություն մնա՝ հետո կարելի է եռացնել) 3. Ջրի մեջ լուծած է աղ կամ շաքար (թորել, եթե սարք կա, կամ եռացնել և կոնդենսացնել գոլորշին) 4. Ջրի մեջ լուծած է կալիումի պերմանգանատ (կրկին թորել, եթե սարք կա, կամ եռացնել և կոնդենսացնել գոլորշին) • Խնդրի առաջադրում, լուծումների որոնում, դիտարկման կամ փորձի միջոցով արդյունքների գնահատում և վերլուծություն, եզրահանգումների վերհանում ու քննարկում: 	<ul style="list-style-type: none"> • Օրինաչափություններ Բնության մեջ գործող օրենքներն ու օրինաչափությունները խախտվում են մարդու ներգործության պատճառով: Բնապահպանական մի շարք խնդիրներ, որոնք համերկարային են և տեղային կարող են փոխել այդ օրինաչափություններն ու այլ օրինաչափություններ առաջ բերել: Օրինակ՝ բույսերի տեսակների, կենդանիների տեսակների բնական միջավայրում, որտեղ օրինաչափ է իրենց բնականոն զոյատուումը, քանի որ բխում է այդ տեղանքի կենսապայմաններից, մարդու ներգործության հետևանքով դրանք կարող են անդառնալի խախտվել: • Պատճառ և հետևանք Վերլուծել բոլոր պատճառահետևանքային կապերը՝ բնության աղտոտվածության և կենսաբազմազանության, մարդկանց առողջության, բարեկեցության միջև: • Մասշտաբ, համամասնություն և քանակ Քննել, ճշտել տեղեկություններ վերացող կամ իսպառ վերացած կենդանական և բուսական տեսակների՝ նախկինում գրաված տարածքների և քանակի վերաբերյալ և թե որքան ժամանակում ինչպես են փոխվել այդ տվյալները, մասշտաբները որքան են փոքրացել: Քաղցրահամ ջրերի սահմանափակ լինելու դրանց աղտոտվածության և պահպանության կարևորության, դրա պակասի ազդեցության, անապատացման վտանգի, անտառների ոչնչացման, դրանց մասշտաբների ու ոչնչացման մասշտաբների մասին տեղեկությունների քննում և վերլուծում: • Համակարգեր և մոդելներ Սևանա լճի օրինակով հասկանալ լճի էկոհամակարգի խաթարման անդառնալի հետևանքները շրջակա միջավայրի՝ բնության, կենդանիների և

<p>Ջրի մաքրման փորձերը պլանավորելիս և իրականացնելիս ճիշտ կլինի երեխաներին ծանոթացնել այս քայլաշարին և աշխատանքը կազմակերպել հետևյալ քայլաշարով:</p> <ul style="list-style-type: none"> • Մոդելավորում <p>Սննդային շղթաների մոդելների ստեղծում՝ պայմանական միավորներով, օրինակ՝ հող-բույս-խոտակեր կենդանի-գիշատիչ</p> <ul style="list-style-type: none"> • Պրոյեկտներ <p>Աղբի հիմնախնդրի և երկրորդային օգտագործման վերաբերյալ փորյեկտների իրականացում:</p> <ul style="list-style-type: none"> • Փաստական նյութերի հետաքրքիր և խթանող ներկայա <p>Կենդանի օրգանիզմների միջև առկա դրական և բացասական փոխհարաբերությունների վերաբերյալ, ջրի աղտոտվածության, ռջակա միջավայրի՝ աղբի հետ կապված պնդիրների վերաբերյալ և այլն:</p> <ul style="list-style-type: none"> • Ուսուցողական ֆիլմերի դիտումներ, քննարկում <p>Շրջակա միջավայրի աղտոտվածության և և առողջության միջև կապի մասին, ջրի աղտոտվածության և երկրի քաղցրահամ ջրերի սահմանափակության մասին ֆիլմերի դիտում, քննարկում:</p> <ul style="list-style-type: none"> • Թեմատիկ միավորի վերաբերյալ առաջադրանքներ <p>Սևանի բնապահպանական հիմնախնդիրների, լճում ապրող ձկների գերորսի և լճի աղտոտման հետևանքների վերաբերյալ առաջադրանքներ կատարել և առաջարկել, թե ինչպես կարելի է դա կանխել: Այս առաջադրանքների համար կարելի ընտրել ստորև ներկայացված գործունեության ձևերից ցանկացածը, կամ միա քանիսը և համադրել:</p> <ul style="list-style-type: none"> • Դաշտային աշխատանք • Մրցույթներ, վիկտորինաներ, հանդեսներ • Շնորհանդեսներ՝ գրավոր, բանավոր, տեսողական • Տեսանյութերի ստեղծում • Էքսկուրսիաներ • Նկարների դիագրամների, սահիկաշարերի, ֆիլմերի ցուցադրում, • Գիտական բառապաշարի և լեզվի գործածում • Նկարների, գծապատկերների և սխեմաների ստեղծում • Հարցադրումների սահմանում • Գաղափարների և հասկացությունների սահմանում և վերհանում 	<p>մարդկանց վրա: Մտածել, թե ինչեր կարող են անել իրենք կանխելու համար նման բացասական ազդեցությունները:</p> <ul style="list-style-type: none"> • Էներգիա և նյութ <p>Բացատրել տարբեր կենդանի օրգանիզմների միջև առկա դրական և բացասական փոխհարաբերությունները: Մի տեսակը սնվում է մյուսով, իսկ նրանք էլ սնվում են մեկ այլ տեսակով: Կան նաև դրական փոխհարաբերություններ, օրինակ՝մեղուները փոշոտում են ծաղկող բույսերի մի զգալի մասը:</p> <ul style="list-style-type: none"> • Կայունություն և փոփոխություն <p>Բնության մեջ առկա բոլոր փոփոխությունները օրըստօրե խախտում են հարաբերական կայությունը շրջակա միջավայրում: Պետք է մարդու գործելակերպը համակարգել, որպեսզի հնարավոր դառնա մոլորակի վրա կայուն զարգացումը և հաջորդ սերունդներին կենսունակ մոլորակ փոխանցելը:</p>
Միջառարկայական կապեր	
<p>Մայրենի</p> <ul style="list-style-type: none"> • Կարողանա խոսքը կառուցել հստակ, հիմնավորումներ կատարելով: • Դուրս գրի բառեր՝ դասակարգելով ըստ խոսքի մասերի: • Աղյուսակով ներկայացնի դրական և բացասական փոխհարաբերությունները: • Ստեղծի հոմանիշ և հականիշ բառերի աղյուսակ: • Հավաքի տեղեկատվություն և հիմնավորված ներկայացնի ընկերներին: <p>Մաթեմատիկա</p>	

<ul style="list-style-type: none"> • Աշխատի և օգտվի աղյուսակներից: • Ամրապնդի օրինաչափությունների մասին սովորածը: • Լուծի խնդիրներ՝ խնայողության վերաբերյալ: <p>Օտար լեզու</p> <ul style="list-style-type: none"> • Կարողանա համապատասխան բառապաշարով, պարզ նախադասություններով պատմել թեմային համապատասխան փոքրիկ տեքստեր: <p>Տեխնոլոգիա</p> <ul style="list-style-type: none"> • Կարողանա պատրաստել նոր առարկաներ՝ երկրորդային, օգտագործման և թափոնների վերամշակումից: • Գործնական աշխատանքի ընթացքում անընդհատ հետևել խնայողություն կատարելուն: <p>Արվեստ</p> <ul style="list-style-type: none"> • Կարողանա նկարել բնանկարներ, դիտել նկարներ, վերլուծել՝ առանձնացնելով կենդանի բնության և անկենդան բնության օբյեկտները: • Երաժշտության դասերին երգեր սովորելիս, նույնպես կարողանա առանձնացնել կենդանի և անկենդան բնության օբյեկտները:
Ներառարկայան կապեր
<ul style="list-style-type: none"> • «Ես և բնություն» և «Ես և տիեզերքը» հիմնական գաղափարների թեմաները հաճախ ներհյուսված են և երբեմն կարող են լինել թեմաներ, երբ հաջորդականությունը պահպանելու համար պետք է ընդունված հաջորդականությունը խախտել՝ սկզբում ուսումնասիրել տիեզերքի թեման, հետո՝ բնությանը: Այդպիսի թեմա է ջրի աղտոտվածության և մաքրման թեման, որը պետք է անցնել միայն «Նյութեր, մասնիկներ»-ի վերաբերյալ թեմաներից հետո:
Կապը Հանրակրթության պետական չափորոշչի տարրական դպրոցի վերջնարդյունքների հետ
<p>Թեմային ուղղակի առնչվող՝ S7, S10, S11, S12, S13, S14 Թեմային մասամբ առնչվող՝ S1, S2, S6, S8, S9, S15, S16, S19, S23</p>

Ես և տիեզերքը		
Երկնային մարմիններ	Շարժում և փոխազդեցություն	
Պարբերական երևույթները բնության մեջ (2 ժամ)	Ձայն և լույս (4 ժամ)	Էներգիա (1 ժամ)
ԹԵՄԱ Երկնքում մի ավազահատիկ (2 ժամ)	ԹԵՄԱ Ձայն, լույս, էներգիա (5 ժամ)	
Նպատակ		
<ul style="list-style-type: none"> • Ամրապնդել Երկրի պտույտի և դրանով պայմանավորված պարբերական փոփոխությունների մասին գիտելիքը, բացատրել արևի և լուսնի խավարումները, մեկնաբանել, որ Լուսինը անդրադարձնում է արևի լույսը: • Գաղափար տալ լույսի և ձայնի արագությունների մասին՝ բերելով օրինակներ, կատարելով համեմատություններ: Բացատրել ձայնի առաջացման և տարածման երևույթը: • Ամբողջացնել գաղափարը էներգիայի մասին՝ մեկնաբանելով արեգակի էներգիայի կենսական դերը, պարզ օրինակների միջոցով ցույց տալ էներգիայի փոխակերպումը: 		
Առարկայի ընդհանրական չափորոշչային վերջնարդյունքներ		
<p>Պարբերական երևույթները բնության մեջ</p> <p>ՇՏ-ԵՊ-Վ1 Նկարագրել Արեգակնային համակարգը՝ մոլորակները, Երկիրը, Լուսինը, դիտարկել Արեգակի լույսը, ջերմությունը՝ որպես երկրի վրա կյանքի պահպանման կարևոր գործոն:</p> <p>ՇՏ-ԵՊ-Վ2 Դիտարկել գլոբուսը որպես երկրի մոդել և ցուցադրել, թե ինչպես է Երկրի պտույտն Արեգակի և իր առանցքի շուրջը պայմանավորում գիշերվա և ցերեկվա, եղանակների հերթազախությունը:</p> <p>ՇՏ-ԵՊ-Վ3 Փորձերի միջոցով ցուցադրել արևի և լուսնի խավարումները:</p> <p>Ձայն և լույս</p> <p>ՇՏ-ՇՁԼ-Վ1 Ծանոթանալ ձայնի առաջացման և տարածման երևույթի հետ, համոզվել, որ ձայնը տարբեր կերպ է տարածվում փակ և բաց տարածքում, բացահայտել, որ ձայնը կարող է անդրադառնալ՝ դիպչելով մարմիններին (արձագանք):</p> <p>ՇՏ-ՇՁԼ-Վ2 Ներկայացնել լույսի բնական և արհեստական աղբյուրներ, բացատրել որ լույսը տարածվում է ուղիղ գծով՝ ստվերների առաջացման և լույսի անդրադարձման օրինակով:</p> <p>ՇՏ-ՇՁԼ-Վ3 Ճանաչել նյութերն ըստ իրենց՝ թափանցիկ, կիսաթափանց և անթափանց լինելու հատկության:</p> <p>Էներգիա</p> <p>ՇՏ-ՇԷ-Վ1 Մեկնաբանել, որ ցերեկվա և գիշերվա, ինչպես նաև ամառվա և ձմեռվա ջերմաստիճանների տարբերությունը պայմանավորված է Արեգակից ստացած ջերմության քանակով:</p> <p>ՇՏ-ՇԷ-Վ2 Բացատրել, որ բույսերի աճը, կենդանիների և առարկաների տաքանալը պայմանավորված է Արեգակից Երկիր հասնող լույսի էներգիայով:</p> <p>ՇՏ-ՇԷ-Վ3 Փորձել և համոզվել, որ արևի տակ բոլոր առարկաները (ջուրը, օդը, հողը) տաքանում են:</p> <p>ՇՏ-ՇԷ-Վ4 Բացատրել, որ յուրաքանչյուր երևույթ ընթանում է էներգիայի փոխակերպմամբ:</p>		
Թեմայի վերջնարդյունքները		
<p>Պարբերական երևույթները բնության մեջ</p> <p>4ՇՏ-ԵՊ-Վ3 Տարբերակել և նկարագրել արևի և լուսնի խավարումները՝ կատարելով փորձեր:</p> <p>4ՇՏ-ՇՁԼ-Վ2 Մեկնաբանել և հիմնավորել որ լուսինը անդրադարձնում է արևի լույսը:</p>		

Ձայն և լույս

4ՇՏ-ՇՁԼ-Վ1-2 Ներկայացնել, որ լույսը և ձայնը ունեն արագություն, համեմատելով այդ արագությունները կայծակի և ամպրոպի օրինակով:

4ՇՏ-ՇՁԼ-Վ1 Փորձի մշտնով համոզվել, որ ձայնը տարբեր կերպ է տարածվում փակ և բաց տարածքում

4ՇՏ-ՇՁԼ-Վ1 Բացահայտել, որ ձայնը կարող է անդրադառնալ՝ դիպչելով մարմիններին (արձագանք):

4ՇՏ-ՇՁԼ-Վ2 Ներկայացնել լույսի բնական և արհեստական աղբյուրներ, բացատրել որ լույսը տարածվում է ուղիղ գծով՝ ստվերների առաջացման և լույսի անդրադարձման օրինակով

4ՇՏ-ՇՁԼ-Վ3 Ճանաչել նյութերն ըստ իրենց՝ թափանցիկ, կիսաթափանց և անթափանց լինելու հատկության:

Էներգիա

4ՇՏ-ՇԷ-Վ1 Մեկնաբանել, որ ցերեկվա և գիշերվա, ինչպես նաև ամառվա և ձմեռվա ջերմաստիճանների տարբերությունը պայմանավորված է Արեգակից ստացած ջերմության քանակով:

4ՇՏ-ՇԷ-Վ2 Բացատրել, որ բույսերի աճը, կենդանիների և առարկաների տաքանալը պայմանավորված է Արեգակից երկիր հասնող լույսի էներգիայով:

4ՇՏ-ՇԷ-Վ3 Համոզվել, որ արևի տակ բոլոր առարկաները (ջուրը, օդը, հողը) տաքանում են:

4ՇՏ-ՇԷ-Վ4 Բացատրել, որ յուրաքանչյուր երևույթ ընթանում է էներգիայի փոխակերպմամբ:

Բովանդակություն

- Արևի և լուսին խավարումներ
- Լույսի և ձայնի տարածում, անդրադարձ, արագություն
- Լույս և գույներ
- Ձայնի անդրադարձ
- Թափանցիկ և անթափանց նյութեր
- Արեգակի էներգիայի կենսական նշանակությունը
- էներգիայի փոխակերպում (պարզ տեսանելի օրինակների միջոցով)

Առաջարկվող գործունեության ձևեր

- **Դիտումներ**
Դիտումներ կատարել, թե ինչպես է փոխվում արևի դիրքը օրվա ընթացքում և թե դրա հետևանքով ուրիշ ինչ փոփոխություններ են տեսանելի: Դիտարկումներ անել սենյակային բույսերի հետ՝ ինչպիսի փոփոխություններ են նկատում բույսերի մոտ՝ կախված լուսի դիրքից (օրինակ՝ արևածաղկի օրինակը):
- **Փորձեր**
Կարելի է փորձեր փորձերի միջոցով համոզվել, որ ձայնը տարբեր կերպ է տարածվում փակ և բաց տարածքում
Բացահայտել, որ ձայնը կարող է անդրադառնալ՝ դիպչելով մարմիններին (արձագանք): Փորձերը իրականացնել ստորև ներկայացված կետի համաձայն, հետրևելով քայլաշարին:
- **Խնդրի առաջադրում, լուծումների որոնում, դիտարկման կամ փորձի միջոցով արդյունքների գնահատում և վերլուծություն, եզրահանգումների վերհանում ու քննարկում:**
- **Հետազոտական առաջադրանքներ**

Խաչվող գաղափարներ

- **Օրինաչափություններ**
Բոլոր օրինաչափությունները ենթարկվում են որոշակի օրենքների, այդպիսի օրինաչափություններ են արևի և լուսնի խավարումները, դրանք որոշակի պարբերականությամբ կրկնվում են: Լույսը և ձայնը տարածվում են, դրանք ունեն արագություն, կարող են անդրադառնալ, լույսը կարող է անցնել թափանցիկ նյութերի միջով:
- **Պատճառ և հետևանք**
Ինչու՞ են արևի տակ իրերն ու առարկաները տաքանում, գիշերվա և ցերեկվա ջերմաստիճանները տարբեր, ինչու՞ մարմիններն ունեն ստվեր, ձայնը բաց և փակ տարաքում տարբեր կերպ է տարածվում: Այս բոլոր հարցերի պատասխանները քննել՝ պատճառներն ու ազդեցությունները,

<p>Կատարել փոքրիկ հետազոտական աշխատանք, թե ինչպես են փոխվում ծառերի, շենքերի, կամ այլ իրերի ստվերները օրվա ընթացքում, կախված լույսի աղբյուրի շարժումից և դիրքից: Բերել արևի ժամացույցի օրինակը:</p> <p>Տարբերակել լույսի բնական և արհեստական աղբյուրները, հասկանալ, որ լուսինը անդրադարձնում է</p> <ul style="list-style-type: none"> • Խմբային, համագործակցային առաջադրանքներ Վերևում ներկայացված աշխատանքները կարելի է կազմակերպել համագործակցային առաջադրանքի տեսքով: • Մոդելավորում Արեգակի, Լուսնի և Երկրի մոդելների օգնությամբ ցուցադրել և դիտարկել լուսնի և արևի խավարման երևույթները: • Փաստական նյութերի հետաքրքիր և խթանող ներկայացում Բոլորը նկատել են, որ ամպրոպի ժամանակ կայծակի լույսը տեսնելուց որոշ ժամանակ հետո նոր լսվում է ամպրոպ ձայնը: Պարզել՝ ինչու և ներկայացնել՝ խնդրի պայմանական տվյալների համաձայն հաշվարկի միջոցով որոշելով ձայնի և լույսի արագությունների տարբերությունը: • Դաշտային աշխատանք Դուրս գալ և համեմատել իրերի, առարկաների ջերմաստիճանը արևի տակ, ստվերում, փակ տարածքում, երեկոյան, կամ վաղ առավոտյան, երբ դեռ արևը դուրս չի եկել: Գրանցել տվյալները աղյուսակում և մեկնավանել, անել հետևություններ: • Աշխատանքային թերթիկներ՝ տարբեր տիպի առաջադրանքներով Աղյուսակներ դիտումների և գրանցումների համար, բաց թողնված բառերը լրացնելու, նկարներ, որոնցում լույսի աղբյուրի համեմատ ստվերների ուղղությունը ցույց պետք է տրվեն: • Թեմատիկ միավորի վերաբերյալ առաջադրանքներ Բացատրել որ բոլոր երևույթներն ընթանում են էներգիայի փոխանցմամբ և փոխակերպմամբ: • Ուսուցողական ֆիլմերի դիտումներ, քննարկում • Նկարների դիագրամների, սահիկաշարերի, ֆիլմերի ցուցադրում • Գիտական բառապաշարի և լեզվի գործածում • Տեքստի հետ ուսումնասիրման աշխատանքներ • Նկարների, գծապատկերների և սխեմաների ստեղծում • Հարցադրումների սահմանում • Գաղափարների և հասկացությունների սահմանում և վերհանում 	<p>հետևանքները մեկնաբանելով, տարբին համապատասխան մեկնաբանություններով:</p> <ul style="list-style-type: none"> • Համակարգեր և մոդելներ Բացատրել թե ինչ է մոդելը, որ այն եղած համակարգի, կամ երևույթի ավելի փոքր մասշտաբի գրեթե նույնական պատկերն է, որի դիտարկմամբ կարելի է պատկերացնել երևույթը կամ համակարգը, կառուցվածքը: Փորձել պատկերացրած որևէ երևույթի մոդել ստեղծել: Օրինակ երկու տարբեր չափսորի գնդակների և լապտերի օգնությամբ ցույց տալ արևի և լուսնի խավարման երևույթը: <p>Էներգիա և նյութ Բացատրել, որ յուրաքանչյուր երևույթ ընթանում է էներգիայի փոխակերպմամբ (Արևային մարտկոցները Արեգակի էներգիան փոխակերպում են էլեկտրական էներգիայի), որ արևի տակ բոլոր առարկաները (ջուրը, օդը, հողը) տաքանում են, որ բույսերի և կենդանիների աճի համար անհրաժեշտ է արևի էներգիան:</p>
Միջառարկայական կապեր	
<p>Մայրենի</p> <ul style="list-style-type: none"> • Կարողանա կառուցել դատողական բնույթի խոսք՝ կատարելով եզրահանգումներ, հիմնավորումներ: 	

- Համացանցից գտնի, ուսումնասիրի թեմային համապատասխան նյութեր, ներկայացնի ընկերներին:
- Լրացնի առաջադրված տեքստը՝ թեմային համապատասխան բանալի բառերով:
- Լուծի կամ ինքնուրույն կազմի խաչբառեր, հանելուկներ, կազմի հնգյակներ կամ աքրոստիկոսներ՝ օգտագործելով հենակետային բառեր:
- Բառակազմական վերլուծության ենթարկել տեքստում տեղ գտած բարդ բառերը, առանձնացնել արմատները և դրանցով նոր բառեր կազմել:
- Իմանա մոլորակների անունները՝ բառապաշարը հարստացնելով նաև հայկական անվանումների իմացությամբ:

Մաթեմատիկա

- Կարողանա ճիշտ օգտագործել արագություն , հեռավորություն , ժամանակ հասկացությունները, կարողանա համեմատել , հասկանալ ձայնի և լույսի արագությունները՝ բերելով համապատասխան օրինակներ:
- Կազմի և լուծի շարժման վերաբերյալ խնդիրներ՝ գտնելով մեծությունների չափման միավորների միջև եղած առնչությունները:

Օտար լեզու

- Սովորի և իր խոսքում կարողանա օգտագործի թեմային համապատասխան բառեր:
- Կարդա և թարգմանի փոքրիկ բնագրեր:
- Թեմային կից քերականական նյութը սովորելի օգտագործի հենակետային բառեր, բառակապակցություններ:

Արվեստ

- Մասնակցի փոքրիկ բեմադրությունների, կարդա առասպելներ Արեգակի , Լուսնի, աստղերի, համաստեղությունների մասին:
- Ստեղծագործաբար կարողանա վերարտադրել , նկարել կամ ծեփել՝ պատկերելով երկնակամարը, աստղեր, մոլորակներ, կարողանա իր նկարներում արտահայտել լույսն ու ստվերը, բացատրի ստվերների առաջացման պատճառները:
- Ունկնդրի կամ կարողանա կատարել համապատասխան թեմայով երգեր:

Տեխնոլոգիա

- Տնկի սենյակային բույսեր, խնամի , կատարի դիտարկումներ, գրանցումներ, հիմնավորի , թե որ բույսը ինչքան լույս կամ ջերմություն է սիրում:
- ,Տեխնիկայի տարրեր,, թեմայի ընթացքում ծանոթանա նաև արևային մարտկոցների հետ, հասկանա, որ դրանք արեգակի էներգիան փոխակերպում են էլեկտրական էներգիայի:

Ֆիզիկոստորա

- Հասկանա ֆիզիկական ակտիվության կարևորությունը, իմանա , որ վարժությունների կատարման համար ծախսված էներգիան կարող է վերականգնվել առողջ սննդի միջոցով:

Ներառարկայական կապեր

- «Ես և տիեզերքը» և «Ես և բնությունը» հիմնական հասկացությունները նույնքան փոխկախված և ներհյուսված են, որքան «Ես» և «Ես և մարդիկ» հասկացությունները և բավականին դժվար է գծել նրանց միջև որևէ սահմանագիծ, դա ապահովում է ինտեգրվածությունը:

Կապը հանրակրթության չափորոշչի տարրական դպրոցի վերջնարդյունքների հետ

Թեմային ուղիղ առնչվող՝ S10, S11, S13, S14, S19

Թեմային մասամբ առնչվող՝ S1, S2, S7. S8, S9, S12, S27

Ես և տիեզերք		
Մարմիններ		
Նյութեր, մասնիկներ (2 ժամ)	Նյութի վիճակ և հատկություն (8 ժամ)	Չափեր չափումներ (2 ժամ)
Նյութերը մեր շուրջ (12 ժամ)		
Նպատակ		
<ul style="list-style-type: none"> Պատկերացում տայ այն մասին, որ բոլոր մարմիններն ու նյութերը կազմված են մասնիկներից, որոնք անընդհատ գտնվում են շարժման և փոխազդեցության մեջ, բերել դիֆուզիան բացատրող օրինակներ: Ամրապնդել գիտելիքը պինդ, հեղուկ, գազային նյութերի մասին՝ ջրի միջոցով ցույց տալ մի տեսակից մյուսի փոխակերպումը, բացատրել նաև հալում և պնդացում, գոլորշիացում և խտացում, երևույթները: Զարգացնել չափումներ կատարելու հմտությունները՝ պարզագույն չափիչ սարքերից օգտվելով, բացատրել մեծությունների չափման միավորների միջև եղած առնչությունները, մեկնաբանել մարմնի կշռի և ձգողականության ուժի կապը: 		
Առարկայի ընդհանրական չափորոշչային վերջնարդյունքներ		
<p>Նյութեր, մասնիկներ</p> <p>ՇՏ-ՄՆ-Վ1 Տարբերակել՝ ինչ են մարմինները, նյութերը, բացատրել, որ նյութերը կազմված են չափազանց փոքր մասնիկներից</p> <p>ՇՏ-ՄՆ-Վ2 Ներկայացնել ունեցած նախնական պատկերացումները մասնիկների շարժման և փոխազդեցության մասին;</p> <p>ՇՏ-ՄՆ-Վ3 Նկարագրել դիֆուզիան պարզագույն օրինակների վրա:</p> <p>Նյութի վիճակ և հատկություն</p> <p>ՇՏ-ՄՀ-Վ1 Բնութագրել նյութերն ըստ իրենց որակական հատկանիշների՝ կոշտ, պինդ, հեղուկ, գազային, կարծր, անհարթ, հարթ, ողորկ, տաք, սառը և այլն, դասակարգել բոլոր նյութերը՝ պինդ, հեղուկ, գազային:</p> <p>ՇՏ-ՄՀ-Վ2 Նկարագրել նյութերն ու մարմիններն ըստ իրենց փոփոխվելու հատկությունների՝ ինչի հետևանքով են կտրտվում, ճկվում, ձգվում, ծռվում, հոսում, պատռվում և այլն:</p> <p>ՇՏ-ՄՀ-Վ3 Ներկայացնել, որ ջուրը միակ նյութն է, որ բնության մեջ միաժամանակ հանդիպում է երեք վիճակներում էլ՝ հեղուկ, պինդ, գազային, դրա նշանակությունը, փորձերի միջոցով ներկայացնել մի վիճակից մյուսին անցումը, ջրի օրինակով բնութագրել նյութերի հալում, պնդացում, գոլորշիացում և խտացում երևույթները, ներկայացնել ջրի մեծ շրջապտույտի սխեման:</p> <p>Չափեր չափումներ</p> <p>ՇՏ-ՄԶ-Վ1 Բնութագրել մարմիններն ըստ քանակական հատկանիշների, համապատասխան գործիքների օգնությամբ կատարել երկարության, զանգվածի, ջերմության և ծավալի չափումներ, կատարել անցումներ չափման միավորների չափողականությունների միջև:</p> <p>ՇՏ-ՄԶ-Վ2 Թվարկել չափման միավորները և գտնել դրանց միջև եղած առնչությունները:</p> <p>ՇՏ-ՄԶ-Վ3 Բացահայտել մարմինների կշռի և ձգողականության ուժի կապը:</p>		
Թեմայի վերջնարդյունքները		
Նյութեր, մասնիկներ		

- 4ՇՏ-ՄՆ-Վ1** Բացատրել՝ ինչ են մարմինները, նյութերը, որ դրանք կազմված են չափազանց փոքր մասնիկներից:
- 4ՇՏ-ՄՆ-Վ2** Ներկայացնել ունեցած նախնական պատկերացումները մասնիկների շարժման և փոխազդեցության մասին:
- 4ՇՏ-ՄՆ-Վ3** Նկարագրել դիֆուզիան պարզագույն օրինակների վրա:
- Նյութի վիճակ և հատկություն**
- 4ՇՏ-ՄՀ-Վ1** Դասակարգել շրջապատում եղած նյութերը՝ պինդ, հեղուկ, գազային:
- 4ՇՏ-ՄՀ-Վ2-3** Փորձերի միջոցով հանգել եզրակացությունների և նկարագրել նյութերի ֆիզիկական հատկությունները: Ջրի հատկությունների օրինակով, դիտարկել նյութի մի տեսակից մյուսի փոխակերպումը:
- 4ՇՏ-ՄՀ-Վ3** Կատարել ջրի գոլորշիացման, սառեցման, հեղուկ վիճակի վերածելու պարզագույն փորձեր:
- 4ՇՏ-ՄՀ-Վ3** Ներկայացնել, որ ջուրը միակ նյութն է, որ բնության մեջ հանդիպում է երեք վիճակներում էլ՝ հեղուկ, պինդ, գազային, դրա նշանակություն:
- 4ՇՏ-ՄՀ-Վ3** Ներկայացնել բնության մեջ ջրի մեծ շրջապտույտի սխեման՝ հիմնվելով ջրի գոլորշացման և խտացման հատկության վրա:
- 4ՇՏ-ՄՀ-Վ3** Ծանոթանալ և ներկայացնել հալում և պնդացում, գոլորշիացում և խտացում, երևույթները:
- Չափեր չափումներ**
- 4ՇՏ-Մ2-Վ1** Փորձերի միջոցով համոզվել, մեկնաբանել որ տաք և սառը մարմինները իրարից տարբերվում են ջերմաստիճանով:
- 4ՇՏ-Մ2-Վ2** Թվարկել չափման միավորները և գտնել դրանց միջև եղած առնչությունները:

Բովանդակություն

- Նյութեր, մասնիկներ
- Շարժում և փոխազդեցություն
- Դիֆուզիա
- Նյութերի փոխակերպումը մի վիճակից մեկ այլ վիճակի՝ պինդ, հեղուկ, գազային:
- Ջուր, ջրի փոխակերպումը, շրջապտույտը
- Քանակական տարբեր միավորների փոխակերպումները և դրանց միջև առնչությունները

Առաջարկվող գործունեության ձևեր	Խաչվող գաղափարներ
---------------------------------------	--------------------------

<ul style="list-style-type: none"> • Դիտումներ Դասակարգել շրջապատում եղած մարմինները և նյութերը: Բացատրել, որ մարմինները կարող են բաղկացած լինել մեկ նյութից, ինչպես նաև բազմաթիվ նյութերից: Շտրջն եղած բոլոր իրերն ու առարկաները մարմիններ են, անգամ արևն ու լուսինը՝ երկնային մարմիններ, իսկ մարմինները կազմված են նյութերից: • Փորձեր 1. Շաքարի կտորը լուծել ջրում 2. Ջրի մեջ ներկ կաթեցնել 3. Օձանելիք կամ որևէ այլ հոտավետ նյութ փչել: Դիտարկել և քննել տեսածը և բացատրություններ փնտրել (նյութերի մասնիկները խառնվում են, տարրալուծվում են միմյանց մեջ): Ջրի հատկությունների վերաբերյալ փորձեր՝ 1. Համտեսել՝ անհոտ, անհամ է 2. Մեջը որևէ առարկա գցել՝ թափանցիկ է, առարկան երևում է 3. Շաքարավազ կամ աղ լցնել մեջը՝ լուծիչ է 	<ul style="list-style-type: none"> • Օրինաչափություններ Բոլոր նյութերը կազմված են չափազանց մանր մասնիկներից, դրանք գտնվում են փոխազդեցության մեջ միմյանց հետ: Դասակարգել շրջապատում եղած նյութերը՝ պինդ, հեղուկ և գազային: Ջրի շրջապտույտի ներկայացմամբ բացատրել երկրի վրա տեղի ունեցող մի շարք երևույթներ՝ օվկիանոսի մակերեսից գոլորշացումը, մթնոլորտում կոնդենսացումն ու տեղումների տեսքով երկրի մակերևույթ վերադառնալը՝ անձրևի, ձյան տեսքով, սառցադաշտերի առաջացումը և այլն: • Պատճառ և հետևանք Բնության մեջ տեղի ունենցող բոլոր երևույթներն ունեն իրենց պատճառներն ու հետևանքները: Դրանք կարող են լինել տեսանելի և անտեսանելի: Հաճախ արդյունքը կարող է
---	--

<p>4. Տաքացնել՝ ընդարձակվում է, ապա վեր է ածվում գոլորշու (գազային վիճակի)</p> <p>5. Սառելիս՝ սեղմվում, բայց սառչելիս՝ պնդանում է, վեր է ածվում սառույցի և կրկին ընդարձակվում է:</p> <p>6. Սառույցի կտորներ գցել ջուրը՝ ավելի թեթև է քան ջուրը</p> <p>Գազերի (օդի օրինակով) հատկությունների վերաբերյալ փորձեր՝</p> <ol style="list-style-type: none"> 1. Գազերը տաքանալիս ընդարձակվում են 2. Սաթելիս՝ սեղմվում 3. Օդը (գազերը) կշիռ ունեն 4. Օդը (գազերը) տեղ է գրավում 5. Օդը նպաստում է այրմանը: <ul style="list-style-type: none"> • Խմբային, համագործակցային Հետազոտական առաջադրանքներ <p>Երեխաներին կարելի է բաժանել խմբերի, բաժանել տարբեր՝ պինդ, հեղուկ և գազային նյութերի հատկությունների մասին քարտեր՝ նկարներով և փոքրիկ տեքստային նկարագրություններով: Տեսակավորել հատկությունները դասակարգելով՝ հեղուկ, գազային և պինդ նյութերի վերաբերյալ հատկությունները:</p> <ul style="list-style-type: none"> • Թեմատիկ միավորի վերաբերյալ առաջադրանքներ <p>Վերևում նկարագրված փորձերն իրականացնելուց հետո բացատրել ջրի շրջապտույտը բնության մեջ արված եզրակացությունների, դիտումների, փորձերի, ֆիլմերի և տեսանյութերի միջոցով:</p> <ul style="list-style-type: none"> • Պրոյեկտներ <p>Կարելի է պրոյեկտներ հանձնարարել նյութերի ագրեգատային վիճակների վերաբերյալ՝ հեղուկ, գազային, պինդ՝ մի վիճակից մյուսին անցման փորձերի օրինակով: Ներկայացնել հալում և պնդացում, գոլորշիացում և խտացում, երևույթները:</p> <ul style="list-style-type: none"> • Մոդելավորում <p>Ներկայացնել բնության մեջ ջրի մեծ շրջապտույտի սխեման:</p> <ul style="list-style-type: none"> • Աշխատանքային թերթիկներ՝ տարբեր տիպի առաջադրանքներով <p>Թվարկել չափման միավորները և գտնել դրանց միջև եղած առնչությունները, գրանցել համապատասխան թերթիկներում:</p> <ul style="list-style-type: none"> • Տեսանյութերի ստեղծում <p>Կարելի է փորձերը տեսագրել, հետո կրկին դիտելու և աշխատանքը ցուցադրելու համար:</p> <ul style="list-style-type: none"> • Շնորհանդեսներ՝ գրավոր, բանավոր, տեսողական • Ուսուցողական ֆիլմերի դիտումներ, քննարկում • Նկարների դիագրամների, սահիկաշարերի, ֆիլմերի ցուցադրում • Փաստական նյութերի հետաքրքիր և խթանող ներկայացում • Գիտական բառապաշարի և լեզվի գործածում, • Տեքստի հետ ուսումնասիրման աշխատանքներ 	<p>օգնել, որպեսզի դուրս բերվի կամ կռահվի պատճառները և հակառակը:</p> <ul style="list-style-type: none"> • Մասշտաբ, համամասնություն և քանակ <p>Բնության մեջ գործում են մի շարք օրենքներ, որոնց հետո կձանոթանան, սակայն կարող են ջրի գոլորշացման, խտացման փորձերի միջոցով համոզվել, որ փոխակերպումների հետևանքով չեն փոխվում քանակները, որքան ջուր գոլորշացնեն և կարողանան հավաքել ողջ գոլորշին, կրկին կստանան նույն քանակությամբ ջուր և հակառակը: Բայց սառչելիս և տաքանալիս նրանց ծավալը մեծանում է: Որոշ չափումներ անել կիրառելով չափման միավորներ և գտնեն դրանց միջև եղած առնչությունները: Դիտարկել մարմինների կշռի և ձգողականության ուժի միջև կապը:</p> <ul style="list-style-type: none"> • Էներգիա և նյութ <p>Նյութերի տաքանալու հետևանքով մասնիկների շարժման արագանում է, դրանում կարելի է համոզվել ջուրը եռացնելով և տեսնելով եռացող ջրի շարժումը, որը հետևանք է ջրի մասնիկների շարժման արագությամբ:</p> <ul style="list-style-type: none"> • Կայունություն և փոփոխություն <p>Նյութերը փոխակերպվում են մի վիճակից մյուսին, կարող են հալվել, պնդանալ, գոլորշանալ: Գրեթե բոլոր նյութերը կարող են փոխակերպվել մի վիճակից մյուսին:</p>
--	---

<ul style="list-style-type: none"> • Նկարների, գծապատկերների և սխեմաների ստեղծում • Հարցադրումների սահմանում • Գաղափարների և հասկացությունների սահմանում և վերհանում, • Խնդրի առաջադրում, լուծումների որոնում, դիտարկման կամ փորձի միջոցով արդյունքների գնահատում և վերլուծություն, եզրահանգումների վերհանում ու քննարկում: 	
---	--

Միջառարկայական կապեր

<p>Մայրենի</p> <ul style="list-style-type: none"> • Կարողանա խոսքը կառուցել հիմնավորումներով, եզրահանգումներ կատարելիս օգտագործել դատողական բնույթի նախադասություններ: • Ավարտի նախադասությունները՝ լրացնելով բացթողումները: • Կազմի հոմանիշ-հականիշների բառազույգեր: • Կազմի և լուծի խաչբառեր՝ թեմային համապատասխան: • Կարողանա երևույթները նկարագրել՝ օգտագործելով հատկանիշ ցույց տվող բառեր: <p>Մաթեմատիկա</p> <ul style="list-style-type: none"> • Կատարի մաթեմատիկական գործողություններ անվանական թվերով՝ գտնելով չափման միավորների միջև առնչությունները: • Կատարի չափուներ, գրառի աղյուսակներում , այդ տվյալներով կազմի խնդիրներ և լուծի համեմատության միջոցով: <p>Օտար լեզու</p> <ul style="list-style-type: none"> • Հարստացնի բառապաշարը թեմային համախապատասխան նախադասություններով: • Կարողանա կարդալ և թարգմանել փոքրիկ բնագրեր: <p>Տեխնոլոգիա</p> <ul style="list-style-type: none"> • Կարողանա նյութերը չափել , օգտվի չափիչ սարքերից: • Պլաստիլինով աշխատելիս կարողանա ցույց տա դիֆուզիայի երևույթը: <p>Ֆիզկուլտուրա</p> <ul style="list-style-type: none"> • Վարժությունների և շարժական խաղերի ժամանակ կարողանա բացատրել ձգողականության ուժի և մարմնի կշռի կապը: • Կարողանա հասկանա, որ վազելիս , արագ շարժվելիս մարմնի ներքին ջերմաստիճանը բարձրանում է և օրգանիզմում եղած ջուրը փոխակերպվում է գոլորշու, որը մարմից հեռանում է քրտինքի ձևով:
--

Ներառարկայական կապեր

<ul style="list-style-type: none"> • «Ես և տիեզերքը» հիմնական հասկացության բոլոր թեմաները սերտորեն առնչվում են «Ես և բնությունը» հիմնական հասկացության թեմաներին:
--

Կապը Հանրակրթության չափորոշչի տարրական դպրոցի վերջնարդյունքների հետ

<p>Թեմային ուղղակի առնչվող՝ S3, S10, S11 Թեմային մասամբ առնչվող՝S1, S2, S6, S7, S15, S16, S24</p>
--

Ուսումնասիրված և օգտագործված գրականության ցանկ

1. Connecting IB to the NGSS, The Dual Implementation of International Baccalaureate and the Next Generation Science Standards: Challenges and Opportunities, Topic Arrangements of the Next Generation Science Standards, September 2017 ©2013 Achieve, Inc. All rights reserved
2. Food and Consumer Education Sillabus, Lower Secondary, 2014
3. COMPREHENSIVE HEALTH AND PHYSICAL EDUCATION, NEW JERSEY CORE CURRICULUM CONTENT STANDARDS 2004
4. 2019-health-physical-education-grades-1to8-Ontario, ISBN 978-1-4868-3446-4 (PDF), Queen's Printer for Ontario, 2019
5. Estonia Social Curric-Human Studies 1-9 grades 2011-Rus
6. Health Education Content Standards for California, Public Schools, Kindergarten Through Grade Twelve, ©2009 by the California Department of Education All rights reserved ISBN 978-0-8011-1695-7
7. Curriculum Planning and Development Division Ministry of Education, Primary Social Studies Syllabus 2012
8. Karin Hess, Ed.D. A Guide for Using Webb's Depth of Knowledge with Common Core State Standards, © 2013 Common Core Institute
9. Webb's Depth of Knowledge Guide, Career and Technical Education Definitions, [HTTP://WWW.MDE.K12.MS.US](http://www.mde.k12.ms.us) [HTTP://REDESIGN.RCU.MSSTATE.EDU](http://redesign.rcu.msstate.edu)
10. Crosscutting Concepts, Not for resale, redistribution, or use other than classroom use without further permission. www.fossweb.com, Printing 1© 2019 Copyright The Regents of the University of California Berkeley
11. Primary Science Syllabus, Implementation starting with, 2014 Primary Three Cohort, © 2013 Curriculum Planning and Development Division. This publication is not for sale. All rights reserved. No part of this publication may be reproduced without the prior permission of the Ministry of Education, Singapore.
12. Social-Emotional Learning for, Kindergarten–Grade 5, Scop and Sequence, ©2011 Committee for Children SecondStep.org
13. K to 12 Science Curriculum Guide August 2016 Page 4 of 203 Learning Materials and equipment technical specifications may be accessed at <http://lrmds.deped.gov.ph/>.
14. Health Education Standards of Learning for Virginia Public Schools, Board of Education, Commonwealth of Virginia, January 2015
15. Social studies scope and sequence, Primary Years Programme, Published July 2008, International Baccalaureate, Peterson House, Malthouse Avenue, Cardiff Gate, Cardiff, Wales GB CF23 8G, © International Baccalaureate Organization 2008
16. HealthSmart Alignment with National Sexuality Education Standards
17. OECS PRIMARY GRADES' LEARNING STANDARDS FOR SOCIAL STUDIES GRADES K – 6, ORGANIZATION OF EASTERN CARIBBEAN STATES, EDUCATION SECTOR STRATEGY
18. The New York City Department of Education K–8 Social Studies Scope and Sequence, 2014-2015, 52 Chambers Street New York, NY 10007
19. «Կյանքի հմտություններ» առարկայի ուսուցիչների ձեռնարկներ 1-ին, 2-րդ, 3-րդ, 4-րդ, 5-րդ 6-րդ և 7-րդ դասարանների համար, ԿԱԻ, ՅՈՒՆԻՍԵՖ, Երևան 2001, 2002, 2003:

20. Տարրական դպրոցի «Ես և շրջակա աշխարհը» առարկայի չափորոշիչ և ծրագիր, 2-4-րդ դասարանների համար, Երևան 2006, լրամշակվել և վերահրատարակվել է 2008թ.-ին:
21. «Ես և շրջակա աշխարհը» դասագիրք 2-րդ դասարանի համար, աշխատանքային տետր 2-րդ դասարանի համար, «Աստղիկ» գրատուն, Երևան 2007, 2010:
22. Ուսուցչի ձեռնարկ «Ես և շրջակա աշխարհը» առարկայի 2-4-րդ դասարանների համար, «Աստղիկ» գրատուն, Երևան 2007:
23. «Դաստիարակչական աշխատանքը դպրոցում» ձեռնարկ դաստիարակության գծով փոխտնօրենների և դասղեկների համար, ԿԳՆ ԿԱԻ, Երևան 2007:
24. «Ես և շրջակա աշխարհը» դասագիրք 3-րդ դասարանի համար, աշխատանքային տետր 3-րդ դասարանի համար, «Աստղիկ» գրատուն, Երևան 2008, 2011, 2012:
25. «Կյանքի հմտությունների ինտեգրված ձեռնարկ միջին դպրոցի ուսուցիչների համար», Երևան 2008
26. «Հայոց լեզու, Մաթեմատիկա, Ես և շրջակա աշխարհը ուսումնական առարկաների ընթացիկ գնահատման հարցարանների ժողովածու», Երևան 2008
27. «Հանդուրժողականության ուսուցում» դասղեկի ձեռնարկ տարրական դպրոցի համար, «Սեյվ դը Չիլդրեն ֆեդերեյշն ինկ.» Հայաստանյան մասնաճյուղ, Երևան 2008:
28. «Ես և շրջակա աշխարհը» դասագիրք 4-րդ դասարանի համար, աշխատանքային տետր 4-րդ դասարանի համար, «Աստղիկ» գրատուն, Երևան 2009
29. «Ես և շրջակա աշխարհը» առարկայի գնահատումը, թեմատիկ և կիսամյակային ամփոփիչ հարցաշարերի շտեմարան` 2- 4 –րդ դասարանների համար, Երևան 2010
30. «Դաստիարակչական աշխատանքը դպրոցում. մասնագիտական կողմնորոշման խնդիրներ», ԿԳՆ ԿԱԻ, Երևան 2010
31. «Դաստիարակչական աշխատանքը դպրոցում. Խաղային վարժություններ` սովորողների ժամանցի կազմակերպման համար», ԿԳՆ ԿԱԻ, Երևան 2012
32. «Առողջ սնունդ» ձեռնարկ տարրական դպրոցի ուսուցիչների համար, «Սեյվ դը չիլդրեն» հայաստանյան ներկայացուցչություն, Երևան 2012
33. «Արժանապատվություն և հանդուրժողականություն» ձեռնարկ ավագ դպրոցի ուսուցիչների համար, ՄԱՉԾ Հայաստանյան գրասենյակ, Երևան «Էյ Ջի Պրինտինգ Ջաուս» ՍՊԸ 2014